20
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2022

Luys Lnyu®

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԳՈՐԾՈՆԸ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԳՈՐԾՈՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ՝ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 5

1.1. Եվրոպական և համաշխարհային էներգետիկ շուկայում ստեղծված իրավիճակը 2022թ. փետրվարի 24-ից հետո 6

1.2. Եվրոպայի կախվածությունը ռուսական գազից և հնարավոր այլընտրանքային լուծումները 19

2. ԿԱՍՊՅԱՆ ԳԱԶԻ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՀԱԲԸ»՝ ՈՐՊԵՍ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 39

2.1. Ադրբեջանի տեղն ու դերը գազի եվրոպական շուկայում 39

2.2. Թուրքիայի տարանցիկ դերակատարությունը՝ դեպի Եվրոպա գազի մատակարարման հարցում 45

2.3. Հարավային գազային միջանցքի ընդլայնման խոչընդոտներն ու հեռանկարները 54

3. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՄ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 71

3.1. Էներգետիկ ոլորտում ԵՄ-Ադրբեջան համագործակցության հիմնական միտումները 44-օրյա պատերազմից հետո և ազդեցությունը Հայաստան-Ադրբեջան «խաղաղության» գործընթացում ԵՄ միջնորդական ջանքերի վրա 71

3.2. Ռուսաստանի դիրքորոշումը ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցության խորացման հարցում 79

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 88

ՆԱԽԱԲԱՆ

2020թ. համավարակն ուղեկցվեց համաշխարհային և եվրոպական տնտեսության զգալի ցնցումներով, ինչի արդյունքում էներգակիրների, այդ թվում՝ բնական գազի համաշխարհային գները ռեկորդային անկում գրանցեցին: Սակայն էներգակիրների նկատմամբ պահանջարկի հետճգնաժամային վերականգնումը, ինչպես նաև ՌԴ-Արևմուտք հարաբերություններում լարվածության խորացումը արդեն 2021թ. կեսերից հանգեցրին էներգակիրների միջազգային գների սրընթաց աճի: 2021թ. աշնանը Եվրոպայում գազի գները հասան ռեկորդային ցուցանիշների, որոնք Ուկրաինայի շուրջ ստեղծված լարվածության պայմաններում միայն ավելացրին աճի դինամիկան: 2022թ. փետրվարին Ուկրաինայում սկսված ակտիվ ռազմական գործողությունները կտրուկ սրեցին Եվրոպայում էներգետիկ ճգնաժամը. արդյունքում Եվրոպայում գազի գինը հատեց 1000 խ.մ-ի համար 3000 դոլարի շեմը:

Ադրբեջանը 2020թ. ավարտին, չնայած 44-օրյա պատերազմին, հաջողությամբ շահագործման հանձնեց Հարավային գազային միջանցքի (ՀԳՄ) վերջին բաղադրիչը՝ Տրանսադրիատիկ գազատարը (TAP) և մեկնարկեց գազի ուղիղ մատակարարումները դեպի եվրոպական շուկա: Այսպիսով, Ադրբեջանը դարձավ Եվրոպայի գազի շուկայի կարևոր դերակատարներից մեկը, ու թեև այնտեղ ադրբեջանական գազի մասնաբաժինը չնչին է և էական ազդեցություն չունի ընդհանուր շուկայի ձևավորման ու գնագոյացման վրա, սակայն **ադրբեջանական գազի քաղաքական գործոնը ակնհայտ է և զգալիորեն ավելացնում է Բաքվի քաղաքական կշիռը Եվրոպայում:**

Դեռևս 2019-ին «Լույս» հիմնադրամը հրապարակել էր ծավալուն վերլուծություն «Ադրբեջանական գազի արտահանման ծավալների սպասվող աճը որպես արտաքին քաղաքական ազդեցության գործիք. հնարավոր հետևանքները տարածաշրջանի և Հայաստանի համար» վերնագրով[1], որտեղ հատկապես մեծ ուշադրություն էր հատկացվել նախագծի քաղաքական բաղադրիչին՝ ավելի քիչ կարևորելով տնտեսական գործոնները: Սակայն, հաշվի առնելով համաշխարհային և եվրոպական էներգետիկ շուկաներում վերջին տարիների կտրուկ փոփոխությունները, աշխարհաքաղաքական վերադասավորումները, ինչպես նաև 44-օրյա պատերազմից

[1] Ադրբեջանական գազի արտահանման ծավալների սպասվող աճը որպես արտաքին քաղաքական ազդեցության գործիք. հնարավոր հետևանքները տարածաշրջանի և Հայաստանի համար, «Լույս» հիմնադրամ, 02.07.2019թ, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=91 (այցելվել է 05.12.2022թ.)

հետո մեր տարածաշրջանում ստեղծված նոր իրողությունները, արդիական է դարձել նախորդ վերլուծության խնդրո առարկայի վերաիմաստավորումը: Սակայն նախ ամփոփ անդրադառնանք նախորդ վերլուծության հիմնական եզրահանգումներին և առկա նոր իրողություններին.

- 2019-ին կանխատեսում էինք, որ ՀԳՄ-ի նախագիծը տնտեսապես այնքան էլ հեռանկարային չէ և հիմնականում հիմնված է քաղաքական բաղադրիչի վրա, մինչդեռ գազի ներկայիս գների պայմաններում, քաղաքականին զուգահեռ կրկին արդիական է դարձել նախագծի տնտեսական բաղադրիչը:

- Լիովին իրականացել է այն կանխատեսումը, որ **Ադրբեջանը խողովակն օգտագործելու է ԵՄ շրջանում իր ավտորիտար և ագրեսիվ քաղաքականությունը կոծկելու, հատկապես հարավարևելյան Եվրոպայի երկրներից տարատեսակ քաղաքական հարցերում ադրբեջանամետ դիրքորոշում կորզելու նպատակով՝** Իտալիա, Ալբանիա, բալկանյան այլ երկրներ և այլն:

- Եթե նախկինում քիչ հավանական էինք համարում ՀԳՄ ընդլայնումը, այդ թվում՝ Արցախի հիմնախնդրի հետ կապված անվտանգային ռիսկերի առկայության տեսանկյունից, ապա պատերազմից հետո այդ ռիսկերը նվազել են, իսկ **այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» կարող է արևելք-արևմուտք էներգետիկ ենթակառուցվածքների ընդլայնման համար ևս մեկ ուղղություն դառնալ**:

- Ի տարբերություն 3 տարի առաջ առկա իրադրության, նկատի ունենալով 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասում և Միջին Ասիայում ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրողությունները՝ **ներկայումս շատ ավելի իրատեսական է միջինասիական գազի տարանցումը դեպի Եվրոպա՝ հատկապես հաշվի առնելով Ադրբեջան-Թուրքմենստան, Ադրբեջան-Ղազախստան կոնտակտներն ու պայմանավորվածություններն այս ուղղությամբ**:

- ՌԴ դեմ պատժամիջոցների խստացման, Ռուսաստանի և ԵՄ միջև էներգակիրների ոլորտում ուղիղ համագործակցության էական խզման համատեքստում **Թուրքիան դարձել է էներգետիկ տարանցման կարևոր հանգույց՝ դրանից բխող աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ազդեցությամբ**:

- Կրկին օրակարգ է մտել Իրան-Հայաստան-Վրաստան-ԵՄ գազի մատակարարման հեռանկարը, ինչը կարող է դառնալ մեր արտաքին քաղաքականության առանցքային բաղադրիչներից մեկը:

- Ինչպես և կանխատեսում էինք, **Ադրբեջանի տնտեսության մեջ վերջին 3 տարիներին շարունակվել են նավթի դերի նվազումը և գազի դերի շեշտակի ավելացումը: 2020թ. առաջին եռամսյակի տվյալներով՝ Ադրբեջանի նավթի և գազի վաճառքից ստացված եկամուտները գրեթե հավասարվել են**[2]:

- Նախորդ վերլուծության շրջանակներում **մենք առաջարկում էինք ՀԳՄ ենթակառուցվածքների անվտանգային բաղադրիչը և դրա վրա ներազդելու՝ հայկական կողմի հնարավորությունն օգտագործել որպես Ադրբեջանի հնարավոր ագրեսիան զսպելու գործիք, հատկապես ԵՄ հետ բանակցություններում:** Դա կարելի էր անել պատերազմից առաջ, պատերազմի ժամանակ, **սակայն ՀՀ իշխանությունները ոչ միայն պարբերաբար երաշխավորում էին ադրբեջանական էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգությունը**, այլև փաստացի պատերազմից ընդամենը 2 ամիս անց ՀԳՄ-ը շահագործման հանձնվեց:

- Եթե 44-օրյա պատերազմից առաջ Ադրբեջանը էներգետիկ ռեսուրսները, այդ թվում՝ գազը, ծառայեցնում էր Արցախի խնդրի շուրջ բանակցային գործընթացում իր համար նպաստավոր պայմաններ ձևավորելու նպատակին, ապա այժմ փորձում է այն օգտագործել որպես Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում առանցքային տարածաշրջանային դերակատար՝ իր դիրքերն ամրապնդելու գործիք: Թուրքիայի և Ադրբեջանի աննախադեպ մերձեցումը, Հայաստանի տարածքով ուղիղ ցամաքային կապի հեռանկարը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայում պրոթուրքական գործոնի ակտիվացումը թուրք-ադրբեջանական տանդեմին հնարավորություն են տալիս դառնալ Եվրոպայի համար առանցքային էներգետիկ դերակատար՝ մի կողմից՝ հարուստ ռեսուրսներով, մյուս կողմից՝ տարանցիկ հզորություններով:

- Ներկայումս **գազի և նավթի բարձր գները Ադրբեջանին հնարավորություն են տալու առավել մեծացնել ռազմական ծախսերը՝ իր առջև դնելով ավելի հավակնոտ և ագրեսիվ ռազմաքաղաքական նպատակներ**, այդ թվում՝ ուղղված տարածաշրջանի մյուս երկրների դեմ (Իրան, Վրաստան, Ռուսաստան):

- Հակառակ կանխատեսումների՝ **ՀԳՄ կառուցումը արժեցավ 33 մլրդ դոլար՝ 45 միլիարդի փոխարեն:** Այս հանգամանքը, միաժամանակ Եվրոպայում գազի ներկայիս և կանխատեսվող բարձր գները, ինչպես նաև քաղաքական գործոններով

[2] Доходы от экспорта нефти и газа в Азербайджане сравнялись,12.06.2022, https://haqqin.az/news/249808 (այցելվել է 05.12.2022թ.)

պայմանավորված՝ Եվրոպայում ադրբեջանական գազի նկատմամբ մեծ պահանջարկը դյուրացնելու են ՀԳՄ-ի վրա կատարված ներդրումների հետգնումը, ինչպես նաև նպաստավոր պայմաններ են ձևավորելու նախագծի ընդլայնման համար:

Հաշվի առնելով վերոհիշյալ իրողությունները, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից թեմայի արդիականությունը՝ փորձել ենք մանրամասնորեն վերլուծել Եվրոպայում ստեղծված էներգետիկ ճգնաժամը և այդ համատեքստում ադրբեջանական էներգակիրների ազդեցությունը: Վերլուծության առաջին հատվածում անդրադարձ ենք կատարել 2022թ. փետրվարի 24-ից հետո եվրոպական և համաշխարհային էներգետիկ շուկայում ստեղծված իրավիճակին՝ փորձելով գնահատել Եվրոպայի կախվածությունը ռուսական գազից և վեր հանել հնարավոր այլընտրանքային լուծումները:

Աշխատանքի երկրորդ հատվածում փորձել ենք հասկանալ, թե ինչպիսի դեր կարող է խաղալ կասպյան գազի գործոնը՝ Եվրոպայում էներգետիկ ճգնաժամի հաղթահարման տեսանկյունից: Այս համատեքստում նախ փորձել ենք հասկանալ Ադրբեջանի և Թուրքիայի դերը գազի եվրոպական շուկայում, այնուհետև գնահատել ենք ՀԳՄ ընդլայնման խոչընդոտներն ու հեռանկարները, ինչպես նաև Մերձկասպյան մյուս երկրներից դեպի Եվրոպա գազի մատակարարման հեռանկարները:

Վերլուծության 3-րդ գլխում ուսումնասիրել ենք էներգետիկ ոլորտում ԵՄ-Ադրբեջան համագործակցության քաղաքական ասպեկտները: Նախ փորձել ենք հասկանալ 44-օրյա պատերազմից հետո գազի արտահանման ոլորտում Բաքու-Բրյուսել համագործակցության հիմնական միտումները: Այնուհետև գնահատել ենք Հայաստան-Ադրբեջան «խաղաղության» գործընթացում ԵՄ միջնորդական ջանքերի վրա գազի գործոնի ազդեցությունը, ինչպես նաև Մոսկվայի դիրքորոշումը՝ ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցության խորացման հարցում:

1. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ՝ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2022թ. փետրվարին ռուս-ուկրաինական ակտիվ ռազմական գործողությունների մեկնարկից կարճ ժամանակ անց Արևմուտքը ՌԴ նկատմամբ զանգվածային պատժամիջոցներ կիրառեց: Դեռևս նախքան հակամարտության ակտիվ փուլը Գերմանիան հրաժարվեց «Հյուսիսային հոսք - 2»-ի շահագործումից, ռազմական գործողությունների մեկնարկից ի վեր կասկածի տակ հայտնվեց Ուկրաինայի տարածքով անցնող գազատարերի անվտանգությունը, իսկ ՌԴ դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները[3], դրան ի պատասխան Մոսկվայի հակընդդեմ որոշումները Եվրոպայում էներգետիկ ճգնաժամ առաջացրին: Դրանց շարքում հատկապես կարևոր էր էներգակիրների համար ռուբլով վճարելու՝ Մոսկվայի պահանջը, ինչը մի կողմից՝ նպաստեց ռուսական արժույթի վերարժևորմանը, մյուս կողմից՝ եվրոպական երկրներին կանգնեցրեց բարդ երկընտրանքի առջև՝ հրաժարվել ռուսական էներգակիրներից կամ մասնակիորեն չեղարկել պատժամիջոցները:

Թեև ռազմական էսկալացիայի առաջին ամիսներին դժվար էր թերագնահատել ԵՄ էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից և ավելի հավանական էր թվում, որ տնտեսական առաջնահերթություններից ելնելով՝ Բրյուսելը պատժամիջոցների հարցում որոշակի զիջումների կգնա, սակայն իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ Եվրոպան առաջնահերթությունը տվեց քաղաքական շահերին: Այսպիսով, թեև ԵՄ-ն չգնաց ռուսական էներգակիրներից կտրուկ հրաժարվելու ճանապարհով, սակայն սկսեց աստիճանաբար կրճատել էներգետիկ կախվածությունը Մոսկվայից՝ անտեսելով դրանից բխող էական տնտեսական և էներգետիկ անվտանգության ռիսկերը:

[3] Պատժամիջոցներն այնքան ընդգրկուն են, որ Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր, Հնդկաստանի ԿԲ նախկին նախագահ Ռագհուրամ Ռաջանը դրանք նկարագրել է որպես «զանգվածային ոչնչացման տնտեսական զենք» և կոչ արել մտածել ապագայում դրանց կանոնակարգման ուղղությամբ, “Economic Weapons of Mass Destruction”, RAGHURAM G. RAJAN, March 17, 2022 https://www.project-syndicate.org/commentary/economic-wmds-and-the-risk-of-deglobalization-by-raghuram-rajan-2022-03 (այցելվել է 05.12.2022թ.)

1.1. Եվրոպական և համաշխարհային էներգետիկ շուկայում ստեղծված իրավիճակը 2022թ. փետրվարի 24-ից հետո

Ինչպես արդեն նշվեց, համաշխարհային էներգետիկ շուկայում հետհամավարակային վերականգնումը մեծ թափ հավաքեց դեռևս 2021-ին. էներգակիրների համաշխարհային պահանջարկը 2021թ. արդյունքում վերադարձավ նախահամավարակային ցուցանիշներին: 2021թ. նավթի միջին գինը ավելացավ շուրջ 70%-ով՝ կազմելով $70.91/բարել, ինչը 2015-ից ի վեր 2-րդ ամենաբարձր ցուցանիշն է, իսկ ԱՄՆ-ի Հենրի հաբի գազի գները գրեթե կրկնապատկվեցին՝ կազմելով $3,8/մլնԲտմ (միլիոն բրիտանական տերմալ միավոր), ինչը 2014-ից ի վեր ամենաբարձր գինն է: Գազի համաշխարհային պահանջարկը 2021-ին նախորդ տարվա համեմատ ավելացավ 5,3%-ով՝ գերազանցելով նախահամավարակային մակարդակը[4]: **Միայն 2021թ. ընթացքում նախորդող տարվա համեմատ գազի մեծածախ գները Եվրոպայում արդեն իսկ ավելացել էին ավելի քան 400%-ով**[5]: 2021-ին նաև շեշտակի աճեցին ածխի համաշխարհային գները՝ Եվրոպայում կազմելով միջինը $121/տոննա, Ասիայում՝ միջինը $145/տոննա, ինչը 2008-ից ի վեր ամենաբարձր գինն է[6]:

[4] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, 2022 https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[5] "Natural Gas Crisis: Turkey's Wake-up Call", Azem Yildirim, Analyst at EDAM, February 2022 https://edam.org.tr/wp-content/uploads/2022/02/220210-NaturalGasCrisis.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[6] "Energy and mineral prices increased in 2021 and continue to do so in 2022","BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, 2022, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)



Վերոհիշյալ ցուցանիշները վկայում են այն մասին, որ եվրոպական և համաշխարհային էներգետիկ շուկայում զգալի տեղաշարժեր սկսվել էին դեռևս նախքան ռուս-ուկրաինական հակամարտության ակտիվ փուլի մեկնարկը. այսինքն՝ Ուկրաինայի հակամարտությունը միջազգային էներգետիկ շուկայի վրա էական, բայց ոչ միակ ազդեցիկ գործոնն է: Այնուամենայնիվ, 2022թ. փետրվարին Ուկրաինայում ռուսական ռազմական օպերացիայի մեկնարկից ի վեր էներգակիրների եվրոպական շուկան ավելի կտրուկ վերադասավորումների ենթարկվեց: **2022թ. մարտի 7-ին Եվրոպայում՝ Նիդեռլանդրների գազի հաբում (TTF) 1000 խ.մ գազի գինը հասավ ռեկորդային $3800-ի, ինչը համարժեք է նավթի $600/բարել արժեքին և մոտ 70 անգամ գերազանցում է ներռուսաստանյան շուկայում գազի միջին գնին**[7]:

[7] “Российский газовый экспорт в Европу: в глазу бури”, Виталий Ермаков, 23.03.2022, https://ru.valdaiclub.com/a/highlights/rossiyskiy-gazovyy-eksport-v-evropu-v-glazu-buri/ (այցելվել է 05.12.2022թ.)



Համաշխարհային և մասնավորապես՝ եվրոպական էներգետիկ շուկայում ստեղծված իրավիճակը ավելի լավ պատկերացնելու համար նախ փորձենք հասկանալ դրա առանձնահատկությունները և վերջին տարիների հիմնական միտումները, այնուհետև այն դիտարկել ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում: Այսպես, գաղտնիք չէ, որ Ուկրաինայում ռազմական գործողություններն ընթանում են երկու առանցքային գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ՌԴ-ի աշխարհաքաղաքական շահերի բախման համատեքստում և այդ հակամարտությունը վաղուց դիտարկվում է ոչ թե լոկալ՝ ռուս-ուկրաինական մակարդակում, այլ ավելի լայն՝ ԱՄՆ (ՆԱՏՕ)-ՌԴ հարթության վրա: Համաշխարհային և եվրոպական էներգետիկ համակարգի վրա այս հակամարտության ազդեցությունը գնահատելիս անհնարին է անտեսել ԱՄՆ և ՌԴ միջև վերջին տարիներին աճող մրցակցությունը էներգետիկ ոլորտում:

Այսպես, **2021թ. տվյալներով ԱՄՆ-ը և Ռուսաստանը հանդիսանում են բնական գազի արդյունահանման տեսանկյունից երկու համաշխարհային առաջատարները՝ 2021-ին այս երկրները միասին կիսել են համաշխարհային արդյունահանման 40,5%-ը. ԱՄՆ-ը՝ 934,2 մլրդ խ.մ կամ 23,1%, ՌԴ-ն՝ 701,7 մլրդ**

խ.մ կամ 17,4%[8]: Ընդ որում, այս ոլորտում երկու ավանդական աշխարհաքաղաքական հակառակորդների մրցակցությունը հատկապես խորացել է վերջին տասնամյակի ընթացքում, քանի որ, եթե ՌԴ առանցքային դերը բնական գազի համաշխարհային շուկայում արդեն տասնամյակներ շարունակ ոչ ոք կասկածի տակ չի դնում, ապա ԱՄՆ պարագայում այն հատկապես մեծացել է վերջին տարիներին:

Այսպես, **վերջին տասը տարիներին՝ 2011-2021թթ. ԱՄՆ-ում բնական գազի արդյունահանումը ավելացել է տարեկան միջինը 4,2%-ով, այսինքն՝ 2021-ին 2011-ի համեմատ աճը կազմել է ավելի քան 50%**: Նույն ժամանակահատվածում Ռուսաստանում բնական գազի արդյունահանումը ավելացել է տարեկան 1.3%-ով, իսկ 2011թ. համեմատ 2021-ին աճը կազմել է շուրջ 14%[9]: Իհարկե, այս ցուցանիշները ներկայացնելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը միաժամանակ հանդիսանում է բնական գազի առաջատար սպառողներից մեկը, հետևաբար արտահանման շուկայում վերջինս դեռ զիջում է Ռուսաստանի ցուցանիշներին: Մասնավորապես, 2021-ին ԱՄՆ-ում բնական գազի սպառումը կազմել է 826.7 մլրդ խ.մ կամ համաշխարհային սպառման 20,5%-ը, մինչդեռ նույն ժամանակ ՌԴ-ն սպառել է 474.6 մլրդ խ.մ գազ կամ համաշխարհային սպառման 11,8%-ը[10]:

Բացի այդ, այս ոլորտում ԱՄՆ-ՌԴ մրցակցությունը գնահատելիս պետք է նաև հաշվի առնել, որ ըստ Բրիթիշ Փեթրոլիումի (ԲՓ)՝ 2020թ. դրությամբ Ռուսաստանը տիրապետում է բնական գազի համաշխարհային հաստատված պաշարների շուրջ 20%-ին՝ 37,4 տրլն խ.մ, մինչդեռ ԱՄՆ հաստատված պաշարները կազմում են համաշխարհային պաշարների 6,7%-ը՝ 12,6 տրլն խ.մ[11]: Սա նշանակում է, **որ գազի**

---

[8] «Natural gas: Production in billion cubic metres", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[9] "Natural gas: Production in billion cubic metres, Growth rate per annum 2011-2021", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[10] "Natural gas: Consumption in billion cubic metres", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[11] "Natural gas Total proved reserves, Trillion cubic metres", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

արդյունահանման 2021թ. տեմպի պահպանման պարագայում ԱՄՆ պաշարները կսպառվեն 13 տարուց, իսկ ՌԴ պաշարները՝ 53 տարի անց: Այսինքն՝ ոլորտում ԱՄՆ-ՌԴ մրցակցությունը կարճաժամկետ և միջնաժամկետ բնույթ է կրում, ուստի ԱՄՆ-ը փորձելու է առաջիկա տարիներին առավելագույնի հասցնել այդ մրցակցության արդյունքում ստացվող քաղաքական առավելությունները:

Ընդ որում, ԱՄՆ-ը և Ռուսաստանը հանդիսանում են նաև նավթի համաշխարհային արդյունահանման առաջատարները, թեև այս ոլորտում մյուս մրցակիցներն ունեն ավելի մոտ ցուցանիշներ՝ ՕՊԵԿ-ի երկրները, Կանադան, Չինաստանը, Բրազիլիան և այլն: Ըստ ԲՓ-ի՝ **2021-ին ԱՄՆ-ը և ՌԴ-ն միասին կիսել են նավթի համաշխարհային արդյունահանման շուրջ 30%-ը. ԱՄՆ՝ 711 մլն տոննա կամ 16,8%, ՌԴ՝ 536.4 մլն տոննա կամ 12,7%:** Ինչպես գազի պարագայում, նավթի ոլորտում նույնպես ԱՄՆ-ը լուրջ դերակատար է դարձել վերջին տասնամյակի ընթացքում. 2021-ին 2011-ի համեմատ ԱՄՆ-ում նավթի արդյունահանման ծավալները կրկնապատկվել են՝ միջին տարեկան աճը 7,5%, մինչդեռ ՌԴ-ում արդյունահանման տարեկան աճը կազմել է ընդամենը 0,3%[12]: Ինչպես բնական գազի, այնպես էլ նավթի պարագայում ԱՄՆ-ը հանդիսանում է առաջատար սպառող՝ համաշխարհային սպառման շուրջ 20%-ը[13]: Միաժամանակ հարկ է նշել, որ ըստ ԲՓ-ի՝ 2020թ. դրությամբ ԱՄՆ-ը տիրապետում է նավթի համաշխարհային հաստատված պաշարների ընդամենը 4%-ին՝ 8,2 մլրդ տոննա, այսինքն՝ արդյունահանման 2021թ. տեմպի պահպանման դեպքում այդ պաշարները կսպառվեն 11 տարուց, մինչդեռ ՌԴ հաստատված պաշարները կազմում են համաշխարհային պաշարների 6,2%-ը՝ 14,8 մլրդ տոննա, իսկ արդյունահանման 2021թ. տեմպի պահպանման դեպքում այն կբավականացնի ևս 27 տարի[14]: Հարկ է նշել նաև, որ չնայած այս երկու երկրները նավթի արդյունահանման համաշխարհային առաջատարներն են, սակայն հաստատված պաշարների տեսանկյունից զգալիորեն զիջում են մի շարք այլ երկրների:

---

[12] "Oil: Production in million tonnes", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[13] "Oil: Consumption in thousands of barrels per day", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[14] "Oil: Total proved reserves", BP Statistical Review of World Energy, 2021 | 70th edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

Մտապահելով նավթի և գազի ոլորտում ՌԴ-ԱՄՆ մրցակցության վերոհիշյալ ցուցանիշները՝ փորձենք հասկանալ, թե վերջին շրջանում ինչպիսի իրավիճակ է ստեղծվել Եվրոպայի էներգետիկ շուկայում: Ըստ ԲՓ-ի տվյալների՝ **2021-ին Եվրոպան սպառել է 571.1 մլրդ խ.մ գազ՝ համաշխարհային սպառման 14.1%-ը (հարկ է նշել, որ այստեղ ներառված են ոչ միայն ԵՄ անդամ երկրները, այլև խոշոր սպառողներ Թուրքիան, Մեծ Բրիտանիան և այլն): Միայն Եվրոպական միությունը (ԵՄ) 2021-ին սպառել է 396.6 մլրդ խ.մ գազ կամ համաշխարհային սպառման 9,8%-ը:** Ընդ որում, չնայած ԵՄ-ում բնական գազից կախվածության թուլացման ջանքերին, այնուամենայնիվ, վերջին 10 տարիներին ԵՄ-ում գազի սպառումը թեկուզ չնչին, բայց ավելացել է՝ միջինը տարեկան 0,2%-ով[15]:

Միևնույն ժամանակ, Եվրոպայում բնական գազի արդյունահանումը 2021-ին կազմել է 210.4 մլրդ խ.մ կամ համաշխարհային արդյունահանման 5,2%-ը, որի առյուծի բաժինը՝ 114.3 մլրդ խ.մ արդյունահանել է Նորվեգիան. խոշոր արդյունահանողներից են ԵՄ անդամ չհանդիսացող Մեծ Բրիտանիան և Ուկրաինան: Այսինքն՝ **Եվրոպայում գազի սպառումը 2,7 անգամ գերազանցում է սեփական արտադրությունը:** Ավելի բարդ է իրավիճակը **ԵՄ-ում, որը 2021թ. դրությամբ արդյունահանել է ընդամենը 44 մլրդ խ.մ գազ, սպառել է 396.6 մլրդ խ.մ**[16] (հետևաբար, 2021թ. դրությամբ պակասուրդը կազմել է 352 .մլրդ խ.մ): ԵՄ-ին բաժին է ընկնում բնական գազի համաշխարհային արդյունահանման ընդամենը 1,1%-ը, բայց սպառման 9,8%-ը, ուստի պակասուրդը լրացվում է հսկայածավալ ներմուծման հաշվին:

Հարկ է նշել, որ Եվրոպայում գազի հիմնական արդյունահանողը Նորվեգիան է, որի հաստատված պաշարները 2020թ. դրությամբ գնահատվում են 1,4 տրլն խ.մ կամ համաշխարհային պաշարների ընդամենը 0,8%-ը[17]: Ինչպես ԱՄՆ պարագայում, այստեղ էլ արդյունահանման ներկայիս տեմպի պահպանման դեպքում՝ տարեկան շուրջ 110 մլրդ խ.մ, այդ պաշարները կսպառվեն 13 տարուց: Հատկանշական է, որ

[15] "Natural gas: Consumption in billion cubic metres, Total Europe, European Union", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[16] "Natural gas: Production in billion cubic metres, Total Europe, European Union", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[17] "Natural gas Total proved reserves, Trillion cubic metres", BP Statistical Review of World Energy, 2021 | 70th edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

չնայած ուկրաինական ճգնաժամի համատեքստում Նորվեգիայից գազի մատակարարումների ավելացման հարցում ԵՄ ակնկալիքներին, Նորվեգիայի գազի հիմնական արտահանողը հայտարարել է, որ ներկայումս մատակարարումը 20%-ով գերազանցում է նախատեսված առավելագույն շեմը, ուստի ավելի մեծ ակնկալիքներն անիմն են[18]:

Ինչ վերաբերում է ԵՄ արդյունահանողներին, ապա ամենախոշոր արդյունահանողը Նիդեռլանդներն է. 2021-ին արդյունահանումը կազմել է 18.1 մլրդ խ.մ, սակայն սեյսմիկ անվտանգության և պաշարների սպառման խնդիրներով պայմանավորված՝ Նիդեռլանդներում գազի արդյունահանումը վերջին 10 տարիներին անընդհատ կրճատվել է միջինը տարեկան 12.6%-ով (2011թ. համեմատ 2021-ին արդյունահանումը կրճատվել է 74%-ով)[19]: Դեռևս 2020թ. դրությամբ ԲՓ-ը ԵՄ գազի պաշարները գնահատել է ընդամենը շուրջ 400 մլրդ խ.մ, ինչը ներկայումս չի կարող բավարարել նույնիսկ ԵՄ մեկ տարվա պահանջարկը:

Եվրոպայում գրեթե նույնպիսի իրավիճակ է նավթի արդյունահանման և սպառման շուկայում. **2021թ. դրությամբ ԵՄ-ին բաժին է ընկնում նավթի համաշխարհային արդյունահանման ընդամենը 0,4%-ը[20], սպառման 11.1%-ը**[21]: Ինչպես գազի պարագայում, այստեղ նույնպես Եվրոպայում նավթի խոշոր արդյունահանողներն են Նորվեգիան և Մեծ Բիրտանիան, որոնք 2021-ին արդյունահանել են համապատասխանաբար 93.8 և 40.9 մլն տոննա նավթ: Ընդ որում, հաշվի առնելով, որ ԲՓ-ի գնահատմամբ 2020թ. դրությամբ Նորվեգիայում նավթի հաստատված պաշարները կազմում են ընդամենը շուրջ 1 մլրդ տոննա, իսկ

[18] Europe Can't Tap Norway for More Gas With Equinor Maxed Out, Bloomberg, By Lars Erik Taraldsen, February 9, 2022 https://www.bloomberg.com/news/articles/2022-02-09/europe-can-t-tap-norway-for-more-gas-with-equinor-maxed-out (այցելվել է 05.12.2022թ.)

[19] "Natural gas: Production in billion cubic metres, Netherlands", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[20] "Oil: Production in million tonnes, European Union", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[21] "Oil: Consumption in thousands of barrels per day, European Union", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

Մեծ Բրիտանիայում՝ 300 մլն տոննա[22], կարելի է եզրակացնել, որ արդյունահանման 2021թ. տեմպի պահպանմամբ այդ պաշարները կսպառվեն մինչև 2030 թվականը: Այսինքն՝ **ո՛չ գազի, ո՛չ էլ նավթի սեփական պահանջարկը բավարարելու հարցում ԵՄ-ն ոչ միայն կարճաժամկետ, այլև միջնաժամկետ և երկարաժամկետ հույսեր չի կարող կապել Եվրոպայի հիմնական նավթարդյունահանող երկրների հետ,** և սրանով է պայմանավորված այլընտրանքային աղբյուրների ակտիվ փնտրտուքը:

Իհարկե, Եվրոպայում էներգետիկ ճգնաժամը անմասն չէ այս ոլորտում համաշխարհային գործընթացներից և հիմնական միտումներից, որոնք էական ազդեցություն են ունենում Եվրոպայի էներգետիկ համակարգի վրա: Աշխարհի մյուս հատվածներում էներգակիրների, առաջին հերթին՝ նավթի ու գազի նկատմամբ պահանջարկի աճը առավել բարդացնում է ԵՄ կողմից բնական ռեսուրսների այլընտրանքային մատակարարների փնտրտուքը:

Դեռ 2014-ին ռուս-ուկրաինական առաջին ճգնաժամից հետո Եվրոպայում բնական գազի և նավթի հիմնական մատակարարը՝ ՌԴ-ն, պահպանելով իր այդ դերակատարությունը, սկսեց ակտիվորեն ընդլայնել էներգակիրների արտահանման աշխարհագրությունը: Մի կողմից՝ մինչև 2030-ական թվականները վերականգնվող էներգիային անցնելու և նավթից ու գազից պահանջարկը աստիճանաբար կրճատելու՝ ԵՄ քաղաքականությունը, մյուս կողմից՝ Ասիայում, հատկապես Չինաստանում այդ ռեսուրսների նկատմամբ պահանջարկի շեշտակի աճը հավանական են դարձնում դեպի ասիական շուկա ռուսական գազի և նավթի էական հատվածի վերաուղղման սցենարը, առավել ևս, որ ասիական տարածաշրջանում ածխաջրածիններից զերծ էներգետիկայի անցումը ավելի երկար ժամանակ կպահանջի: Այս համատեքստում պետք է դիտարկել դեռևս Ուկրաինայում ակտիվ ռազմական գործողությունների մեկնարկից առաջ՝ 2022թ. փետրվարի սկզբին ՌԴ և Չինաստանի միջև գազի մատակարարման խոշոր գործարքի կնքումը, որը ներկայումս առավել ընդլայնվելու հեռանկարներ ունի[23]: ՌԴ-Չինաստան ապրանքաշրջանառությունն արդեն իսկ ռեկորդային աճ է գրանցում՝ 2022թ. առաջին 10 ամիսներին ավելանալով 33%-ով՝ մոտ 154 մլրդ դոլարով: Ընդ որում, առաջանցիկ կերպով՝ շուրջ 50%-ով, ավելացել է ՌԴ-ից

[22] "Oil: Total proved reserves", BP Statistical Review of World Energy, 2021 | 70th edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[23] "Российский газовый экспорт в Европу: в глазу бури", Виталий Ермаков 23.03.2022, https://ru.valdaiclub.com/a/highlights/rossiyskiy-gazovyy-eksport-v-evropu-v-glazu-buri/ (այցելվել է 05.12.2022թ.)

Չինաստան արտահանումը՝ հիմնականում էներգակիրների հաշվին, մոտենալով 100 մլրդ դոլարի շեմին[24]:

25

Սա օրինաչափ է, եթե հաշվի առնենք, որ **վերջին 10 տարիներին Չինաստանում գազի սպառումը գրեթե եռապատկվել է՝ 2011-ին 135.2 մլրդ խ.մ-ից 2021-ին հասնելով 378.7 մլրդ խ.մ-ի, մինչդեռ ԵՄ-ում պահանջարկի աճը**

[24] "Товарооборот России и Китая достиг рекордных показателей", РИА Новости, 07.11.2022 https://ria.ru/20221107/tovarooborot-1829556821.html?utm_source=yxnews&utm_medium=mobile (այցելվել է 05.12.2022թ.)

[25] "Стратегическое партнёрство России и Китая в условиях европейского кризиса", Тимофей Бордачёв, Василий Кашин, Никита Поташев, Егор Прохин, Вероника Смирнова, Александра Янькова, Доклад Международного дискуссионногоклуба «Валдай» Сентябрь 2022, https://ru.valdaiclub.com/files/42288/ (այցելվել է 05.12.2022թ.)

աննշան է[26]: Արդեն 2022թ. տվյալներով Չինաստանն ավելի շատ գազ է սպառում, քան ԵՄ-ը: 2010-2019թթ. Չինաստանը գազի սպառումը ավելացրել է տարեկան միջինը 13%-ով, նույնիսկ համավարակի տարում՝ 2020-ին Չինաստանում գազի սպառումն ավելացել է 9,2%-ով, իսկ 2021-ին՝ 12,8%-ով: Միաժամանակ, ասիական շուկայում բնական գազի համար սովորական իրավիճակում առաջարկվում է ավելի բարձր գին, մինչդեռ **Եվրոպայում, օրինակ 2020-ին՝ համավարակի պայմաններում, 1000 խ.մ գազի համար Գազպրոմը միջին հաշվով ստացել է $140 եկամուտ**[27]:

Չնայած Ուկրաինայում ռազմական գործողությունների մեկնարկից ի վեր Ռուսաստանում ակնկալվում է ինչպես գազի, այնպես էլ նավթի արդյունահանման անկում, սակայն ասիական շուկան Մոսկվային հնարավորություն է տալիս որոշակիորեն փոխհատուցել եվրոպական շուկայից հեռանալու արդյունքում կանխատեսվող կորուստները: Ըստ փորձագիտական գնահատականների՝ **կարճաժամկետ հեռանկարում Ռուսաստանը կարող է դեպի Եվրոպա արտահանվող էներգակիրների 1/3-ը ուղղել դեպի Ասիա:** Թեև դեպի ԵՄ ուղղվող տարեկան ավելի քան 150 մլրդ խ.մ ծավալին համարժեք գազի վերաուղղումը դեպի Ասիա կարճաժամկետ ու նույնիսկ միջնաժամկետ հեռանկարում քիչ հավանական է թվում, սակայն նույնիսկ դրա մի մասի վերաբաշխումը՝ գազի բարձր գների պահպանման պարագայում Ռուսաստանին հնարավորություն կտա զգալիորեն նվազեցնել պատժամիջոցների արդյունավետությունը: Այս միտումը արդեն շատ ակնհայտ է նաև նավթի արտահանման ոլորտում. 2021-ին ՌԴ-ն արդեն իսկ ապահովել է դեպի Չինաստան Նավթի ներմուծման ավելի քան 18%-ը, իսկ **ուկրաինական ճգնաժամի համատեքստում Հնդկաստանի հիմնական նավթ մատակարարող երկրների շարքում Ռուսաստանը իր մասնաբաժինը 1,3%-ից հասցրել է 25%-ի:**[28] 2022թ. հոկտեմբերին Ռուսաստանը դարձել է Հնդկաստանի նավթի ամենախոշոր մատակարարը՝ հետ թողնելով Իրաքին և Սաուդյան Արաբիային. այդ ժամանակահատվածում ծովային ճանապարհով ռուսական նավթի

[26] "Natural gas: Consumption in billion cubic metres", BP Statistical Review of World Energy, 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)
[27] "Трубопроводов век недолгий", Леонид Григорьев, 15.08.2022, https://ru.valdaiclub.com/a/highlights/truboprovodov-vek-nedolgiy/ (այցելվել է 05.12.2022թ.)
[28] "Russia's Demise as an Energy Superpower", Maria Shagina, the International Institute for Strategic Studies (IISS), 2nd August 2022, https://www.iiss.org/blogs/survival-blog/2022/08/russias-demise-as-an-energy-superpower (այցելվել է 05.12.2022թ.)

արտահանման ամենամեծ շուկան եղել Չինաստանը, իսկ դեպի Հնդկաստան արտահանումը առաջին անգամ 34%-ով գերազանցել է դեպի ԵՄ արտահանման ցուցանիշին[29]:

Ընդհանուր առմամբ, նաև վերոհիշյալ իրողությունների բերումով, **միայն 2022թ. առաջին 6 ամիսներին ՌԴ նավթագազային եկամուտները գերազանցել են 2020թ. ողջ տարվա ցուցանիշը, ինչպես նաև 2021թ. եկամուտների 70%-ը**[30]: Ըստ ՌԴ էկոնոմիկայի նախարարության կանխատեսումների՝ 2022-ին ՌԴ էներգակիրների վաճառքից ստացվող եկամուտները նախորդ տարվա ցուցանիշը կգերազանցեն 38%-ով՝ կազմելով 337 մլրդ դոլար, այնուհետև 2023-ին եկամուտները որոշակի կկրճատվեն, սակայն դրանք ամեն դեպքում կգերազանցեն 2021թ. ցուցանիշը[31]:

Հաշվի առնելով ԵՄ առավել մեծ կախվածությունը հատկապես բնական գազի ներմուծումներից՝ հարկ է ավելի մանրամասն ուսումնասիրել գազի համաշխարհային շուկայում տիրող իրավիճակը: Արդեն նշվեց, որ այս կարևոր ռեսուրսի արդյունահանման միանշանակ առաջատարներն են Ռուսաստանն ու ԱՄՆ-ը՝ միասին զբաղեցնելով համաշխարհային արդյունահանման ավելի քան 40%-ը: Բայց պատկերն ավելի հետաքրքիր է դառնում, երբ ուսումնասիրում ենք ոլորտում մյուս խոշոր դերակատարների աշխարհագրությունն ու աշխարհաքաղաքական կառուցվածքը:

Այսպես, **ըստ ԲՓ-ի՝ 2020թ. դրությամբ գազի հաստատված պաշարների ավելի քան 70%-ը բաժին է ընկնում Մերձավոր Արևելքի և նախկին ԽՍՀՄ երկրներին:** Խոշոր պաշարների են տիրապետում Իրանը՝ 32.1 տրլն խ.մ կամ համաշխարհային պաշարների 17 %-ը, Կատարը՝ 24.7 տրլն խ.մ կամ 13.1%-ը, Թուրքմենստանը՝ 13.6 տրլն խ.մ կամ 7 %-ը[32]: Այսինքն՝ **միայն Ռուսաստանը, Իրանը, Թուրքմենստանն ու Կատարը միասին տիրապետում են գազի համաշխարհային հաստատված պաշարների 57,3%-ին, ինչը նշանակում է, որ այս**

---

[29] "Россия стала крупнейшим поставщиком нефти в Индию", РИА Новости, 02.11.2022 https://ria.ru/20221102/neft-1828555227.html (այցելվել է 05.12.2022թ.)

[30] "Доходы бюджета от продажи нефти и газа растут, но вместе с расходами на поддержку отрасли", Тихонов Сергей, 13.07.2022, https://rg.ru/2022/07/14/neft-techet-i-meniaetsia.html (այցելվել է 05.12.2022թ.)

[31] "Доходы России от экспорта энергоносителей в 2022 году выросли на 38%", ИА Neftegaz.RU, 22 августа 2022, https://neftegaz.ru/news/finance/747770-dokhody-rossii-ot-eksporta-energonositeley-v-etom-godu-vyrosli-na-38/ (այցելվել է 05.12.2022թ.)

[32] BP Statistical Review of World Energy, 2021 | 70th edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

երկրները միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով առանցքային ազդեցություն են ունենալու գազի համաշխարհային շուկայում տեղի ունեցող գործընթացների վրա:

Մի փոքր այլ իրավիճակ է գազի արդյունահանման պարագայում: Տիրապետելով համաշխարհային պաշարների գրեթե 60%-ին՝ ընդհանուր առմամբ 2021թ. դրությամբ վերոհիշյալ 4 երկրները՝ Ռուսաստանը, Իրանը, Կատարը, Թուրքմենստանը, միասին արդյունահանել են բնական գազի համաշխարհային արդյունահանման շուրջ 30%-ը: Այսինքն՝ այս երկրների ներուժը շատ ավելի մեծ է, քան արդյունահանման ներկայիս մակարդակը: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ բնական գազի արդյունահանման ոլորտում ԱՄՆ-ՌԴ մրցակցությունը կարճաժամկետ և միջնաժամկետ բնույթ է կրում, իսկ երկարաժամկետ հեռանկարում շուկայում որոշիչ գործոն են դառնալու այլ դերակատարներ: Մեծ հաշվով հենց այդ դերակատարների միջև համագործակցությունից և պայմանավորվածություններից են կախված լինելու շուկայի հետագա զարգացման հիմնական միտումները:

Բնական գազի եվրոպական և համաշխարհային շուկայում հիմնական միտումները վերլուծելու տեսանկյունից կարևոր է նաև գազի արտահանման և ներմուծման գործընթացների ուսումնասիրությունը: Այսպես, թեև ԱՄՆ-ը բնական գազի ամենախոշոր արդյունահանողն է, սակայն նրա դերը գազի արտահանման շուկայում շատ ավելի փոքր է: Ըստ ԲՓ-ի՝ 2021-ին ԱՄՆ-ն արտահանել է ընդհանուր առմամբ 179.3 մլրդ խ.մ գազ, որից 84 .խ3 .մ -ը՝ խողովակով դեպի Կանադա և Մեքսիկա, ևս 95 մլրդ խ.մ-ը Հեղուկ բնական գազի ՀԲԳ (LNG) տեսքով: **Ամերիկյան ՀԲԳ արտահանման միայն 30 մլրդ խ.մ-ն է ուղղվել դեպի եվրոպական շուկա,** իսկ գրեթե կեսը՝ 45 .մլրդ խ.մ ուղղվել է դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան[33]:

[33] «Natural gas: Inter-regional trade, Natural gas: Trade movements 2021 as LNG, Natural gas: Trade movements 2021 by pipeline", BP Statistical Review of World Energy 2022 | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

Բնական գազի առևտրի խոշոր տեղաշարժերը 2021թ-ին
առևտրի համաշխարհային շարժը (միլիարդ խ/մ)



Հատկանշական է, որ 2021թ. դրությամբ ԱՄՆ-ը հանդիսանում է Չինաստանի երկրորդ ամենախոշար ՀԲԳ մատակարարը[34], իսկ ամերիկյան հեղուկ գազի համար տարածաշրջանի մյուս խոշոր շուկաներն են Ճապոնիան, Հարավային Կորեան և այլն: Առհասարակ, ՀԲԳ համաշխարհային շուկայում էական տեղաշարժերը նկատելի դարձան հատկապես 2021-ից. Չինաստանը դարձավ հեղուկ բնական գազի ամենախոշոր ներմուծողը, իսկ ԱՄՆ-ն ընդհուպ մոտեցավ ՀԲԳ արտահանման առաջատարներ Ավստրալիայի և Կատարի ցուցանիշներին ու ամենայն հավանականությամբ 2022-ին կդառնա ՀԲԳ-ի ամենախոշոր արտահանողը: Գազի համաշխարհային շուկայի գլխավոր միտումներից մեկն այն է, որ բոլոր խոշոր մատակարարները որպես հիմնական շուկա դիտարկում են հենց Ասիական ուղղությունը: Ինչպես ՀԲԳ ավանդական խոշոր արտահանողները՝ ԱՄՆ, Ավստրալիա, Կատար, այնպես էլ շուկայում համեմատաբար նոր դերակատարները՝ Եգիպտոս, ՌԴ և այլն, արտահանվող հեղուկ գազի զգալի հատվածը ուղղում են դեպի

[34] "A New Chapter in U.S.-China LNG Relations", Nikos Tsafos, , the Center for Strategic and International Studies, December 6, 2021 https://www.csis.org/analysis/new-chapter-us-china-lng-relations (այցելվել է 05.12.2022թ.)

Ասիայի զարգացած երկրներ՝ Ճապոնիա, Հարավային Կորեա, Թայվան և զարգացող տնտեսություններ՝ Չինաստան, Հնդկաստան, Պակիստան և այլն[35]:



Փոխարենը, Եվրոպայի էներգետիկ շուկայում անհամեմատ ավելի կարևոր է Ռուսաստանի դերակատարությունը: Ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում Եվրոպայի համար հատկապես կենսական նշանակություն ունի ռուսական գազի գործոնը, որից կախվածությունը թուլացնելու և կոմպենսացնելու հնարավորությունները այնքան էլ շատ չեն: Ուստի, վերլուծության հաջորդ հատվածում փորձենք ավելի մանրամասն ուսումնասիրել ԵՄ կախվածությունը ռուսական գազից և հասկանալ, թե որոնք են ԵՄ համար ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավոր այլընտրանքային լուծումները:

1.2. Եվրոպայի կախվածությունը ռուսական գազից և հնարավոր այլընտրանքային լուծումները

2021-ին Ռուսաստանը դեպի Եվրոպա միայն խողովակաշարերով արտահանել է 167 մլրդ խ.մ գազ (որից ԵՄ երկրներ՝ 132.3 մլրդ խ.մ-ը), իսկ ՀԲԳ

[35] "Gas Line, Q4 2021", Nikos Tsafos, , the Center for Strategic and International Studies, January 10, 2022, https://www.csis.org/analysis/gas-line-q4-2021 (այցելվել է 05.12.2022թ.)

տեսքով արտահանել է 17.4 մլրդ խ.մ գազ (որից միայն ԵՄ երկրներ՝ 14.3 մլրդ խ.մ-ը): Ընդհանուր առմամբ 2021-ին ոչ եվրոպական աղբյուրներից Եվրոպա է ներմուծվել 341 մլրդ խ.մ գազ, ևս 137,4 մլրդ խ.մ կազմել են ներմուծումները ներեվրոպական աղբյուրներից: Այսինքն՝ **2021-ին ՌԴ մասնաբաժինը դեպի Եվրոպա բնական գազի մատակարարման մեջ կազմել է 38 իսկ 5%, միայն ոչ եվրոպական աղբյուրների շրջանում՝ շուրջ 54%:** Համեմատության համար պետք է նշել, որ ԱՄՆ մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար 6 և 9 տոկոս:



[36]

Միայն խողովակներով դեպի Եվրոպա (ներառյալ՝ Թուրքիա) է ներմուծվել 369.1 մլրդ խ.մ գազ, որից 167-ը՝ ՌԴ-ից, 19.5-ը՝ Ադրբեջանից, 112.9-ը՝ Նորվեգիայից, 9.1-ը Իրանից, 34.1-ը՝ Ալժիրից, 3-1ը՝ Լիբիայից, ևս 23,5 միլիարդը եվրոպական այլ մատակարարներից: ՀԲԳ տեսքով դեպի Եվրոպա ներմուծվել է 108.2 մլրդ խ.մ գազ,

[36] "Natural gas: Inter-regional trade, Natural gas: Trade movements 2021 by pipeline", BP Statistical Review of World Energy 2022 | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

որից 30.8-ը՝ ԱՄՆ-ից, 17.4-ը՝ ՌԴ-ից, 22.5-ը՝ Կատարից, 15.-ը4 Ալժիրից, 13-ը՝ Նիգերիայից և այլն[37]:



[38]

Վերոհիշյալ ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես ընդհանուր առմամբ Եվրոպայի, այնպես էլ զուտ ԵՄ-ի կախվածությունը ռուսական էներգակիրներից հսկայական է: **Ընդհանուր առմամբ Ռուսաստանից ներմուծված գազը կազմել է ԵՄ սպառման շուրջ 40%-ը, ԵՄ նավթի ներմուծման մոտ 25%-ը և ածխի ներմուծման 20%-ը նույնպես բաժին է հասնում Ռուսաստանին:** Էներգետիկ անվտանգության տեսանկյունից այս կախվածությունը հսկայական է, եթե հաշվի առնենք, որ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության հիմքում նավթի, գազի, ածխի և ուրանի մասնաբաժինը կազմում է շուրջ 60%[39]:

---

[37] "Natural gas: Inter-regional trade, Natural gas: Trade movements 2021 as LNG, Natural gas: Trade movements 2021 by pipeline", BP Statistical Review of World Energy 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[38] "Natural gas: Inter-regional trade, Natural gas: Trade movements 2021 as LNG", BP Statistical Review of World Energy 2022 | 71st edition https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[39] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

Ռուսաստանը երկար տարիներ՝ դեռևս Սառը պատերազմի ժամանակաշրջանից, եղել է Եվրոպային գազ մատակարարող առանցքային և հուսալի դերակատարը, ունի դրա համար անհրաժեշտ մի շարք ենթակառուցվածքներ և մրցունակ ռեսուրսներ: **Հիմնականում ռուսական գազը դեպի Եվրոպա և Թուրքիա է ուղղվում խողովակաշարերի միջոցով, որոնց տարեկան ընդհանուր հզորությունը կազմում է գրեթե 300 մլրդ խ.մ.**



[40]

Դեռևս Սառը պատերազմի տարիներին, չնայած մի շարք աշխարհաքաղաքական հակասություններին և ճգնաժամերին՝ Կարիբյան ճգնաժամ, ԽՍՀՄ ինտերվենցիան Արևելյան Եվրոպայում, Աֆղանստան և այլն, ռուսական գազը

[40] "Газпромэкспорт/ проекты/ Газотранспортные коридоры" https://gazpromexport.ru/projects/transportation/ (այցելվել է 05.12.2022թ.)

շարունակել է մատակարարվել դեպի եվրոպական շուկա[41]: Բնական գազի եվրոպական շուկայում տարիներ շարունակ Ռուսաստանի առանձնահատուկ դերը պայմանավորված է եղել ոչ միայն անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությամբ, անսպառ պաշարներով և հիմնականում անխոչընդոտ մատակարարումներով, այլև բարենպաստ գնային առաջարկով. օրինակ, 2020-ին դեպի ԵՄ ռուսական գազի արտահանման միջին գինը կազմել է շուրջ $140 հազար խ.մ-ի համար[42]:

Պատմականորեն ռուսական գազի զգալի մասը դեպի Եվրոպա մատակարարվում էր Ուկրաինայի տարածքով. **1998-ին Գազպրոմը ավելի քան 140 մլրդ խ.մ գազի շուրջ 70%-ը ԵՄ-ին մատակարարել է ուկրաինական տարանցման ճանապարհներով**: Սակայն 2000-ականներից ի վեր, հատկապես Ուկրաինայում ներքաղաքական հայտնի վերադասավորումներից հետո, Ռուսաստանը սկսեց աստիճանաբար դիվերսիֆիկացնել դեպի ԵՄ իր խողովակաշարերի ցանցը: Առաջին լուրջ ճգնաժամը տեղի ունեցավ 2006-ին, այնուհետև 2009-ին Ռուսաստանը 2 շաբաթով դադարեցրեց գազի տարանցումը Ուկրաինայի տարածքով[43], իսկ 2014-ին Ուկրաինայում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո Ռուսաստանը որդեգրեց աստիճանաբար ուկրաինական տարանցումից հրաժարվելու քաղաքականություն: **Օրինակ, 2021-ին Ուկրաինայի տարածքով դեպի ԵՄ տեղափոխված գազի ծավալը չի գերազանցել 42 մլրդ խ.մ-ը:** Հիմնականում Ուկրաինայի տարածքով ռուսական գազը տեղափոխվում է դեպի Սլովակիա, այնուհետև այնտեղից դեպի Ավստրիա, Իտալիա և այլն[44]: Տարանցվող ռուսական գազի դիմաց Ուկրաինան տարեկան շուրջ մեկ միլիարդ դոլար եկամուտ է ստանում, ուստի ակտիվորեն պայաքարում էր

[41] "A Europe-Russia Energy Divorce Begins", Nikos Tsafos, the Center for Strategic and International Studies, March 1, 2022 https://www.csis.org/analysis/europe-russia-energy-divorce-begins (այցելվել է 05.12.2022թ.)
[42] "Трубопроводов век недолгий", «Валдай», Леонид Григорьев, 15.08.2022, https://ru.valdaiclub.com/a/highlights/truboprovodov-vek-nedolgiy/ (այցելվել է 05.12.2022թ.)
[43] "Turkey and the Regional Natural Gas Geopolitics. The "Hub Vision" in Light of the Future Prospects of the Southern Gas Corridor", Simone Tagliapietra Senior Researcher at the Fondazione Eni Enrico Mattei and Visiting Researcher at the Istanbul Policy Center, QuadernsdelaMediterrània 22, 2015 https://www.iemed.org/publication/turkey-and-the-regional-natural-gas-geopolitics-the-hub-vision-in-light-of-the-future-prospects-of-the-southern-gas-corridor/ (այցելվել է 05.12.2022թ.)
[44] "Can European Energy Cope with a Conflict in Ukraine?", Nikos Tsafos, the Center for Strategic and International Studies, January 21, 2022, https://www.csis.org/analysis/can-european-energy-cope-conflict-ukraine (այցելվել է 05.12.2022թ.)

«Հյուսիսային հոսք - 2»-ի շահագործման դեմ, որը ենթադրաբար պետք է փոխարիներ ուկրաինական տարանցմանը[45]:

Հարկ է նշել, որ ԵՄ երկրների կախվածությունը ռուսական գազից խիստ տարբեր է: Եթե արևելյան և կենտրոնական Եվրոպայի որոշ երկրների դեպքում այն հասնում է 100%-ի, ապա Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդեռլանդների դեպքում այդ ցուցանիշը շատ ավելի փոքր է, իսկ, օրինակ՝ Իսպանիայի և Պորտուգալիայի պարագայում կախվածությունը ռուսական գազից զրոյական է:



46

[45] "Depoliticizing Russian Gas in Europe", by William Courtney and Richard Kauzlarich, June 11, 2021 https://www.rand.org/blog/2021/06/depoliticizing-russian-gas-in-europe.html (այցելվել է 05.12.2022թ.)
[46] "Share of gas supply from Russia in Europe in 2021, by selected country", Statista, https://www.statista.com/statistics/1201743/russian-gas-dependence-in-europe-by-country/ (այցելվել է 05.12.2022թ.)

Ինչպես տեսնում ենք, Եվրոպայի խոշոր տնտեսություններից Գերմանիան և Լեհաստանը բնական գազի շուրջ կեսը ներմուծում են Ռուսաստանից, Իտալիան՝ շուրջ 40%-ը: Ավստրիան, Հունգարիան, Սլովենիան, Սլովակիան՝ ավելի քան 60%-ը[47]: Ավելին, Ռուսաստանը հանդիսանում է Մոլդովայի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Հյուսիսային Մակեդոնիայի՝ բնական գազի միակ մատակարարը, Լատվիայի, Սերբիայի, Ավստրիայի պարագայում կախվածությունը ռուսական գազից ավելի քան 80% է[48]:

ԵՄ բնական գազի ներմուծման մասնաբաժինները, 2021թ



Աղբյուրը՝ Եվրոպական Հանձնաժողով [49]

Գաղտնիք չէ, որ ԵՄ-ում քաղաքական և տնտեսական ամենաազդեցիկ երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան: Եթե Ֆրանսիայի պարագայում կախվածությունը ռուսական գազից այնքան էլ մտահոգիչ չէ, ապա այլ իրավիճակ է

[47] "The Kremlin's gas wars; How Europe can protect itself from Russian blackmail". Authors - Georg Zachmann Guntram B. Wolff Simone Tagliapietra Niclas Poitiers, 28 February 2022 https://www.bruegel.org/report/kremlins-gas-wars (այցելվել է 05.12.2022թ.)

[48] "Европа может сделать Молдавию великой газовой державой", Сергей Савчук, 08.04.2022, https://ria.ru/20220408/moldaviya-1782426868.html (այցելվել է 05.12.2022թ.)

[49] COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE EUROPEAN COUNCIL, THE COUNCIL, THE EUROPEAN ECONOMIC AND SOCIAL COMMITTEE AND THE COMMITTEE OF THE REGIONS REPowerEU: Joint European Action for more affordable, secure and sustainable energy, Strasbourg, 8.3.2022 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=COM%3A2022%3A108%3AFIN (այցելվել է 05.12.2022թ.)

Գերմանիայի ու Իտալիայի պարագայում: Ինչպես նշվեց, **Գերմանիան՝ Եվրոպայի ամենամեծ տնտեսությունը, բնական գազի սպառման շուրջ 50%-ը ապահովում է ռուսական գազի հաշվին: Միաժամանակ, Գերմանիայի վերջնական էներգիայի 25 տոկոսը ստացվում է գազից**: Հատկանշական է, որ նույնիսկ 2014-ի ուկրաինական իրադարձություններից հետո Գերմանիան ոչ թե կրճատեց կախվածությունը ռուսական գազից, այլ այն ավելի մեծացավ, միաժամանակ մեկնարկեց և ավարտին հասցվեց «Հյուսիսային հոսք - 2» նախագիծը[50]: Բեռլինի այս քաղաքականությունն ուներ կոնկրետ պատճառներ.

Ըստ փորձագիտական գնահատականների, եթե Գերմանիան ամբողջությամբ դադարեցնի ռուսական գազի մատակարարումները, ապա 2022-2023թթ. ջեռուցման սեզոնին ստիպված կլինի գազի սպառումը կրճատել 25%-ով, նույնիսկ եթե այս տարվա ձմռանը շահագործման հանձնվեն հեղուկ գազի ներմուծման նպատակով կառուցվող բոլոր տերմինալները: Թեև սպառման կրճատումը մեկ քառորդով իրատեսական է, սակայն դրա համար վճարվելիք տնտեսական գինը շատ մեծ է լինելու[51]: Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը, ինչպես նաև Գերմանիայի տնտեսության կարևորությունը ողջ Եվրոպայի տնտեսության համար՝ Բեռլինը փորձում է ավելի զգուշավոր քաղաքականություն վարել ռուսական գազի ներմուծման հարցում[52]:

Վերոհիշյալ իրողությունների գիտակցմամբ՝ Եվրոպական միությունը ուկրաինական իրադարձություններից հետո գնաց ոչ թե ռուսական նավթի ու գազի ներմուծման կտրուկ և լիարժեք սահմանափակման, այլ աստիճանաբար կրճատման ճանապարհով: Դեռևս 2022թ. մարտին Եվրոպական հանձնաժողովը ընդունել էր ռուսական գազից կախվածությունը վերացնելու նախագիծը, ըստ որի՝ մինչև 2030 թվականը ԵՄ-ն բնական գազի սպառումը պետք է կրճատի 155 մլրդ խ.մ-ով, ինչը համարժեք է 2021-ին ռուսական գազի ներմուծման ծավալին: Ռուսական ներմուծման

[50] "Germany Finally Starts to Turn from Russian Gas", Noah J. Gordon, Mar 31, 2022, https://ip-quarterly.com/en/germany-finally-starts-turn-russian-gas (այցելվել է 05.12.2022թ.)
[51] "How it can be done", ECONtribute, Policy Brief No. 034, Rüdiger Bachmann, David Baqaee, Christian Bayer, Moritz Kuhn, Andreas Löschel, Ben McWilliams, Benjamin Moll, Andreas Peichl, Karen Pittel, Moritz Schularick, Georg Zachmann, 05 August 2022 https://www.econtribute.de/RePEc/ajk/ajkpbs/ECONtribute_PB_034_2022_EN.pdf (այցելվել է 05.12.2022թ.)
[52] EU weighs ban on Russian oil over war crimes as pressure builds on Berlin, BY BARBARA MOENS, HANS VON DER BURCHARD, FLORIAN EDER AND STUART LAU, APRIL 4, 2022, https://www.politico.eu/article/pressure-mounts-on-berlin-to-block-russian-oil/ (այցելվել է 05.12.2022թ.)

կրճատման 2/3-ը, այսինքն՝ շուրջ 100 մլրդ խ.մ ԵՄ-ն ծրագրել էր իրականացնել արդեն 2022թ. ընթացքում[53]:

Իհարկե, իրատեսական չէ ակնկալել, որ ԵՄ-ին կհաջողվի մեկ տարվա ընթացքում այնքան կրճատել բնական գազի սպառումը, որ հնարավոր լինի փոխհատուցել ռուսական գազի մատակարարման ամբողջ ծավալը: Պատահական չէ, որ չնայած ռուսական գազի ներմուծման ծավալներն ուկրաինական ճգնաժամից ի վեր, իրոք, էականորեն կրճատվել են, սակայն խոսքը Գազպրոմի ծառայություններից առհասարակ հրաժարվելու մասին չէ: Այսպես, ըստ ՌԴ փոխվարչապետ Ալեքսանդր Նովակի կանխատեսման, 2022-ին դեպի ԵՄ երկրներ ռուսական գազի արտահանման ծավալները կկրճատվեն մոտ 50 մլրդ խ.մ-ով[54], ինչը համարժեք է 2021-ի ներմուծման 1/3-ին: Սակայն ակնհայտ է, որ արտահանման կրճատումն արդեն իսկ ավելի մեծ է, քան վերոհիշյալ 50 մլրդ խ.մ-ը:

Ըստ նախնական տվյալների՝ 2022թ. հունվար-հոկտեմբերին Գազպրոմը արդյունահանել է 344 մլրդ խ.մ գազ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 18,6%-ով (78,8 մլրդ խ.մ-ով): Դեպի ԱՊՀ անդամ չհանդիսացող երկրներԳազպրոմի արտահանումը այս տարվա 10 ամիսների ընթացքում կազմել է 91,2 մլրդ խ.մ, ինչը 42,6%-ով (67,6 մլրդ խ.մ-ով) ավելի քիչ է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Ընդ որում, Գազպրոմի զեկույցում նշվում է, որ բնական գազի համաշխարհային պահանջարկը այս տարվա առաջին 10 ամիսներին կրճատվել է ավելի քան 40 մլրդ խ.մ-ով՝ հիմնականում (95%-ը) ԵՄ և Մեծ Բրիտանիայի պահանջարկի կրճատման հետևանքով[55]:

Հատկանշական է, որ ըստ Եվրոպական Հանձնաժողովի տվյալների՝ **2022-ի առաջին 9 ամիսներին ԵՄ-ն ՌԴ-ից ներմուծել է 70,7 մլրդ խ.մ գազ՝ նախորդ տարվա 117 մլրդ-ի փոխարեն: Ընդհանուր առմամբ, ՌԴ-ից ԵՄ գազի ներմուծումը 9 ամսում կրճատվել է 40%-ով (46.3 մլրդ խ.մ-ով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:** Ընդ որում, **խողովակաշարերով ռուսական գազի ներմուծումը 9 ամսվա տվյալներով գրեթե կրկնակի կրճատվել է՝** կազմելով

[53] REPowerEU: Joint European action for more affordable, secure and sustainable energy, European Commission, 8 March 2022, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_22_1511 (այցելվել է 05.12.2022թ.)
[54] Russian gas exports to EU may fall by 50 bln cubic meters this year - Deputy PM, TASS, 15 SEP 2022, https://tass.com/economy/1508227 (այցելվել է 05.12.2022թ.)
[55] Добыча и поставки газа: итоги десяти месяцев, РЕЛИЗ, ПАО «Газпром», 1 ноября 2022, https://www.gazprom.ru/press/news/2022/november/article558568/ (այցելվել է 05.12.2022թ.)

54,2 մլրդ խ.մ՝ նախորդ տարվա 105,7 մլրդ խ.մ -ի փոխարեն, **իսկ ահա ՀԲԳ տեսքով ներմուծումներն աճել են 46%-ով՝ կազմելով 16,5 մլրդ խ.մ՝** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 11,3 մլրդ խ.մ-ի փոխարեն[56]: Այսինքն, թեև ֆորմալ առումով պատժամիջոցների պատճառով ԵՄ-ն կրճատել է խողովակաշարերով գազի ներմուծումը Ռուսաստանից, սակայն ռուսական ՀԲԳ (որը պատժամիջոցներից զերծ է, թեև ինքնարժեքն ավելի բարձր է) նկատմամբ պահանջարկի շեշտակի աճը վկայում է, որ ԵՄ-ն պատրաստ չէ լիարժեքորեն հրաժարվել ռուսական գազից:

ԵՄ-ում բնական գազի ներմուծման մեծածախ գնի համեմատություն



[57]

Ընդհանուր առմամբ 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ԵՄ-ն ներմուծել է 182 մլրդ խ.մ գազ, ինչը գերազանցում է 2021թ. նույն ժամանակահատվածի 170 մլրդ ցուցանիշը: Եթե հաշվի առնենք, որ ներմուծման աճը զուգորդվել է սպառման կրճատմամբ, կարող ենք եզրակացնել, որ ձեռք բերված գազի զգալի հատվածն

[56] The Russian gas habit Europe can't quit: LNG, POLITICO, BY CHARLIE COOPER NOVEMBER 6, 2022, https://www.politico.eu/article/russia-gas-europe-lng-putin/ (այցելվել է 05.12.2022թ.)
[57] Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf#page=35&zoom=100,69,902 (այցելվել է 05.12.2022թ.)

ուղղվել է ԵՄ բնական գազի պահեստների ծանրաբեռնմանը (արդեն աշնանը պահեստները ծանրաբեռնված էին ավելի քան 90%-ով): Նաև ուշագրավ է, որ Ռուսաստանը շարունակել է ԵՄ-ին գազ մատակարարել ուկրաինական տարանցմամբ, որը 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 13 մլրդ խ.մ: Այդ ժամանակահատվածում Հյուսիսային հոսքի միջոցով մատակարարումը կազմել է 29 մլրդ խ.մ, Թուրքական հոսքի միջոցով՝ 7 մլրդ խ.մ, իսկ Բելառուսի տարածքով տարանցմամբ՝ 4 մլրդ խ.մ [58]: Արդեն սեպտեմբերին տեղի ունեցած դիվերսիայի արդյունքում ամբողջությամբ դադարեցվել է նաև Հյուսիսային հոսքի շահագործումը:



[59]

[58]Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[59] European natural gas imports, Dataset, BRUEGEL, Georg Zachmann, Giovanni Sgaravatti, Ben McWilliams, 29 November 2022 https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 05.12.2022թ.)

Ըստ եվրոպական հանձնաժողովի ներկայացրած տվյալների՝ **միայն 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում գազի արտաեվրոպական ներմուծումների ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 150 մլրդ եվրո: Սա գրեթե համարժեք է 2021թ. ողջ տարվա ցուցանիշին, ինչպես նաև մի քանի անգամ գերազանցում է 2020թ. ցուցանիշը:**



[60]

Ռուսական գազի ներմուծման կրճատումը ԵՄ-ն հիմնականում փորձել է փոխլրացնել ՀԲԳ ներմուծման ծավալների մեծացմամբ, ինչպես նաև Նորվեգիայից խողովակային ներմուծման որոշակի ավելացմամբ: Չնայած դրան, **առնվազն 2022թ. առաջին կիսամյակի տվյալներով կախվածությունը ռուսական ներմուծումից շարունակում է մնալ էական՝ ավելի քան 30%:** Իհարկե, հաշվի առնելով Հյուսիսային հոսքի փակումը, երկրորդ կիսամյակում այդ կախվածությունը առավել կկրճատվի, բայց ձմռանը պահանջարկի ավելացման արդյունքում ամեն ինչ կարող է վերադառնալ «ի շրջանս յուր»:

[60]Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf (այցելվել է 05.12.2022թ.)



[61]

Եթե ռուսական գազի նկատմամբ ԵՄ պատժամիջոցները նպատակ էին հետապնդում կարճաժամկետ հեռանկարում էական վնաս հասցնել ՌԴ տնտեսությանը՝ էներգակիրների վաճառքից ստացվող եկամուտների կրճատման շնորհիվ, ապա ակնհայտ է, որ այս ռազմավարությունը այնքան էլ արդյունավետ չէր: Մասնավորապես, **ՌԴ 2022թ. բյուջեում ռուսական նավթի բազային գինը սահմանված է $44.2/բարել**[62], **իսկ բնական գազի արտահանման գինը՝ $250 հազար խ.մ-ի դիմաց**[63]: Իրականում 2022թ. առաջին կիսամյակում նավթի միջին միջազգային գինը նախատեսվածից կրկնակի ավելի է եղել՝ երկար ժամանակ պահպանվելով $90-100/բարել մակարդակում, իսկ հազար խ.մ գազի միջին գինը առնվազն Եվրոպայում այս ընթացքում չի նվազում $1000-ից, այսինքն՝ 4 անգամ գերազանցում է ՌԴ բյուջեով նախատեսված ցուցանիշը: Ստացվում է, որ **նույնիսկ եթե ռուսական գազի ներմուծումը ԵՄ 2022թ. 9 ամսում կրճատվել է 40%-ով, ապա հաշվի առնելով, որ գազի միջին գինը կանխատեսվածից մոտ 400%-ով ավելի է,**

[61]Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[62] Bloomberg: дорогая нефть принесет бюджету России дополнительно $65 млрд, 10 февраля 2022, https://www.vedomosti.ru/economics/news/2022/02/10/908695-bloomberg-dorogaya-neft-prineset-rossii-65-mlrd (այցելվել է 05.12.2022թ.)

[63] "Газпром" закладывает на 2022 год цену экспорта $250/тыс. куб. Метров, Москва. 21 декабря 2021. INTERFAX.RU, https://www.interfax.ru/business/811756 (այցելվել է 05.12.2022թ.)

ակնհայտ է, որ ՌԴ եկամուտները միայն ավելացել են: Նույնը կարելի է ասել նաև նավթի մասին:

Բրիտանական «Ռոյթերս» գործակալությունը, հղում կատարելով ՌԴ էկոնոմիկայի նախարարության փաստաթղթերին, նշում է, որ 2022-ին նախորդ տարվա համեմատ էներգակիրների վաճառքից ստացվող ՌԴ եկամուտները ավելանալու են 38%-ով՝ կազմելով 337 մլրդ դոլար: Ավելին, ըստ նույն կանխատեսման, թեև 2023-ին այս տարվա համեմատ էներգակիրների վաճառքից ստացվող եկամուտները կկրճատվեն, սակայն դրանք, միևնույնն է, կգերազանցեն 2021թ. ցուցանիշը[64]: Այսինքն՝ **տնտեսական բեռի տեսանկյունից ռուսական էներգակիրների նկատմամբ ԵՄ պատժամիջոցները ավելի թանկ են նստել ԵՄ-ի վրա՝ վերջինիս ծախսերը շեշտակիորեն ավելացնելով, քան ՌԴ-ի վրա, որի եկամուտները շարունակել են աճել:** Սա տեղի է ունենում ոչ միայն ԵՄ-ում էներգակիրների բարձր գների պահպանման, այլև ռուսական էներգակիրների համար այլընտրանքային շուկաների ընդլայնման պատճառով: Փոխարենը, շատ ավելի բարդ է ԵՄ երկրների համար գտնել ռուսական էներգակիրներին փոխարինող այլընտրանքային մատակարարներ: Ստորև փորձենք ներկայացնել հնարավոր այլընտրանքային լուծումները:

ԵՄ-ը որպես ռուսական գազի հիմնական այլընտրանքներից մեկը դիտարկում է նորվեգական ներմուծումների ավելացումը. վերջինս 2022թ. առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում ապահովել է ԵՄ խողովակային ներմուծման 23%-ը (3 տոկոսային կետով ավելի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից):[65] Դեռևս ուկրաինական ճգնաժամի սկզբնական փուլում Նորվեգիայի գազի արտահանման առաջատարը հայտարարել էր, որ ի վիճակի կլինի դեպի Եվրոպա արտահանման տարեկան ծավալներն ավելացնել լավագույն դեպքում 1,5 մլրդ խ.մ-ով[66]:

---

[64] EXCLUSIVE Russia sees 38% rise in energy export earnings this year - govt document, Reuters, August 17, 2022, https://www.reuters.com/business/energy/exclusive-russia-forecasts-export-gas-price-will-more-than-double-2022-2022-08-17/ (այցելվել է 05.12.2022թ.)

[65] Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[66] Европа может сделать Молдавию великой газовой державой, Сергей Савчук, РИА НОВОСТИ, 08.04.2022, https://ria.ru/20220408/moldaviya-1782426868.html (այցելվել է 05.12.2022թ.)

Ինչպես արդեն անդրադարձանք, **Նորվեգիան չունի համապատասխան պաշարներ՝ ԵՄ-ին ավելի մեծ ծավալներով և երկարաժամկետ գազ մատակարարելու համար: Նույնիսկ ներկայիս տեմպի պահպանման դեպքում վերջինիս պաշարները կսպառվեն առաջիկա տասնամյակի ընթացքում, իսկ արդյունահանման ավելացումը ավելի կարագացնի այդ գործընթացը:** Թեև 2022-ին 2021-ի համեմատ Նորվեգիայից դեպի ԵՄ և Մեծ Բրիտանիա գազի արտահանումը էականորեն ավելացել է, սակայն այն զգալիորեն զիջում է Նորվեգիայի արտահանման լավագույն տարիների առավելագույն ցուցանիշներին: Ավելին, վերջին շաբաթներին Նորվեգիայից գազի ներմուծումը նույնիսկ զիջում է անցյալ տարվա ցուցանիշներին: Ակնհայտ է, որ տարվա ամփոփիչ ցուցանիշներով նախորդ տարվա համեմատ Նորվեգիայի մատակարարած լրացուցիչ գազը կազմելու է ռուսական գազի պակասուրդի միայն չնչին մասը:

ԵՄ և ՄԹ բնական գազի ներմուծումը (ըստ աղբյուրի)



[67]

[67] Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

Որպես ռուսական գազի մեկ այլ հնարավոր այլընտրանք դիտարկվում է Հյուսիսային Աֆրիկայից՝ Ալժիրից և Լիբիայից բնական գազի ներմուծման ծավալների ավելացումը: Լիբիայի պարագայում մատակարարման ծավալները չնչին են, իսկ **Ալժիրից դեպի ԵՄ ձգվում են 3 գազատար խողովակներ՝ երկուսը դեպի Իսպանիա, երրորդը՝ Իտալիա:**



Ալժիրից դեպի Իսպանիա գազատար երկու խողովակներից առաջինը՝ տարեկան 13,5 մլրդ խ.մ հզորությամբ, անցնում է Մարոկկոյի տարածքով, երկրորդը՝ տարեկան 8 մլրդ խ.մ հզորությամբ, Իսպանիային միանում է Միջերկրական ծովի հատակով: Հատկանշական է, որ դեռևս 2021թ. դեկտեմբերին Ալժիրի և Մարոկկոյի միջև դիվանագիտական լարվածության համատեքստում առաջին գազատարը փակվել է՝ միանգամից տարեկան 13,5 մլրդ խ.մ-ով կրճատելով ԵՄ մատակարարվող

գազի ծավալը[68]: Թեև Ալժիրը որոշակիորեն ավելացրել է մյուս երկու խողովակներով դեպի Իտալիա և Իսպանիա գազի մատակարարման ծավալը, սակայն ընդհանուր առմամբ 2022 թվականի երկրորդ եռամսյակում Ալժիրից գազատարով գազի ներմուծումը դեպի ԵՄ շուկա տարեկան կտրվածքով կրճատվել է 15%-ով[69]: Այսինքն՝ **ստացվում է, որ Ալժիրն ու Լիբիան նույնպես այս պահին չեն կարող համարվել ռուսական գազի իրական այլընտրանք:**

Ալժիրից դեպի ԵՄ և ՄԹ բնական գազի ներմուծման դինամիկան



[70]

[68] "Algeria to end gas supplies to Morocco; supply Spain directly –sources", By Marwa Rashad, Hamid Ould Ahmed and Lamine Chikhi, October 25, 2021 https://www.reuters.com/world/africa/algeria-end-gas-supplies-morocco-supply-spain-directly-sources-2021-10-25/ (այցելվել է 05.12.2022թ.),
Algeria: Blinken thought to have urged for gas pipeline to Europe to reopen on state visit, By Rédaction Africanews, 30/03/2022 https://www.africanews.com/2022/03/30/algeria-blinken-thought-to-have-urged-for-gas-pipeline-to-europe-to-reopen-on-state-visit// (այցելվել է 05.12.2022թ.),

[69] Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[70] European natural gas imports, Dataset, BRUEGEL, Georg Zachmann, Giovanni Sgaravatti, Ben McWilliams, 29 November 2022 https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 05.12.2022թ.)

ԵՄ համար ռուսական գազի ներմուծման ծավալների կրճատման ամենաիրատեսական այլընտրանքը թերևս ՀԲԳ-ի ներմուծման ծավալների կտրուկ ավելացումն է: **2022թ. ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ եռամսյակի տվյալներով ԵՄ գազի ներմուծման 34%-ը ապահովվել է ՀԲԳ հաշվին, որն առաջին անգամ գերազանցել է ռուսական ներմուծումների ծավալը:**



[71]

2022թ. առաջին եռամսյակի ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀԲԳ ներմուծման ծավալն ավելացել է 72%-ով՝ կազմելով 29.8 մլրդ խ.մ, իսկ 2-րդ եռամսյակում՝ 49%-ով՝ 35.6 մլրդ խ.մ: Ընդ որում, այդ դինամիկան պահպանվել է նաև հետագայում. 2022թ. հուլիսին նախորդ տարվա համեմատ աճը կազմել է շուրջ 120%, օգոստոսին՝ 75%: Ընդհանուր առմամբ 2022թ. առաջին կիսամյակում ԵՄ ներմուծված ՀԲԳ ծավալը կազմել է 65,5 մլրդ խ.մ՝ նախորդ տարվա 41,2 մլրդ խ.մ-ի փոխարեն, իսկ **միայն 2-րդ եռամսյակում ԵՄ-ն ներմուծված 35.6 մլրդ խ.մ հեղուկ բնական գազի համար վճարել է 31,4 մլրդ եվրո**: 2022թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ԵՄ ներմուծված ՀԲԳ 45%-ը՝ 16 մլրդ խ.մ,

[71] European natural gas imports, Dataset, BRUEGEL, Georg Zachmann, Giovanni Sgaravatti, Ben McWilliams, 29 November 2022 https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 05.12.2022թ.)

ներմուծել է ԱՄՆ-ը, որի համար ԵՄ-ն վճարել է 14 մլրդ եվրո: **Ընդհանուր առմամբ, 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ԵՄ-ն ԱՄՆ-ից ներմուծել է 39 մլրդ խ.մ գազ, ինչը 117%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից, ինչպես նաև արդեն իսկ 70%-ով գերազանցում է 2021թ. ողջ տարվա ցուցանիշը:** 2022թ. առաջին կիսամյակում ՀԲԳ երկրորդ ամենամեծ մատակարարը հանդիսացել է ՌԴ-ն՝ ընդհանուր ներմուծման 18%-ը, այնուհետև հաջորդում է Կատարը՝ 13%, Նիգերիան՝ 8%, Ալժիրը՝ 6%, Եգիպտոսը՝ 4% և այլն: **Հատկանշական է, որ դեպի ԵՄ ՀԲԳ ներմուծողներից միայն ՌԴ-ի և ԱՄՆ-ի պարագայում են մատակարարումները շեշտակի ավելացել,** որոշակի (7%-ով) ավելացել են Կատարի մատակարարումները, իսկ ահա Ալժիրի և Նիգերիայի դեպքում անկում է գրանցվել: Արդեն 2022թ. սեպտեմբերից վերսկսվել են նաև ՀԲԳ մատակարարումները Նորվեգիայից:

ՀԲԳ(LNG) ներմուծումը դեպի Եվրոպա՝ ըստ մատակարարող երկրների



[72]

Վերոհիշյալ տվյալների ուսումնասիրությունն ու համադրությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ ԵՄ-ն ռուսական խողովակային գազի ներմուծման

[72] Quarterly report On European gas markets, Market Observatory for Energy, DG Energy, Volume 15 (issue 2, covering second quarter of 2022), European Commission 2022, https://ec.europa.eu/info/sites/default/files/energy_climate_change_environment/overall_targets/documents/quarterly_report_on_european_gas_markets_q2_2022_final_0.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

պակասուրդը հիմնականում լրացրել է 3 հիմնական աղբյուրներից մատակարարումների ավելացման հաշվին՝

- Նորվեգիայից,
- ՀԲԳ (հիմնականում ԱՄՆ և ՌԴ, որոշ չափով նաև Կատար),
- Մեծ Բրիտանիայի հաշվեկշռից ներմուծումներ:

Ընդ որում, 2022թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դեպի ԵՄ գազի մատակարարումների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նորվեգիայի հեղուկ բնական գազի մատակարարումները վերջին շրջանում մի քանի անգամ գերազանցում են մյուս ուղղությունները:



[73]

Հաշվի առնելով, որ ինչպես ԵՄ-ում ՀԲԳ ընդունման տերմինալների կարողությունները, այնպես էլ ԱՄՆ արտահանման հզորությունները սահմանափակ

[73] European natural gas imports, Dataset, BRUEGEL, Georg Zachmann, Giovanni Sgaravatti, Ben McWilliams, 29 November 2022 https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 05.12.2022թ.)

են[74], ԵՄ-ի համար առանձնակի կարևորություն ունեն հատկապես խողովակային փոխադրումները: Այս իմաստով դեպի ԵՄ բնական գազի մատակարարման մյուս հիմնական ուղղությունը Հարավային գազային միջանցքով (ՀԳՄ) Ադրբեջանից և Կասպից ծովից գազի մատակարարումներն են: Վերլուծության հաջորդ գլխում կփորձենք մանրամասն անդրադառնալ կասպյան գազի գործոնին՝ որպես Եվրոպայում էներգետիկ ճգնաժամի հաղթահարման ուղղություններից մեկը:

2. ԿԱՍՊՅԱՆ ԳԱԶԻ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՀԱԲԸ»՝ ՈՐՊԵՍ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայում խորացող էներգետիկ ճգնաժամը Բրյուսելին ստիպում է ակտիվացնել էներգակիրների, առաջին հերթին՝ բնական գազի այլընտրանքային աղբյուրների փնտրտուքը: Այդ համատեքստում ԵՄ-ն վերջին շրջանում առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերում կասպյան, մասնավորապես՝ ադրբեջանական գազի նկատմամբ: Վերլուծության այս հատվածում փորձել ենք գնահատել Ադրբեջանի տեղն ու դերը գազի Եվրոպական շուկայում, ուսումնասիրել Թուրքիայի դերակատարությունը՝ որպես կարևոր տարանցիկ հանգույց, ինչպես նաև դիտարկել Հարավային գազային միջանցքի ընդլայնման խոչընդոտներն ու հեռանկարները:

2.1. Ադրբեջանի տեղն ու դերը գազի եվրոպական շուկայում

Եթե նավթի եվրոպական շուկայում Ադրբեջանի տեղը աստիճանաբար ամրապնդվեց դեռևս 2000-ականների սկզբից՝ շնորհիվ այսպես կոչված «Դարի գործարքի», ապա բնական գազի եվրոպական շուկայում Ադրբեջանը համեմատաբար նոր դերակատար է: Իհարկե, դեռևս «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման 1-ին փուլի շրջանակներում Ադրբեջանը 2006-ից ի վեր «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազատարի («Հարավկովկասյան գազատար») միջոցով տարեկան մինչև 10 մլրդ խ.մ գազ է մատակարարում Թուրքիային և Վրաստանին, սակայն բուն Եվրոպական գազի շուկա Ադրբեջանը մուտք գործեց 44-օրյա պատերազմից անմիջապես հետո՝ 2020թ. դեկտեմբերին, երբ շահագործման

[74] The EU Should Buy American to Wean Off Russian Gas, BLOOMBERG, By Liam Denning, April 1, 2022, https://www.bloomberg.com/opinion/articles/2022-04-01/the-eu-should-buy-american-to-wean-off-russian-gas#xj4y7vzkg (այցելվել է 05.12.2022թ.)

հանձնվեց Հարավային գազային միջանցքի վերջին բաղադրիչը՝ Տրանսադրիատիկ գազատարը:

Ինչպես նախորդ գլխում նշվեց, վերջին տարիներին Ադրբեջանում էներգակիրների արդյունահանման գործընթացում աստիճանաբար գազի դերակատարությունը մեծանում է՝ նավթի արդյունահանման շարունակական անկման համատեքստում: **Նախորդ տարի Ադրբեջանը նավթի վաճառքից ստացել է $13,9 մլրդ, իսկ գազի վաճառքից՝ $6,5 մլրդ**[75], սակայն այս տարի տարբերությունն ավելի է կրճատվել. **2022թ. առաջին եռամսյակում Ադրբեջանը նավթի վաճառքից ստացել է $3.8 մլրդ, իսկ բնական գազի վաճառքից՝ $3,5 մլրդ**[76]:

Ըստ Բրիթիշ Փեթրոլիումի տվյալների՝ 2021-ին Ադրբեջանում ինչպես նավթի, այնպես էլ գազի արդյունահանումը կազմել է համաշխարհային արդյունահանման 0,8%-ը: Ընդ որում, Ադրբեջանում նավթի արդյունահանումը 2021-ին կազմել է շուրջ 35 մլն տոննա (2011-ին այդ ցուցանիշը 46 մլն էր), իսկ 2011-2021թթ. նավթի արդյունահանումը կրճատվել է տարեկան միջինը 2,7%-ով (անկումը 10 տարում՝ շուրջ 24%): Փոխարենը, **2021թ. 2011-ի համեմատ Ադրբեջանում գազի արդյունահանումը կրկնապատկվել է՝ կազմելով 31,8 մլրդ խ.մ. 2011-2021թթ. Ադրբեջանում գազի արդյունահանման միջին տարեկան աճը կազմել է 7 %.** 2020թ. դրությամբ **Ադրբեջանի բնական գազի հաստատված պաշարները կազմում են շուրջ 2,5 տրլն**

[75] Recent economic developments regarding Azerbaijan, Non-oil sector helped Azerbaijan's GDP grow by 5.8% in January, CAUCASUS WATCH, 01 MAR 2022, https://caucasuswatch.de/news/4945.html (այցելվել է 05.12.2022թ.)

[76] Доходы от экспорта нефти и газа в Азербайджане сравнялись, Мамед Эфендиев, 12 июня 2022, https://haqqin.az/news/249808 (այցելվել է 05.12.2022թ.)

խորանարդ մետր կամ համաշխարհային հաստատված պաշարների 1,3%-ը: 2021-ին Ադրբեջանում բնական գազի սպառումը կազմել է 12,7 մլրդ խ.մ. այս ցուցանիշը 2011-2021թթ. աճել է տարեկան միջինը 3,6%-ով[77]:



[78]

Ըստ ԲՓ-ի զեկույցի՝ 2021-ին Ադրբեջանից բնական գազի արտահանումը խողովակաշարով կազմել է 19,5 մլրդ խ.մ, որից 8,2 մլրդ՝ դեպի ԵՄ, 11,3 մլրդ՝ դեպի Վրաստան և Թուրքիա[79]: Ըստ Ադրբեջանի նախագահի հրապարակած տվյալների՝ 2021-ին Ադրբեջանը 8,5 մլրդ խ.մ գազ է մատակարարել Թուրքիային, 7 մլրդ խ.մ՝ Իտալիային, մնացած հատվածը ուղղվել է Վրաստանի, Բուլղարիայի և Հունաստանի շուկաներ: Վերջինիս հավաստմամբ ադրբեջանական գազի

[77] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)
[78] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)
[79] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

մասնաբաժինը տարբեր երկրների սպառման ցուցանիշում կազմում է 20-80%[80]: Մասնավորապես, Ադրբեջանից դեպի Վրաստան բնական գազի արտահանումը կազմել է 2,2 մլրդ խ.մ[81], ինչը այդ երկրում տարեկան սպառվող բնական գազի գերակշիռ մասն է:

Ինչպես արդեն նշվեց, դեպի ԵՄ արտահանվող ադրբեջանական գազի հիմնական մասն ուղղվում է Իտալիա. **Բաքուն հանդիսանում Իտալիայի՝ նավթի ամենախոշոր մատակարարը, իսկ բնական գազի՝ 3-րդ ամենախոշոր մատակարարը**[82]: 2021-ին Ադրբեջանը մատակարարել է Իտալիայի բնական գազի սպառման (72.5 մլրդ խ.մ) շուրջ 10%-ը: Ըստ Ալիևի՝ 2021-ին Իտալիայի և Ադրբեջանի միջև առևտրի շրջանառությունը կազմել է մոտ $10 մլրդ կամ Հարավային Կովկասի երկրների հետ Իտալիայի առևտրի 95%-ը: Ընդհանուր առմամբ դեպի ԵՄ ադրբեջանական գազի մատակարարման 85%-ը ուղղվել է դեպի հենց իտալական շուկա[83]:

Ադրբեջանական գազի միայն փոքր հատվածն է ուղղվել դեպի բալկանյան երկրներ, սակայն այդ ծավալը աճի միտում ունի: Այսպես, Բուլղարիան Ադրբեջանի հետ ունի համաձայնագիր, ըստ որի ՀԳՄ միջոցով վերջինս պետք է այդ երկիր մատակարարի տարեկան 1 մլրդ խ.մ գազ[84]: Քանի դեռ Հունաստան-Բուլղարիա փոխկապակցիչ խողովակաշարի կառուցումը նախորդ տարիներին ձգձգվում էր, Սոֆիան ի վիճակի չէր ստանալու այդ ծավալի գազ, սակայն Ուկրաինական ճգնաժամից հետո՝ Գազպրոմի և Բուլղարիայի իշխանությունների միջև լարվածության խորացման համատեքստում, գործընթացն ակտիվացավ: 2022թ.

[80] President Aliyev Says More Gas Supplies to Reach Foreign Markets in 2022, By Mushvig Mehdiyev February 6, 2022, https://caspiannews.com/news-detail/president-aliyev-says-more-gas-supplies-to-reach-foreign-markets-in-2022-2022-2-5-35/ (այցելվել է 05.12.2022թ.)
[81] Азербайджан увеличил в 2021г экспорт газа в Турцию по TANAP на 20%, Н.Аббасова, 15.02.2022, http://interfax.az/view/858524 (այցելվել է 05.12.2022թ.)
[82] Aliyev discussed energy supplies with Italian Prime Minister, Caucasus Watch, 12 MAR 2022, https://caucasuswatch.de/news/5017.html (այցելվել է 05.12.2022թ.)
[83] Foreign Minister of Italy visited Azerbaijan and discussed further energy cooperation with Europe, Caucasus Watch, 04 APR 2022, https://caucasuswatch.de/news/5150.html (այցելվել է 05.12.2022թ.)
[84] EU eyes more Azeri gas amid high bills and tight Russian supplies, By Georgi Gotev, Feb 7, 2022, https://www.euractiv.com/section/energy/news/eu-eyes-more-azeri-gas-amid-high-bills-and-tight-russian-supplies (այցելվել է 05.12.2022թ.)

հոկտեմբերին ԵՄ հովանու ներքո տեղի ունեցավ այդ խողովակաշարի բացման արարողությունը, որի նախնական հզորությունը կազմում է տարեկան 3 մլրդ խ.մ[85]:

Շահագործումից հետո 1 ամսվա ընթացքում այս խողովակով դեպի Բուլղարիա տեղափոխվել է գրեթե 100 մլն խ.մ գազ, և այս տեմպի պահպանմամբ տարեկան մատակարարումը կկազմի շուրջ 1,1 մլրդ խ.մ՝ կամ Բուլղարիայում բնական գազի տարեկան սպառման (2021-ին՝ 3.3 մլրդ խ.մ) 1/3-ը: Ընդ որում, առաջիկա տարիներին նախատեսվում է այս խողովակաշարով մատակարարումները հասցնել տարեկան 3, հետո 5 մլրդ խ.մ ծավալի[86]: Ինչ վերաբերում է Հունաստանին, ապա 2021-ին Ադրբեջանը վերջինիս մատակարարել է շուրջ 730 մլն խ.մ գազ կամ այդ երկրի տարեկան սպառման շուրջ 10%-ը[87]: Ընդ որում, 2022-ին ինչպես Բուլղարիայի, այնպես էլ Հունաստանի պարագայում մատակարարման ծավալը աճի միտում ունի:

Վերոհիշյալ տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ադրբեջանական գազը շատ ավելի կարևոր դեր է խաղում Հարավարևելյան Եվրոպայի որոշ երկրների և Թուրքիայի համար, քան ընդհանուր եվրոպական շուկայում[88]: Ընդհանուր առմամբ **2021-ին ՀԳՄ միջոցով դեպի ԵՄ մատակարարված ադրբեջանական գազը կազմել է ԵՄ սպառման (շուրջ 400 մլրդ խ.մ) ընդամենը 2%-ը:** Իհարկե, հաշվի առնելով 2022-ին ԵՄ սպառման կրճատումը, ինչպես նաև ՀԳՄ-ով մատակարարման ծավալների ավելացումը, այս տարի ադրբեջանական գազի մասնաբաժինը ԵՄ սպառման մեջ ավելի մեծ կլինի:

---

[85] Launch of the Interconnector Greece-Bulgaria, European Commission, 1 October 2022, Sofia, Energy https://ec.europa.eu/info/news/launch-interconnector-greece-bulgaria-2022-oct-01_en (այցելվել է 05.12.2022թ.)

[86] Greece-Bulgaria gas interconnector flows 1.1 TWh in first month: operator, 10 Nov 2022 https://www.spglobal.com/commodityinsights/en/market-insights/latest-news/natural-gas/111022-greece-bulgaria-gas-interconnector-flows-11-twh-in-first-month-operator (այցելվել է 05.12.2022թ.)

[87] Azerbaijan's role in natural gas supplies to Europe, Toghrul Veliyev, 07 November 2022, https://bakuresearchinstitute.org/en/azerbaijans-role-in-natural-gas-supplies-to-europe/ (այցելվել է 05.12.2022թ.)

[88] Let's not exaggerate: Southern Gas Corridor prospects to 2030, the Oxford Institute for Energy Studies, Simon Pirani, July 2018, https://a9w7k6q9.stackpathcdn.com/wpcms/wp-content/uploads/2018/07/Lets-not-exaggerate-Southern-Gas-Corridor-prospects-to-2030-NG-135.pdf (այցելվել է 05.12.2022թ.)



Այնուամենայնիվ, ուկրաինական ճգնաժամից հետո Եվրոպայում ադրբեջանական գազի նկատմամբ հետաքրքրությունը անհամեմատ ավելի մեծացել է: **Միայն 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ԵՄ-ն ադրբեջանական գազի համար վճարել է 4,9 մլրդ եվրո:** Ընդ որում, եթե 2022թ. առաջին եռամսյակում Ադրբեջանը բնական գազի վաճառքի համար ԵՄ-ից ստացել է 2,1 մլրդ եվրո, ապա երկրորդ եռամսյակում Ադրբեջանի եկամուտները ավելացել են 33%-ով՝ կազմելով 2,8 մլրդ եվրո: Ուշագրավ է, որ առաջին եռամսյակում **Հունաստանի և Իտալիայի համար 1000 խ.մ ադրբեջանական գազի գինը կազմել է ավելի քան 1000 եվրո, Բուլղարիայի համար՝ շուրջ 900 եվրո**[89]:

Միաժամանակ պետք է նշել, որ դեպի ԵՄ ադրբեջանական գազի արտահանման կարողությունները սահմանափակ են: Դեռևս 2022թ. փետրվարին Տրանսանատոլիական գազատարի կոնսորցիումի տնօրենը նշում էր, որ գազատարը 100%-ով ծանրաբեռնված է[90]: Որքան էլ ԵՄ-ն և Ադրբեջանը ձգտում են արագացնել ՀԳՄ-ի ընդլայնման գործընթացը, կարճաժամկետ հեռանկարում մատակարարման ծավալները հնարավոր է մեծացնել տարեկան ընդամենը մի քանի միլիարդ խորանարդ մետրով:

[89] Страны ЕС в январе-июне потратили около 5 млрд евро азербайджанский газ, 19 октября, 2022, https://minval.az/news/124283497 (այցելվել է 05.12.2022թ.)
[90] Azerbaijan set to boost gas supply to Europe this year, double capacity in future, Reuters, February 23, 2022, https://www.reuters.com/business/energy/azerbaijan-set-boost-gas-supply-europe-this-year-double-capacity-future-2022-02-23/ (այցելվել է 05.12.2022թ.)

Այսպես, 2022թ. հուլիսի 18-ին Եվրոպական հանձնաժողովի և Ադրբեջանի միջև ստորագրվեց «Էներգետիկայի ոլորտում ռազմավարական գործընկերության մասին փոխըմբռնման հուշագիր», որով նախատեսվում է դեպի ԵՄ ադրբեջանական գազի մատակարարումները կրկնապատկել՝ հասցնելով 20 մլրդ խ.մ-ի: Ընդ որում, արդեն 2022-ին նախատեսվում է Ադրբեջանից ներմուծվող գազի ծավալներն ավելացնել 4-մլրդ խորանարդ մետրով և հասցնել 12 մլրդ խ.մ-ի[91]: Սակայն այսպիսի ծավալներ ապահովելու համար Ադրբեջանը պետք է զգալիորեն ավելացնի գազի արդյունահանությունը: Եթե խոսքը տարեկան մի քանի միլիարդ խ.մ-ի մասին է, ապա դա հնարավոր է ապահովել ներքին ռեսուրսների հաշվին՝ համեմատաբար փոքր ներդրումների միջոցով[92], սակայն ՀԳՄ հզորության կրկնապատկման համար անհրաժեշտ են ինչպես էական ներդրումներ, այնպես էլ առնվազն մի քանի տարվա աշխատանք և այլ արդյունահանողների ներգրավում:

Միաժամանակ, դեպի ԵՄ կասպյան գազի մատակարարումները հնարավոր է ավելացնել դեպի Թուրքիա ուղղվող գազի ավելցուկի հաշվին: Առհասարակ, Թուրքիան առանցքային հանգույց է կասպյան էներգակիրները դեպի եվրոպական շուկա մատակարարելու տեսանկյունից, ուստի, Հարավային գազային միջանցքի ընդլայնման հեռանկարներն ուսումնասիրելուց առաջ, նախ հարկավոր է ավելի մանրամասն ուսումնասիրել այդ հարցում Թուրքիայի դերը:

2.2. Թուրքիայի տարանցիկ դերակատարությունը՝ դեպի Եվրոպա գազի մատակարարման հարցում

Վերջին տասնամյակների ընթացքում Թուրքիայի գործող իշխանությունների տարածաշրջանային քաղաքականության ամենամեծ հաջողությունները թերևս կապված են երկրի տարանցիկ հզորություններն ավելացնելու լայնամասշտաբ ծրագրերի նախագծման և իրագործման հետ: Թուրքիան գտնվում է մի կողմից՝ Ռուսաստանի, Կենտրոնական Ասիայի, մյուս կողմից՝ Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի, ինչպես նաև Եվրոպայի միմյանց կապող հաղորդակցությունների հանգույցում, վերջինիս հարևանությամբ տեղաբաշխված են

[91] EU and Azerbaijan enhance bilateral relations, including energy cooperation, European Commission, Brussels, 18 July 2022 https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_22_4550 (այցելվել է 05.12.2022թ.)

[92] President Aliyev Says More Gas Supplies to Reach Foreign Markets in 2022, By Mushvig Mehdiyev February 6, 2022, https://caspiannews.com/news-detail/president-aliyev-says-more-gas-supplies-to-reach-foreign-markets-in-2022-2022-2-5-35/ (այցելվել է 05.12.2022թ.)

նավթի և գազի հաստատված համաշխարհային պաշարների շուրջ 60%-ը: Օգտվելով հարմար աշխարհագրական դիրքից և նպաստավոր աշխարհաքաղաքական հանգամանքներից, հսկայական ներդրումներ կատարելով ենթակառուցվածքների զարգացման նախագծերում՝ Էրդողանի վարչակարգը ժամանակակից Թուրքիան դարձրել է կարևոր հանգույց արևելք-արևմուտք տարանցման շղթաներում: Այստեղ խոսքը վերաբերում է ինչպես տրանսպորտային, այնպես էլ էներգետիկ ենթակառուցվածքներին:

Ուկրաինայի ճգնաժամի համատեքստում Ռուսաստանի և Արևմուտքի միջև խուսանավելու՝ Թուրքիայի վարած ճկուն քաղաքականությունն ավելի է ընդգծել վերջինիս տարանցիկ հնարավորությունները: **Այսօր Թուրքիան հանդիսանում է ոչ միայն Մերձկասպյան, այլև Ռուսական գազի դեպի Եվրոպա մատակարարումների առանցքային ուղղությունը:** Պատահական չէ, որ մատակարարման մյուս շղթաների կորստից հոտո Ռուսաստանը հանդես եկավ Թուրքիան այսպես կոչված «էներգետիկ հաբ» դարձնելու առաջարկով[93], որը պետք է ապահովի ՌԴ-ԵՄ էներգետիկ համագործակցության վերջին կայուն ուղղությունը: Մյուս կողմից՝ **Թուրքիան հանդիսանում է Եվրոպայում բնական գազի ամենախոշոր սպառողներից մեկը. 2021-ին Եվրոպայում բնական գազի տարեկան սպառման ցուցանիշով Թուրքիան զիջել է միայն 3 երկրների՝ Գերմանիային, Մեծ Բրիտանիային և Իտալիային**[94]: Առհասարակ, հաշվի առնելով դեպի ԵՄ բնական գազի տարանցման հարցում Թուրքիայի կարևոր դիրքը, ինչպես նաև Եվրոպայի գազի սպառման ընդհանուր շուկայում Թուրքիայի առանցքային դերակատարությունը, հարկավոր է ավելի մանրամասն անդրադառնալ Թուրքիայի՝ բնական գազի շուկայի առանձնահատկություններին:

2021-ին Թուրքիայում բնական գազի սպառումը նախորդ տարվա համեմատ ավելացել է 24%-ով և կազմել շուրջ 60 մլրդ խ.մ, որի գերակշիռ մասը ներմուծվել է: Թուրքիայում բնական գազի ներմուծումը 2021-ին նախորդ տարվա համեմատ ավելացել է 22%-ով և կազմել 58,7 մլրդ խ.մ: **2021-ին Թուրքիան բնական գազ է**

---

[93] Путин предложил создать в Турции крупнейший газовый хаб, РБК, 12/10/2022, https://www.rbc.ru/economics/12/10/2022/6346a1fc9a794776a3072018 (այցելվել է 05.12.2022թ.), Россия хочет создать газовый хаб в Турции: возможно ли это?, Алекс Будрис, Редакция Forbes, 13 октября 2022 г, https://www.forbes.ru/biznes/479709-rossia-hocet-sozdat-gazovyj-hab-v-turcii-vozmozno-li-eto (այցելվել է 05.12.2022թ.)

[94] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

ներմուծել 4 հիմնական աղբյուրներից՝ Ռուսաստանից, Իրանից, Ադրբեջանից և Ալժիրից: **Ռուսաստանը ապահովել է ներմուծման շուրջ 45%-ը (26,3 մլրդ խ.մ**), Իրանը՝ 16%-ը (9,6 մլրդ խ.մ), **Ադրբեջանը՝ 13,6%-ը (8 մլրդ խ.մ),** Ալժիրը՝ 10,2%-ը (6 մլրդ խ.մ), Նիգերիան՝ 2,1%-ը (1,2 մլրդ խ.մ), իսկ մնացած 13%-ը (7,7 մլրդ խ.մ) ներմուծվել է այլ աղբյուրներից: Ներմուծման 76%-ը իրականացվել է գազատար խողովակաշարերի միջոցով, 24%-ը կամ շուրջ 14 մլրդ խ.մ՝ հեղուկ բնական գազի տեսքով: Ընդ որում, ՀԲԳ սվոփային ներմուծումները կազմել են Թուրքիայի ներմուծման 11,7%-ը, իսկ դրա շուրջ 70%-ը ներմուծվել է ԱՄՆ-ից՝ մոտ 4,7 մլրդ խ.մ[95]:



** Ներկայացնում է նաև այն երկրները, որոնք իրականացնում են սվոփային ներմուծում*

Ուշագրավ է, որ **Ռուսաստանից Թուրքիա բնական գազի ներմուծումը 2021-ին 2020-ի համեմատ ավելացել է գրեթե 60%-ով, սակայն այդ ցուցանիշը մոտ է վերջին տասնամյակի միջին ցուցանիշին՝ տարեկան մոտ 25 մլրդ խ.մ:** Իսկ ահա, Ադրբեջանից ներմուծումը կրճատվել է, ինչը կարող է պայմանավորված լինել այն

[95] Natural Gas Market Annual Sector Report List, 2021, Repoblic of Turkiye Energy Market Regulatory Authority https://www.epdk.gov.tr/Detay/Icerik/3-0-94/dogal-gazyillik-sektor-raporu (այցելվել է 05.12.2022թ.)

հանգամանքով, որ Տրանսադիրահիտիկ գազատարի շահագործմամբ 2019-2020թթ. ՀԳՄ միջոցով Թուրքիային մատակարարվող գազի մեծ մասը ուղղվել է եվրոպական շուկա:

Թուրքիայի՝ բնական գազի ներմուծման ծավալները 2011-2021թթ. (մլրդ խ.մ)

Երկիրը	ՌԴ		Իրան		Ադրբեջան		Ալժիր		Նիգերիա		Այլ		ամբողջը	Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ %
Տարին	Ծավալ	Մաս (%)	Ծավալ	Մաս (%)	Ծավալ	Մաս. (%)	Ծավալ	Մաս (%)	Amount	Մաս. (%)	Ծավալ	Մաս (%)	Ծավալ	
2011	25.406	57,91	8.190	18,67	3.806	8,67	4.156	9,47	1.248	2,84	1.069	2,44	**43.874**	**15,35**
2012	26.491	57,69	8.215	17,89	3.354	7,3	4.076	8,88	1.322	2,88	2.464	5,37	**45.922**	**4,67**
2013	26.212	57,9	8.730	19,28	4.245	9,38	3.917	8,65	1.274	2,81	892	1,97	**45.269**	**-1,42**
2014	26.975	54,76	8.932	18,13	6.074	12,33	4.179	8,48	1.414	2,87	1.689	3,43	**49.262**	**8,82**
2015	26.783	55,31	7.826	16,16	6.169	12,74	3.916	8,09	1.240	2,56	2.493	5,15	**48.427**	**-1,7**
2016	24.540	52,94	7.705	16,62	6.480	13,98	4.284	9,24	1.220	2,63	2.124	4,58	**46.352**	**-4,28**
2017	28.690	51,93	9.251	16,74	6.544	11,85	4.617	8,36	1.344	2,43	4.804	8,7	**55.250**	**19,2**
2018	23.642	47,02	7.863	15,64	7.527	14,97	4.521	8,99	1.668	3,32	5.061	10,21	**50.282**	**-8,99**
2019	15.196	33,61	7.736	17,11	9.585	21,2	5.678	12,56	1.756	3,88	5.260	11,63	**45.211**	**-10,08**
2020	16.166	33,59	5.321	11,06	11.548	24,00	5.573	11,58	1.358	2,82	8.159	16,95	**48.126**	**6,45**
2021	26.343	44,87	9.434	16,07	7.986	13,60	5.987	10,20	1.249	2,13	7.706	13,13	**58.704**	**21,98**

96

2022թ. հունվար-օգոստոս ամիսներին Թուրքիան ներմուծել է 38,1 մլրդ խ.մ բնական գազ, ինչը մի փոքր (1,15%-ով) պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Այդ ընթացքում Ռուսաստանը ապահովել է Թուրքիայի ներմուծման շուրջ 43%-ը՝ 16,3 մլրդ խ.մ, Ադրբեջանը՝ 15%-ը՝ 5,7 մլրդ խ.մ, Իրանը՝ 16%՝ 6,2 մլրդ խ.մ, Ալժիրը՝ 9%՝ 3,4 մլրդ խ.մ[97]: Ինչպես տեսնում ենք, չնայած ուկրաինական ճգնաժամին, 2022-ին Թուրքիայի գազի ներմուծման կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել. շատ չնչին՝ 2 տոկոսային կետով նվազել է ՌԴ մասնաբաժինը, և գրեթե նույնքան ավելացել է Ադրբեջանի մասնաբաժինը:

[96] Natural Gas Market Annual Sector Report List, Repoblic of Turkiye Energy Market Regulatory Authority https://www.epdk.gov.tr/Detay/Icerik/3-0-94/dogal-gazyillik-sektor-raporu (այցելվել է 05.12.2022թ.)

[97] Natural Gas Market Monthly Sector Report List, 2022 January-August, Repoblic of Turkiye Energy Market Regulatory Authority https://www.epdk.gov.tr/Detay/Icerik/3-0-95/dogal-gazaylik-sektor-raporu (այցելվել է 05.12.2022թ.)

Ինչպես արդեն նշվեց, ուկրաինական ճգնաժամի համատեքստում վերջին ամիսներին ռուսական գազի մատակարարումը դեպի ԵՄ շուկա հիմնականում իրականացվում է երեք ուղղություններով՝ Թուրքական հոսք, տարանցում Ուկրաինայի տարածքով և ՀԲԳ մատակարարում: **Հաշվի առնելով Ուկրաինայում ընթացող ռազմական գործողությունները, ինչպես նաև հեղուկ գազի արտահանման սահմանափակ կարողությունները, թուրքական տարանցումը ՌԴ համար մնացել է միակ հուսալի ուղղությունը ԵՄ-ին գազ մատակարարելու տեսանկյունից:**



[98]

[98] European natural gas imports, Dataset, BRUEGEL, Georg Zachmann, Giovanni Sgaravatti, Ben McWilliams, 29 November 2022 https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 05.12.2022թ.)

Միևնույն ժամանակ, Թուրքիան Հարավային գազային միջանցքի առանցքային մասնակիցն է և կարևոր դեր ունի այն ընդլայնելու ու դեպի ԵՄ մատակարարվող կասպյան գազի ծավալներն ավելացնելու հարցում: Բացի այդ, ինչպես տեսնում ենք, վերջին տարիներին Թուրքիան բավականին դիվերսիֆիկացրել է բնական գազի ներմուծման աղբյուրները՝ Ռուսաստանից մինչև Ադրբեջան, Իրանից մինչև ԱՄՆ, Ալժիր և Եգիպտոս: Անկարան ծրագրում է այս ուղղությամբ խորացնել համագործակցությունը Եգիպտոսի, Իսրայելի, Աֆրիկայի, Կենտրոնական Ասիայի որոշ երկրների և մի շարք այլ դերակատարների հետ: Թուրքիան վերջին տարիներին զգալիորեն մեծացրել է նաև ՀԲԳ ընդունման տերմինալների հզորությունը: Վերոհիշյալ իրողությունները Թուրքիային հնարավորություն են տալիս էական դեր խաղալ տարբեր աղբյուրներից բնական գազի ներմուծման և դեպի ԵՄ տարանցման գործընթացում[99]:

[99] Turkey and the Regional Natural Gas Geopolitics. The “Hub Vision” in Light of the Future Prospects of the Southern Gas Corridor, Simone Tagliapietra, Quaderns de la Mediterrània 22,2015 https://www.iemed.org/publication/turkey-and-the-regional-natural-gas-geopolitics-the-hub-vision-in-light-of-the-future-prospects-of-the-southern-gas-corridor/ (այցելվել է 05.12.2022թ.)

Թուրքիայի էներգետիկ քաղաքականության միջազգային բաղադրիչի հիմնական ռազմավարական առաջնահերթությունները կարելի է համարել հետևյալները՝

- **ապահովել նավթի և բնական գազի մատակարարման ուղիների և ռեսուրսների դիվերսիֆիկացիան՝ հաշվի առնելով աճող պահանջարկն ու արտաքին կախվածությունը,**
- **դառնալ էներգետիկայի ոլորտում տարածաշրջանային առևտրի հաբ,**
- **մեծացնել բնական ռեսուրսների սեփական արտադրության մասնաբաժինը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության մեջ վերականգնվող բաղադրիչը,**
- **միջուկային էներգետիկան վերածել ազգային էներգետիկ հաշվեկշռի առանցքային բաղադրիչի:**[100]

Հարկ է ընդգծել, որ Թուրքիայի էներգետիկ քաղաքականությունը ընդհանուր առմամբ տեղավորվում է վերջինիս արտաքին քաղաքականության և աշխարհաքաղաքական հավակնությունների տրամաբանության շրջանակներում: Ձգտելով դառնալ որոշակի բուֆեր Մերձավոր Արևելքի և ԵՄ-ի, ՌԴ-ի և ԵՄ-ի միջև՝ Թուրքիան փորձում է ամրապնդել սեփական ինքնիշխանությունն ու տարածաշրջանային կարևորությունը: Մյուս կողմից, **Մերձկասպյան երկրներից և Կենտրոնական Ասիայից դեպի ԵՄ ինչպես էներգակիրների, այնպես էլ առևտրի տարանցման կենտրոն դառնալու ձգտումը լիովին համապատասխանում է Թուրքիայի գործող իշխանությունների պանթուրանական հավակնություններին և կարող է դառնալ այդ մեգանախագծի տնտեսական շարժիչը:**

Ընդ որում, **Թուրքիայի այս քաղաքականությունը որոշ չափով համընկնում է նաև վերջինիս անգլոսաքսոնական դաշնակիցների շահերի հետ, որոնք ձգտում են թուլացնել ԵՄ ուղիղ կախվածությունը ՌԴ-ից, իսկ ԵՄ և ՌԴ էներգետիկ կապերում Թուրքիայի բուֆերային դերակատարությունը կարող է այդ կախվածությունը ավելի կառավարելի դարձնել՝ հաշվի առնելով Թուրքիայի նկատմամբ ազդեցության բազմաթիվ լծակների առկայությունը:** Միաժամանակ, մերձկասպյան էներգակիրների ուղղորդումը դեպի եվրոպական շուկա Թուրքիայի տարածքով հնարավորություն է տալիս ոչ միայն դիվերսիֆիկացնել ԵՄ բնական գազի մատակարարների շրջանակը, այլև Թուրքիայի միջոցով սեփական ազդեցությունը

[100] Россия и Турция: состояние и перспективы энергетического сотрудничества, РАБОЧАЯ ТЕТРАДЬ, Владимир Лихачев, РОССИЙСКИЙ СОВЕТ ПО МЕЖДУНАРОДНЫМ ДЕЛАМ, МОСКВА 2021, https://russiancouncil.ru/papers/Russia-Turkey-Energy-WorkingPaper63.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

տարածել այս տարածաշրջանի երկրներում, որոնք ավանդաբար դիտվում են որպես ՌԴ ազդեցության գոտի:

Թուրքիայի էներգետիկ քաղաքականությունն ուսումնասիրելիս հարկավոր է անդրադառնալ ևս մեկ հանգամանքի, որը վերջին տարիներին Թուրքիայում հանրային մեծ ուշադրության է արժանացել և դարձել իշխող վարչախմբի կարևոր տնտեսական հաղթաթղթերից մեկը: 2020թ. օգոստոսին՝ 44-օրյա պատերազմից ընդամենը մեկ ամիս առաջ, Թուրքիայի նախագահը հայտարարեց Սև ծովում գազի խոշոր հանքավայր հայտնաբերելու մասին, որի պաշարները գնահատվում են 320 մլրդ խ.մ [101]: Իհարկե, այս ծավալը կարող է բավարարել Թուրքիայի տարեկան պահանջարկը ընդամենը 5-6 տարվա կտրվածքով, սակայն դրա առկայությունն իսկ Թուրքիայի համար ստեղծում է էներգետիկ անվտանգության կարևոր «բարձիկ», ինչը թույլ կտա ֆորսմաժորային իրավիճակներում նվազագույնի հասցնել արտաքին մատակարարներից կախվածությունը:

Այսինքն, մի կողմից՝ գազի ներմուծման ցանցի դիվերսիֆիկացիան, մյուս կողմից՝ ներքին ռազմավարական պաշարի առկայությունը Թուրիքային դարձնում են գազի եվրոպական շուկայում բավական անկախ և ճկուն դերակատար: Այս իմաստով շատ հետաքրքիր է 44-օրյա պատերազմին նախորդող ժամանակահատվածում Թուրքիայի էներգետիկ քաղաքականության առանձնահատկությունների ուսումնասիրությունը: **Պատերազմից առաջ՝ 2018-2020թթ. Թուրքիան կտրուկ կրճատեց ՌԴ-ից գազի ներմուծման մասնաբաժինը՝ ավելի քան 50%-ից հասցնելով մոտ 33%-ի, միաժամանակ ավելացրեց Ադրբեջանից ներմուծման մասնաբաժինը՝ նախկինում 12-14 տոկոսից 2020-ին հասցնելով 24%-ի: Սա Թուրքիային հնարավորություն տվեց, ի թիվս այլ գործոնների, նաև էներգետիկ անվտանգության տեսանկյունից նվազեցնել ՌԴ ազդեցության լծակները և ավելի ազատ վարքագիծ դրսևորել Հարավային Կովկասում: Պատերազմից հետո տնտեսական բաղադրիչը կրկին գերակայող դարձավ և Թուրքիան արդեն 2021-ին սկսեց ավելացնել ռուսական գազի մասնաբաժինը:**

[101] Turkey 2021; Energy Policy Review, The International Energy Agency (IEA), March 2021, https://www.iea.org/reports/turkey-2021 (այցելվել է 05.12.2022թ.)



[102]

Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրակացնել, որ Թուրքիան աստիճանաբար դառնում է կարևոր հանգույց՝ ինչպես ռուսական գազը դեպի Եվրոպա մատակարարելու, այնպես էլ այլընտրանքային՝ կասպյան գազը դեպի եվրոպական շուկա հասցնելու տեսանկյունից: **Այսօր արդեն Թուրքիան հնարավորություն ունի կրճատելու այս կամ այն մատակարարից ստացվող գազի մասնաբաժինը սեփական սպառման մեջ և դրա հաշվին ավելացնելու սեփական տարածքով տարանցումը դեպի ԵՄ: Օրինակ, Տրանսադրիատիկ խողովակաշարի հզորությունների ավելացման, ինչպես նաև Հունաստանից և Ալբանիայից դեպի մյուս բալկանյան երկրներ խողովակաշարերի ցանցի ընդլայնման պարագայում, Թուրքիան կարող է նվազագույնի հասցնել ադրբեջանական գազի սպառումը և Ադրբեջանից ներմուծվող գազի առավել մեծ մասնաբաժին ուղղել դեպի եվրոպական շուկա:** Դա կարող է անել ինչպես ռուսական գազի ներմուծման ավելացման, այնպես էլ այլ աղբյուրներից ներմուծման, սեփական արտադրության մեկնարկի և այլ գործոնների հաշվին[103]:

[102] Natural Gas Market Annual Sector Report List, Repoblic of Turkiye Energy Market Regulatory Authority https://www.epdk.gov.tr/Detay/Icerik/3-0-94/dogal-gazyillik-sektor-raporu (այցելվել է 05.12.2022թ.)
[103] Europe's solution to energy dependence lies in a rebuilt Fourth Corridor, Robin Mills, Mar 28, 2022, https://www.thenationalnews.com/business/comment/2022/03/28/europes-solution-to-energy-dependence-lies-in-a-rebuilt-fourth-corridor/ (այցելվել է 05.12.2022թ.)

Միաժամանակ պետք է ընդգծել, որ Թուրքիան իր էներգետիկ և արտաքին քաղաքական հավակնությունները բավարարելու համար ստիպված կլինի շարունակել Ռուսաստանից բնական գազի ներմուծումը մեծ ծավալներով: Հատկանշական է, որ, օրինակ, Իրանի դեմ արևմտյան պատժամիջոցները չեն խոչընդոտել, որպեսզի Անկարան վերջինից գազ ներմուծի[104], իսկ այսօր, փաստորեն, նույնը տեղի է ունենում ռուսական գազի պարագայում: Այս տեսանկյունից Թուրքիայի քաղաքականությունը համընկնում է նաև ՌԴ շահերի հետ, որը ուկրաինական հակամարտության համատեքստում կորցնելով ԵՄ-ին ուղղակիորեն խողովակային բնական գազ մատակարարելու հնարավորությունները, ձգտում է դա իրականացնել այլընտրանքային ճանապարհներով: Ստեղծված իրավիճակում ռուսական կողմի համար խելամիտ այլընտրանքը մի կողմից՝ Թուրքիայի տարածքով տարանցման հզորությունների ավելացումն է, մյուս կողմից՝ ՀԲԳ մատակարարումների ավելացումը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ **Թուրքիան բնական գազի տեսանկյունից Եվրոպայի էներգետիկ անվտանգության համար շատ կարևոր դեր է կատարում, իսկ վերջինիս տարածքով անցնող Հարավային գազային միջանցքը դեպի ԵՄ գազի մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացիայի առանցքային ուղղություններից է:** Այս հարցում Թուրքիայի կշիռը կարող է առավել մեծանալ, եթե վերջինիս հաջողվի ոչ միայն ապահովել ՌԴ-ից դեպի ԵՄ խողովակային գազի ողջ ծավալի վերաուղղումը սեփական տարածքով, այլև ընդլայնել Հարավային գազային միջանցքի հզորությունը:

2.3. Հարավային գազային միջանցքի ընդլայնման խոչընդոտներն ու հեռանկարները

Ինչպես արդեն նշվեց, 2022թ. փետրվարին Ուկրաինայում ռազմական գործողությունների մեկնարկից ի վեր սկսեցին ակտիվորեն շրջանառվել խոսակցություններ ԵՄ էներգետիկ անվտանգության տեսանկյունից Հարավային գազային միջանցքի կարևորության և վերջինիս թուղունակության ընդլայնման անհրաժեշտության մասին: Ադրբեջանն իր հերթին փորձում է ստեղծված իրավիճակն օգտագործել՝ ՀԳՄ-ից առավելագույն տնտեսական և քաղաքական շահ ստանալու նպատակով: Գաղտնիք չէ, որ ի սկզբանե Հարավային գազային միջանցքը

[104] "Natural Gas Crisis: Turkey's Wake-up Call", Azem Yildirim, Analyst at EDAM, February 2022 https://edam.org.tr/wp-content/uploads/2022/02/220210-NaturalGasCrisis.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

դիտարկվում էր որպես զուտ քաղաքական նախագիծ, և փորձագետները կասկածամտությամբ էին մոտենում ծրագրի տնտեսական հիմնավորումներին: Սակայն ուկրաինական ճգնաժամի համատեքստում մի կողմից՝ ավելի համոզիչ դարձան ծրագրի քաղաքական հիմնավորումները, մյուս կողմից՝ Եվրոպայում բնական գազի բարձր գների առկա և կանխատեսվող պայմաններում կրկին արդիական դարձավ նախագծի տնտեսական բաղադրիչը:

Նախ պետք է նշել, որ Եվրոպայի համար կասպյան գազի քաղաքական ենթատեքստը ակնհայտ էր դեռևս ՀԳՄ իրագործումից տարիներ առաջ, երբ դեռ 2000-ականների սկզբից ակտիվորեն քննարկվում էր «Նաբուկկո» գազատարի կառուցման նախագիծը: Այս գազատարը նախատեսում էր Կենտրոնական Ասիայից և Մերձավոր Արևելքից (Իրաք) Թուրքիայի տարածքով շատ ավելի մեծ ծավալի գազ ներմուծել դեպի Եվրոպա և աստիճանաբար թուլացնել ԵՄ կախվածությունը Գազպրոմից: Սակայն տնտեսական հիմնավորման բացակայության և քաղաքական անորոշությունների առկայության պայմաններում այս նախագիծը չիրականացավ, իսկ փոխարենը Ադրբեջանը կյանքի կոչեց իր շատ ավելի համեստ ծրագիրը՝ Հարավային գազային միջանցքը[105]:

Ուկրաինական ճգնաժամից ի վեր ՀԳՄ ընդլայնման քաղաքական նախադրյալները, անշուշտ, միայն ավելացել են: Արդեն անդրադարձանք 2022թ. հուլիսի 18-ին Բաքվում ԵՄ և Ադրբեջանի միջև ստորագրված հուշագրին, որով նախատեսվում է ՀԳՄ միջոցով դեպի ԵՄ մատակարարվող գազի տարեկան ծավալները նախ 2022թ. ավարտին հասցնել 12 մլրդ խ.մ-ի, իսկ մինչև 2027-ը այն հասցնել 20 մլրդ խորանարդ մետրի[106]: Միաժամանակ, ինչպես ԵՄ, այնպես էլ ադրբեջանական փորձագիտական շրջանակները պարբերաբար քննարկման առարկա են դարձնում ՀԳՄ-ը առավել ընդլայնելու, դրանում Կենտրոնական Ասիայից և տարածաշրջանի այլ երկրներից նոր ռեսուրսներ ներգրավելու գաղափարը: Այս իմաստով շատ կարևոր է հասկանալ, թե որոնք են ՀԳՄ ընդլայնման հիմնական խոչընդոտներն ու իրատեսական հնարավորությունները:

[105] The Nabucco failure: Juncker and Vestager negligence enhanced EU dependence on Russian gas, By Joe Kirwin, 21 March 2022 https://www.brusselstimes.com/211842/the-nabucco-failure-juncker-and-vestager-negligence-enhanced-eu-dependence-on-russian-gas (այցելվել է 05.12.2022թ.)
[106] EU and Azerbaijan enhance bilateral relations, including energy cooperation, European Commission, 18 July 2022, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_22_4550 (այցելվել է 05.12.2022թ.)

Հարավային գազային միջանցքի առանցքային բաղադրիչը Տրանսանատոլիական գազատարն է (TANAP), որը ադրբեջանական գազը Թուրքիայի տարածքով հասցնում է դեպի Եվրոպա: Այս գազատարի առավելագույն նախագծային հզորությունը շուրջ 16 մլրդ խ.մ է: Երկրորդ կարևոր բաղադրիչը Տրանսադրիատիկ գազատարն է (TAP)՝ 10 մլրդ խ.մ հզորությամբ և վերջապես Հարավկովկասյան խողովակաշարը, որն ապահովում է գազի տեղափոխումը Վրաստանի և Ադրբեջանի տարածքով դեպի Թուրքիա: **Ինչպես TANAP-ը, այնպես էլ TAP-ը այս տարի արդեն իսկ շահագործվում են ամբողջ ծավալով**[107]: Այսինքն՝ ՀԳՄ ընդլայնման հեռանկարներն ուսումնասիրելիս պետք է հասկանալ այս բաղադրիչներից յուրաքանչյուրի թողունակության ընդլայնման հնարավորությունները:

Սակայն, եթե խողովակների պարագայում դրանց ընդլայնումը կախված է հիմնականում քաղաքական կամքից և տնտեսական նպատակահարմարությունից, ապա շատ ավելի կարևոր է այդ խողովակները բնական գազով ապահովելու համարժեք ռեսուրսի առկայությունը: Փորձենք նախ հասկանալ, թե որքանով և ինչ ծավալներով է հնարավոր դա ապահովել զուտ ադրբեջանական ռեսուրսի հաշվին, ապա նաև դիտարկենք այլընտրանքային աղբյուրները: Այսպես, **հիմնական գործոնները, որոնք առաջիկա տասնամյակի ընթացքում կազդեն Ադրբեջանից դեպի ԵՄ գազի մատակարարման վրա հետևյալներն են՝**

- **գազի արդյունահանման մակարդակը, մասնավորապես, կասպյան նոր հանքավայրերի զարգացման տեմպերը,**
- **Ադրբեջանի ներքին պահանջարկը, ինչպես նաև ադրբեջանական գազի նկատմամբ Վրաստանի պահանջարկը,**
- **Ադրբեջանական գազի համար թուրքական շուկայի հնարավոր մրցակցային առավելությունը ԵՄ շուկայի նկատմամբ (այսինքն՝ այն, թե տնտեսական և քաղաքական տեսանկյունից TANAP-ով անցնող գազի ինչ մասնաբաժին է նպատակահարմար թողնել Թուրքիային):**

[107] Baku hosted international conference under the motto "Along the Middle Corridor: Geopolitics, Security and Economy" President Ilham Aliyev attended the conference, 25.11.2022, https://azertag.az/en/xeber/Baku_hosted_international_conference_under_the_motto_Along_the_Middle_Corridor_Geopolitics_Security_and_Economy__President_Ilham_Aliyev_attended_the_conference_VIDEO-2385295 (այցելվել է 05.12.2022թ.)

Ադրբեջանում բնական գազի ներկայիս և կանխատեսվող արդյունահանումը.

	Սեփականատերը կամ օպերատորը	Առավելագույն արտադրությունը	Կարգավիճակը
Ներկայումս գործող արտադրությունը			
Շահ Դենիզ 1	ԲՓ գլխավորած կոնսորցիում	10	Շահագործվում է 2007-ից
Ազերի-Չիրաղ-Գյունեշլի (ԱՉԳ) փոխկապակցված գազ	ԲՓ գլխավորած կոնսորցիում	3	Շահահործվում է 2005-ից
Գյունեշլի	Սոկառ	3,5	Շահագործվող
Այլ փոքր հանքավայրեր	Սոկառ	2,5	Շահագործվող
Շահ Դենիզ 2	ԲՓ գլխավորած կոնսորցիում	16	Շահագործվում է 2018-ից, 2021-2022թթ. գտնվում է արտադրության առավելագույն հզորության փուլում
Ընդամենը		**35**	
Նախատեսվող արտադրությունը			
Ազերի-Չիրաղ-Գյունեշլի (ԱՉԳ) չփոխկապակցված գազ	ԲՓ գլխավորած կոնսորցիում	5	Բանակցային փուլում է
Աբշերոն 1	Տոտալի գլխավորած կոնսորցիում	1,5	Ըստ Ալիևի՝ պետք է շահագործվի 2023-ից[108]
Աբշերոն 2	Տոտալի գլխավորած կոնսորցիում	5	Բանակցային փուլում է
Կարաբաղ, Ասթաֆի, Դան Ուլդուզու	Ստատոյլ Ադրբեջան և Սոկառ	1,5	Գնահատման փուլում է
Ումիդ	Սոկառ	1,5	Արդյունահանությունը դեռ չի սկսվել
Բաբեկ	Սոկառ	3-5	Արդյունահանությունը դեռ չի սկսվել
Շաֆագ-Ասիման	ԲՓ	8	2018-ին կնքվել է շահագործման մասին հուշագիր
Ընդամենը		**25,5-27,5**	

[108] Baku hosted international conference under the motto "Along the Middle Corridor: Geopolitics, Security and Economy" President Ilham Aliyev attended the conference, 25.11.2022, https://azertag.az/en/xeber/Baku_hosted_international_conference_under_the_motto_Along_the_Middle_Corridor_Geopolitics_Security_and_Economy__President_Ilham_Aliyev_attended_the_conference_VIDEO-2385295 (այցելվել է 05.12.2022թ.)

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ ցուցանիշներից, որոնք տեղ են գտել Օքսֆորդի՝ էներգետիկ հետազոտությունների ինստիտուտի 2018-ին հրապարակված՝ «Եկեք չչափազանցնենք. Հարավային գազային միջանցքի հեռանկարները մինչև 2030թ.»[109] թեմայով հետազոտության մեջ, ներկայումս Ադրբեջանում շահագործվող բնական գազի հանքավայրերի առավելագույն արտադրողականությունը կազմում է տարեկան շուրջ 35 մլրդ խ.մ: Սա մի փոքր ավելի է 2021թ. շուրջ 32 մլրդ խ.մ ցուցանիշից, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022-ին Ադրբեջանում գազի արդյունահանումը ավելացել է, կարելի է ենթադրել, որ այս տարի արդյունահանման ցուցանիշը մոտ է լինելու վերոհիշյալ առավելագույն թողունակությանը:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանում առկա են մի շարք հեռանկարային նախագծեր, որոնք առաջիկա տասնամյակում կարող են շահագործման հանձնվել: Կարճաժամկետ հեռանկարում դրանցից ամենաիրատեսականը «Աբշերոն» նախագիծն է, որի առաջին փուլը Ադրբեջանի նախագահի համոզմամբ արդեն 2023-ին շահագործման կհանձնվի՝ տարեկան 1,5 մլրդ խ.մ արտադրողականությամբ և հետագայում՝ 2-րդ փուլի շրջանակներում այս ծավալը մի քանի անգամ ավելացնելու հեռանկարով: Մյուս նախագծերի մասով տեղեկատվությունը կա՛մ խիստ սահմանափակ է, կա՛մ առհասարակ բացակայում է: Սակայն, եթե վերցնենք բոլոր հեռանկարային նախագծերի ընդհանուր գնահատված ծավալը, ապա մինչև 2030-ը դրանց բոլորի շահագործման պարագայում Ադրբեջանը կարող է արտադրել առավելագույնը տարեկան ևս 25-27 մլրդ խ.մ գազ: Բայց նաև հարկ է նշել, որ այդ ընթացքում, ըստ կանխատեսումների, էականորեն կընկնի նաև արդեն իսկ շահագործվող հանքավայրերի արտադրողականությունը, ինչը կուղեկցվի միաժամանակ Ադրբեջանում գազի սպառման ծավալների աճով: Այսինքն՝ Ադրբեջանը, ամեն դեպքում, բնական գազի վերոհիշյալ ողջ կանխատեսվող ծավալը հնարավորություն չի ունենա արտահանել դեպի եվրոպական շուկա:

[109] Let's not exaggerate: Southern Gas Corridor prospects to 2030, the Oxford Institute for Energy Studies, Simon Pirani, July 2018, https://a9w7k6q9.stackpathcdn.com/wpcms/wp-content/uploads/2018/07/Lets-not-exaggerate-Southern-Gas-Corridor-prospects-to-2030-NG-135.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

Ադրբեջանի գազի հաշվեկշռի պատկերավոր կանխատեսումը (մլրդ. խ/մ)

Ա - Առավելագույն արդյունահանության դեպքում						Կանխատեսում					
Ն - Նվազագույն արդյունահանության դեպքում		2014	2015	2016	2017	2020		2025		2030	
Արտադրություն						Ն	Ա	Ն	Ա	Ն	Ա
Սոկառ՝ ներառյալ Ումիդ-Բաբեկ		6.17	5.8	5.25	5.5	5.2	7.8	5.4	9.9	6	12
ԱՉԳ ուղեկցող գազ		2.76	3.2	2.75	2.88	2.8	3.2	2.8	3.2	2.8	3.2
ԱՉԳ չուղեկցող գազ		0	0	0	0	0	0	0	2	0	5
Շահ Դենիզ 1		9.9	9.9	10.7	10.2	9.5	10.5	6.0	7.0	4.0	4.2
Շահ Դենիզ 2		0	0	0	0	11	13	16	16	13.8	14
Աբշերոն 1 փուլ		0	0	0	0	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5
Ապագա նախ.՝	Աբշերոն 2 փուլ	0	0	0	0	0	0	0	3	3	5
	Կարաբաղ եվ Աշրաֆի, Դան Ուլդուզ, Այպարա	0	0	0	0	0	0	0	1.5	1.5	1.5
	Շաֆագ-Ասիման	0	0	0	0	0	0	0	0	0	8
Այլ		0.2	0.4	0	0	0	0	0	0	0	0
Ներմուծում		0	0	0	1.52	2	0	0	0	0	0
Ընդամենը՝		19.03	19.3	18.7	20.1	32	36	31.7	44.1	32.6	54.4
Սպառում											
Ադրբեջան		11.03	10.9	10.7	12.7	12	12	13	13	14	14
Արտահանում	Վրաստան	1.9	2.2	2	1.9	2	2	2.5	2.5	2.5	2.5
	Թուրքիա Շահ Դենիզ 1 եվ 2 պայման.	6.1	6.2	6	5.5	9.8	12	6	6	6	6
	Եվրոպա Շ.Դ. 2					8.2	10	10	10	10	10
	Հասանելի մնացորդը Եվրոպայի եվ Թուրքիայի համար	0	0	0	0	0	0	0.2	12.6	0.1	21.9
Ընդամենը		19.03	19.3	18.7	20.1	32	36	31.7	44.1	32.6	54.4

Էներգետիկ հետազոտությունների Օքսֆորդի ինստիտուտ [110]

Ադրբեջանական գազի հաշվեկշռի կանխատեսման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև 2025 թվականը Ադրբեջանից գազի արտահանման կանխատեսվող տարեկան ծավալը կկազմի վատագույն սցենարի դեպքում՝ 32, իսկ լավագույն դեպքում՝ 44 մրդ խ.մ: Հաշվի առնելով Ադրբեջանի ներքին սպառումը (տարեկան 13-14 մլրդ խ.մ), ինչպես նաև Վրաստանի (տարեկան 2-2,5 մլրդ խ.մ), Թուրքիայի (տարեկան 6 մլրդ խ.մ) և ԵՄ (տարեկան 10 մլրդ խ.մ) հանդեպ արդեն իսկ առկա երկարաժամկետ (25 տարի) մատակարարման պայմանագրերով ունեցած պարտավորությունները՝ Օքսֆորդի վերլուծության հեղինակները կանխատեսել են, որ մինչև 2025-ը Ադրբեջանը հնարավորություն կունենա, բացի վերոհիշյալ պարտավորություններից, ԵՄ-ին կամ Թուրքիային մատակարարել ևս 0,2-12,6 մլրդ խ.մ գազ: Այստեղ վատագույն սցենարի դեպքում հաշվի է առնվում բացի գործող

[110] Let's not exaggerate: Southern Gas Corridor prospects to 2030, the Oxford Institute for Energy Studies, Simon Pirani, July 2018, https://a9w7k6q9.stackpathcdn.com/wpcms/wp-content/uploads/2018/07/Lets-not-exaggerate-Southern-Gas-Corridor-prospects-to-2030-NG-135.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

հանքավայրերից՝ միայն «Աբշերոն 1» նախագծի իրագործումը՝ տարեկան 1,5 մլրդ խ.մ, իսկ լավագույն սցենարի դեպքում նաև «Աբշերոն 2», «Կարաբաղ-Աշրաֆի», «ԱՉԳ» չուղեկցվող գազի նախագծերի իրականացումը՝ ընդհանուր 6,5 մլրդ խ.մ հզորությամբ, ինչպես նաև արդեն իսկ շահագործվող նախագծերի ծավալների որոշակի ավելացում է նախատեսում: **Մեր գնահատմամբ, հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ առկա խողովակաշարերի ծանրաբեռնվածությունը և դրանք կարճ ժամանակում ընդլայնելու տեխնիկական անհնարինությունը, ավելի իրատեսական է մինչև 2025 թվականը ԵՄ-ին լրացուցիչ տարեկան մինչև 5 մլրդ խ.մ գազի մատակարարումը (բացի արդեն իսկ ստանձնած 10 մլրդ խ.մ երկարաժամկետ պարտավորությունից):**

Ավելի երկարաժամկետ՝ մինչև 2030թ. կանխատեսման շրջանակներում դեպի Եվրոպա և Թուրքիա ադրբեջանական բնական գազի լրացուցիչ հասանելի մնացորդը գնահատվում է առավելագույնը 22 մլրդ խ.մ, իսկ վատագույն սցենարի դեպքում կանխատեսվում է, որ Ադրբեջանը կկարողանա միայն բավարարել երկարաժամկետ պայմանագրերով նախատեսված 16 մլրդ խ.մ գազի արդյունահանումը դեպի Եվրոպա և Թուրքիա՝ համապատասխանաբար 10 և 6 մլրդ խ. մ՝ առանց լրացուցիչ հասանելի մնացորդի: Հաշվի առնելով, որ հեղինակների նշած լավագույն սցենարի դեպքում Ադրբեջանը, ըստ էության, պետք է առավելագույն հզորությամբ շահագործի բոլոր առկա և կանխատեսվող հանքավայրերը, ինչպես նաև սահմանափակի սեփական սպառման աճը, այդ սցենարը քիչ հավանական ենք գնահատում, քանի որ այն կապված է հսկայական ներդրումների, տնտեսական կասկածելի արդյունավետության և մի շարք այլ հանգամանքների հետ: **Ավելի իրատեսական է, բացի առկա երկարաժամկետ պարտավորություններից (տարեկան 16 մլրդ խ.մ), ևս լրացուցիչ 5-10 մլրդ խ.մ ադրբեջանական գազի ապահովումը եվրոպական և թուրքական շուկաների համար՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:** Ընդ որում, դեռ հարց է, թե կոնկրետ ո՞ր շուկան կկլանի այդ լրացուցիչ ծավալը՝ թուրքակա՞ն, թե՞ եվրոպական. դա հիմնականում կախված կլինի աշխարհաքաղաքական գործոններից և տնտեսական նպատակահարմարությունից (1000 խ.մ գազի՝ դեպի Թուրքիա տրանսֆերի արժեքը մոտ 100 դոլարով ավելի պակաս է, քան դեպի ԵՄ):

Ադրբեջանում գազի արդյունահանումը և մատակարարման պարտավորությունները (տարեկան՝ մլրդ խ/մ)



Էներգետիկ հետազոտությունների Օքսֆորդի ինստիտուտ

[111]

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ համաձայն կանխատեսումների՝ **արդեն 2030-ականներին Ադրբեջանի գրեթե բոլոր շահագործվող գազի հանքավայրերը բնական կրճատման են գնալու:** Այսինքն՝ Ադրբեջանը սեփական ռեսուրսով կառուցված և կառուցվող խողովակաշարերի հետգնման համար շատ քիչ ժամանակ ունի, և նույնիսկ բնական գազի ներկայիս բարձր գների դեպքում արագ հետգնումը շատ բարդ է լինելու: Օրինակ, կանխատեսվում է, որ Շահ Դենիզ 1-ից բնական գազի տարեկան արդյունահանությունը 2030-ին կկրճատվի մինչև 4 մլրդ խ.մ, իսկ 2035-ին

[111] Let's not exaggerate: Southern Gas Corridor prospects to 2030, the Oxford Institute for Energy Studies, Simon Pirani, July 2018, https://a9w7k6q9.stackpathcdn.com/wpcms/wp-content/uploads/2018/07/Lets-not-exaggerate-Southern-Gas-Corridor-prospects-to-2030-NG-135.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

կդադարի: Շահ Դենիզ 2-ից արդյունահանությունը կսկսի կրճատվել 2030-ականներին՝ 2035-ին հասնելով տարեկան 6 մլրդ խ.մ ցուցանիշի[112]:

Այսինքն՝ **բոլոր իրատեսական սցենարների դեպքում կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանը բնական գազի սեփական ռեսուրսներով լավագույն դեպքում ԵՄ գազի մատակարարումները մինչև 2025-ը կարող է հասցնել տարեկան 15 մլրդ խ.մ-ի, իսկ մինչև 2030-ը՝ 20 մլրդ խ.մ-ի:** Իհարկե, ԵՄ-ի հետ կնքված հուշագրով նախատեսվող 20 մլրդ խ.մ ցուցանիշին 2027-ին հասնելու նպատակադրությունը անիրատեսական չէ, սակայն դա հնարավոր է կարճ ժամկետներում Տրանսադրիատիկ գազատարի ընդլայմնան, Բալկանյան երկրներում փոխկապակցող խողովակային ցանցի արագ ընդարձակման, միաժամանակ կա՛մ Թուրքիային մատակարարվող մասնաբաժնի կրճատման, կա՛մ բնական գազի արտաքին ռեսուրսի ներգրավման պարագայում: Միաժամանակ պետք է ընդգծել, որ **նույնիսկ տարեկան 20 մլրդ խ.մ գազ մատակարարելու դեպքում ԵՄ շուկայում ադրբեջանական գազի մասնաբաժինը կշարունակի մնալ ոչ այնքան մեծ՝ ԵՄ տարեկան սպառման (շուրջ 400 մլրդ խ.մ) առավելագույնը 5%-ը:** Փոխարենը ադրբեջանական գազի մասնաբաժինը շեշտակի կավելանա Իտալիայի և մի շարք արևելաեվրոպական երկրների համար, ինչը կմեծացնի Բաքվի քաղաքական ազդեցությունը ինչպես այդ տարածաշրջանի, այնպես էլ ընդհանուր առմամբ ԵՄ որոշումների կայացման գործընթացների վրա:

Ինչ վերաբերում է Հարավային գազային միջանցքի հզորության ընդլայնմանը մինչև տարեկան 64 մլրդ խ.մ, ինչը, ըստ էության, «Նաբուկկո» նախագծի վերակենդանացման գաղափարն է, ապա այս պարագայում ակնհայտ է, որ միայն Ադրբեջանական ռեսուրսի հաշվին հնարավոր չէ այս ծրագիրը կյանքի կոչել: Նախ, այս թիվը էապես գերազանցում է Հարավկովկասյան գազատարի առավելագույն թողունակությանը՝ տարեկան 23 մլրդ խ.մ, ինչպես նաև Տրանսանատոլիական գազատարի հզորությանը՝ 16 մլրդ խ.մ: Նույիսկ ՏԱՆԱՊ-ի ընդլայնումը մինչև տարեկան 32 մլրդ խ.մ հզորության, ինչը կապված է հսկայական ներդրումների հետ, փորձագետները քիչ հավանական են համարում, իսկ վերոհիշյալ 64 մլրդի համար, ըստ էության, անհրաժեշտ կլինի բոլորովին նոր խողովակաշար կառուցել: Բացի այդ, նույնիսկ այդպիսի խողովակաշարի առկայության պարագայում շատ ավելի կարևոր

[112] Let's not exaggerate: Southern Gas Corridor prospects to 2030, the Oxford Institute for Energy Studies, Simon Pirani, July 2018, https://a9w7k6q9.stackpathcdn.com/wpcms/wp-content/uploads/2018/07/Lets-not-exaggerate-Southern-Gas-Corridor-prospects-to-2030-NG-135.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

է այն բնական գազով ապահովելու հնարավորությունը, ուստի հարկավոր է ուսումնասիրել, թե որոնք կարող են լինել ՀԳՄ-ը ադրբեջանականից բացի՝ բնական գազի լրացուցիչ ծավալներով ապահովելու իրատեսական աղբյուրները:

Այսպես, հաշվի առնելով Ադրբեջանում բնական գազի նկատմամբ պահանջարկի շարունակական աճը, ինչպես նաև արտահանման միջազգային պարտավորությունները, Ադրբեջանը պարբերաբար ստիպված է լինում որոշակի գազ ներմուծել Ռուսաստանից և Թուրքմենստանից (Իրանի տարածքով սվոփային մատակարարումների տեսքով): «Լույս» հիմնադրամը դեռ 2019-ին հրապարակած վերլուծության մեջ մանրամասն անդրադարձել էր այլ աղբյուրներից ստացվող գազի հաշվին ՀԳՄ ընդլայմնան խոչընդոտներին՝ եզրակացնելով, որ այդ ժամանակվա իրողությունների պայմաններում ինչպես իրանական և ռուսական, այնպես էլ Կենտրոնական Ասիայի երկրների ռեսուրսների հաշվին ՀԳՄ ընդլայնումը քաղաքական և տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից քիչ հավանական է[113]: Այդ եզրակացության հիմքում ընկած էին գազի եվրոպական շուկայում այդ ժամանակ առկա և կանխատեսվող գները, ինչպես նաև տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը: Այս երկու հանգամանքները վերջին տարիներին էական փոփոխությունների են ենթարկվել, ուստի վերանայման կարիք ունեն նաև նախկինում արված եզրակացությունները:

Այսպես, դիտարկելով ՀԳՄ ընդլայնումը՝ տարածաշրջանի այլ երկրների ռեսուրսների հաշվին, մենք ուսումնասիրել էինք 3 հիմնական ուղղություն՝

- Ռուսաստան,
- Իրան,
- Կենտրոնական Ասիա (Թուրքմենստան, Ղազախստան, Ուզբեկստան):

Այն տնտեսական և աշխարհաքաղաքական խոչընդոտները, որոնք մի քանի տարի առաջ մատնանշել էինք՝ կապված ռուսական և իրանական գազի հետ, շարունակում են արդիական մնալ նաև այսօր: Այս երկրները, իհարկե, կարող են որոշակիորեն կոմպենսացնել Ադրբեջանի գազի պակասուրդը՝ սվոփային եղանակով և կամ այլ փոքրաքանակ մատակարարումների միջոցով, սակայն **Մոսկվայի և Թեհրանի կողմից ՀԳՄ միջոցով ԵՄ-ին ուղիղ գազ մատակարարելու հեռանկարը**

[113] Ադրբեջանական գազի արտահանման ծավալների սպասվող աճը որպես արտաքին քաղաքական ազդեցության գործիք. հնարավոր հետևանքները տարածաշրջանի և Հայաստանի համար, «Լույս» հիմնադրամ, 02.07.2019թ, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=91 (այցելվել է 05.12.2022թ.)

այսօր նույնքան անիրատեսական է (հիմնականում քաղաքական հանգամանքների բերումով), որքան 3 տարի առաջ: Ղազախստանն ու Ուզբեկստանը գազի համաշխարհային շուկայում շատ ավելի փոքր դերակատար են և, բացի այդ, ունեն երկարաժամկետ պարտավորություններ և խոր համագործակցություն՝ ինչպես ՌԴ-ի[114], այնպես էլ Չինաստանի հետ, ուստի վերջիններս նույնպես հազիվ թե լուրջ դերակատարում ունենան ՀԳՄ ընդլայնման գործում: **ՀԳՄ միջոցով դեպի ԵՄ գազի մատակարարման ամենաիրատեսական այլընտրանքային աղբյուրը թերևս Թուրքմենստանն է,** որն առանձին ուշադրության է արժանի:

Թուրքմենստանը տիրապետում է գազի համաշխարհային հաստատված պաշարների 7,2%-ին՝ 13 տրլն խ.մ, իսկ 2021-ին վերջինիս արդյունահանությունը, ըստ ԲՓ տվյալների, կազմել է շուրջ 80 մլրդ խ.մ՝ համաշխարհային արդյունահանության շուրջ 2%-ը[115]: Այս երկիրը, բացի ներքին սպառումից, արդյունահանվող գազի մեծ մասը ուղղում է դեպի չինական շուկա, մի մասը դեպի Ռուսաստան: Մինչ այժմ, Թուրքմենստանը Ադրբեջանին պարբերաբար որոշակի քանակությամբ գազ է մատակարարել միայն սվոփային եղանակով. Թուրքմենստանը որոշակի գազ է մատակարարում Իրանի հյուսիսարևելյան շրջաններ, փոխարենը Իրանը նույն քանակությամբ գազ է մատակարարում Ադրբեջանին: Ադրբեջանի ու Թուրքմենստանի միջև Կասպից ծովում սահմանագծի շուրջ երկար տարիներ առկա էր հակամարտություն, ինչը բարդացնում էր այս ոլորտում երկու երկրների համագործակցությունը:

44-օրյա պատերազմից և ՀԳՄ վերջին բաղադրիչի՝ Տրանսադրիատիկ գազատարի շահագործումից կարճ ժամանակ անց Ադրբեջանն ու Թուրքմենստանը փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին վիճելի «Դոստլուղ» (թարգմ.՝ «Բարեկամություն») հանքավայրի շահագործման վերաբերյալ[116]: Նավթի և բնական գազի այս հանքավայրը գտնվում է Կասպից ծովում՝ երկու երկրների

---

[114] Путин и Токаев на встрече обсуждали создание «тройственного газового союза» России, Казахстана и Узбекистана, «Ъ», 29.11.2022 https://www.kommersant.ru/doc/5693805 (այցելվել է 05.12.2022թ.)

[115] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[116] Азербайджан и Туркменистан подписали знаковое соглашение по каспийскому месторождению, «КАСПИЙСКИЙ ВЕСТНИК», Влад Кондратьев, 25 января, 2021, http://casp-geo.ru/azerbajdzhan-i-turkmenistan-podpisali-znakovoe-soglashenie-po-kaspijskomu-mestorozhdeniyu/ (այցելվել է 05.12.2022թ.)

ջրային սահմանին, և դրա շուրջ առկա հակամարտությունը տարիներ շարունակ խոչընդոտում էր ինչպես այդ հանքավայրի շահագործմանը, այնպես էլ առհասարակ Բաքու-Աշգաբատ համագործակցությանը էներգետիկ ոլորտում: Այժմ Ադրբեջանն ու Թուրքմենստանը պատրաստվում են համատեղ շահագործել «Դոստլուղ» հանքավայրը, ինչը կարող է խթանել գազի ոլորտում համագործակցության ընդլայնումը: **Այն փաստը, որ ինչպես ՀԳՄ ամբողջական շահագործումը, այնպես էլ Բաքու-Աշգաբատ հուշագրի ստորագրումը անմիջապես հաջորդեցին 44-օրյա պատերազմին, ընդգծում է մի կողմից՝ այդ իրադարձությունների փոխկապակցվածությունը, մյուս կողմից՝ դրանց աշխարհաքաղաքական ենթատեքստը:**

Արդեն 2021թ. նոյեմբերին Ադրբեջանը, Թուրքմենստանն ու Իրանը ստորագրեցին համաձայնագիր, համաձայն որի Թուրքմենստանը Իրանի տարածքով սվոփային եղանակով պետք է Ադրբեջանին մատակարարի տարեկան 1,5-2 մլրդ խ.մ գազ[117]: Սակայն որպես թուրքմենական գազը մեծ ծավալներով ՀԳՄ միջոցով ԵՄ հասցնելու հիմնական տարբերակ՝ դիտարկվում է Տրանսկասպյան գազատարի կառուցումը, որի շուրջ քննարկումներն ակտիվացան հատկապես Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին 2018թ. օգոստոսին ստորագրված կոնվենցիայի[118] և «Դոստլուղ» հանքավայրի շուրջ Բաքու-Աշգաբատ փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո:

Նախորդ վերլուծության շրջանակներում, հաշվի առնելով թուրքմենական գազի համար ասիական, մասնավորապես՝ չինական շուկայի ավելի մեծ գրավչությունը, Ադրբեջանի հետ առկա քաղաքական տարաձայնությունները, Եվրոպայում գազի ցածր գինը, ընդհանուր տարածաշրջանային աշխարհաքաղաքական պատկերը՝ թուրքմենական գազի մեծածավալ արտահանումը ԵՄ՝ ՀԳՄ-ի միջոցով, քիչ հավանական էինք համարել: Ընդ որում, այդպիսի տեսակետը գերակշռում էր նաև միջազգային փորձագիտական դաշտում, քանի որ թեկուզ զուտ տնտեսական հիմնավորվածության տեսանկյունից շատ ավելի էժան էր թուրքմենական գազի արտահանումը դեպի ԵՄ Ռուսաստանի տարածքով, քան ՀԳՄ միջոցով:

---

[117] Иран, Азербайджан и Туркменистан подписали соглашение о своповых поставках газа, INTERFAX.RU, 28 ноября 2021, https://www.interfax.ru/world/805405 (այցելվել է 05.12.2022թ.)
[118] Конвенция о правовом статусе Каспийского моря, 12 августа 2018 года, http://kremlin.ru/supplement/5328 (այցելվել է 05.12.2022թ.)

Դեպի ԵՄ և Թուրքիա թուրքմենական գազի մատակարարման արժեքի գնահատում		
	Եթե սահմանին 1000 խ.մ գազի արժեքը գնահատվի $80	Եթե սահմանին 1000 խ.մ գազի արժեքը գնահատվի $150
ՀԳՄ միջոցով դեպի Թուրքիա		
Գազի գինը Թուրքմենստանի սահմանին	80	150
Տրանսկասպյան գազատարով դեպի Ադրբեջան	27,52	27,52
Հարավկովկասյան գազատարով դեպի Թուրքիայի սահման	50	50
Տրանսանատոլիական գազատարով դեպի Թուրքիա	79	79
Ընդամենը	**236,52**	**306,52**
ՀԳՄ միջոցով դեպի Իտալիա		
Գազի գինը Թուրքմենստանի սահմանին	80	150
Տրանսկասպյան գազատարով դեպի Ադրբեջան	27,52	27,52
Հարավկովկասյան գազատարով դեպի Թուրքիայի սահման	50	50
Տրանսանատոլիական գազատարով մինչև Թրակիա	103	103
Տրանսադրիատիկ գազատարով մինչև Իտալիա	75	75
Ընդամենը	**335,52**	**405,52**
Թուրքմենական գազի արտահանումը դեպի Եվրոպա՝ Ռուսաստանի տարածքով		
Գազի գինը Թուրքմենստանի սահմանին	80	150
Տարանցումը Ուզբեկստանի տարածքով (200կմ)	7	7
Տարանցումը Ղազախստանի տարածքով (820կմ)	16.4	16.4
Տարանցումը Ռուսաստանի տարածքով (1100 կմ)	38,5	38,5
Տարանցումը Ուկրաինայի տարածքով (950 կմ)	30	30
Տարանցումը Սլովակիայի տարածքով	7	7
Ընդամենը	**178,9**	**248,9**

[119]

Սակայն այն, ինչ արդիական էր 1000 խ.մ գազի համար 80 կամ 150 դոլար արժեքի պարագայում, արդիական չէ գազի համաշխարհային շուկայում ներկայումս տիրող իրավիճակում, երբ Եվրոպայում գազի գները պարբերաբար հատում են 2000 դոլարի սահմանագիծը: Այսինքն, եթե դիտարկենք վերոհիշյալ աղյուսակը, ապա, եթե սահմանին 1000 խ.մ գազի $150 արժեքի պարագայում դեպի ԵՄ թուրքմենական գազը հասցնելու համար նախատեսվող զուտ տրանսպորտային ծախսերը կազմում էին գազի վերջնական գնի շուրջ 60%-ը, ապա $1000 արժեքի պարագայում տրանսպորտային նման ծախսերը կկազմեն գազի վերջնական գնի ընդամենը 25%-ը:

Բացի այդ, ինչպես նշվեց, ներկայումս բոլորովին այլ է աշխարհաքաղաքական իրավիճակը: Եթե վերոհիշյալ հաշվարկի պարագայում թուրքմենական գազի տարանցումը դեպի ԵՄ՝ ՌԴ տարածքով, տնտեսապես ավելի շահավետ էր, ապա

[119] Let's not exaggerate: Southern Gas Corridor prospects to 2030, the Oxford Institute for Energy Studies, Simon Pirani, July 2018, https://a9w7k6q9.stackpathcdn.com/wpcms/wp-content/uploads/2018/07/Lets-not-exaggerate-Southern-Gas-Corridor-prospects-to-2030-NG-135.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

այսօրվա իրավիճակում դա ուղղակի անհնարին է: Հաշվի առնելով ՌԴ-ից սեփական գազի արտահանման կրճատումը, թուրքմենական գազի համար ռուսական շուկան այժմ նույնպես պակաս գրավիչ է: Միաժամանակ, Ռուսաստանը գազի և նավթի իր հիմնական արտահանումը եվրոպական շուկայից ուղղում է դեպի ասիական շուկա՝ մեծացնելով այնտեղ մրցակցությունը թուրքմենական գազի համար:

Պատահական չէ, որ Թուրքմենստանը վերջին շրջանում ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի ԵՄ գազի մատակարարման գաղափարի նկատմամբ: Օրինակ, «Թուրքմենգազ» պետական կոնցեռնի փոխնախագահ Աթամիրաթ Չարիևը դեռևս Ուկրաինայում ակտիվ ռազմական գործողությունների մեկնարկից առաջ՝ 2022թ. փետրվարին հայտարարում էր, որ Թուրքմենստանը ունի բոլոր անհրաժեշտ տեխնիկական հնարավորություններն ու ռեսուրսները՝ դեպի Արևմուտք գազ մատակարարելու համար. ընդ որում, վերջինս ընդգծում էր այս տեսանկյունից Տրանսկասպյան գազատարի նախագծի իրագործման կարևորությունը[120]: Ադրբեջանցի փորձագետների համոզմամբ, Թուրքմենական գազը հնարավոր է ուղղել դեպի եվրոպական շուկա ինչպես Իրանի տարածքով սվոփային մատակարարումների ընդլայնման միջոցով, այնպես էլ Տրանսկասպյան գազատարի կառուցումից հետո[121]:

Փաստորեն, առկա է թուրքմենական գազը ՀԳՄ միջոցով դեպի ԵՄ մատակարարելու մի քանի սցենար՝

- Կասպից ծովում «Պետրոնասի» կողմից շահագործվող թուրքմենական հատվածի միացում ադրբեջանական խողովակաշարին: Սա ենթադրում է 78 կմ երկարությամբ տարեկան մինչև 10 մլրդ խ.մ հզորությամբ խողովակաշարի կառուցում, որը, ըստ տարբեր գնահատականների, կարժենա 300-500 մլն դոլար և հնարավոր է կառուցել կարճաժամկետ հեռանկարում՝ 4-6 ամսում:
- Թուրքմենստան-Իրան-Ադրբեջան սվոփային մատակարարումների ծավալի ավելացում. ներկայումս այն կազմում է տարեկան մինչև 2 մլրդ խ.մ, սակայն ըստ փորձագիտական գնահատականների՝ հնարավոր է այդ ծավալն ավելացնել ևս 2-3 մլրդ խորանարդ մետրով:

[120] Turkmenistan Says It Can Supply Natural Gas to Europe, BUSINESS TURKMENISTAN, 05.02.2022 https://business.com.tm/post/8207/turkmenistan-says-it-can-supply-natural-gas-to-europe (այցելվել է 05.12.2022թ.)
[121] EU and Azerbaijan agreed to expand Southern Gas Corridor,"Caucasus Watch", 07 FEB 2022, https://caucasuswatch.de/news/4848.html (այցելվել է 05.12.2022թ.)

- Թուրքմենստան-Ադրբեջան (ափից ափ) խոշոր տրամաչափի խողովակաշարի կառուցում Կասպից ծովի հատակով, որը հնարավորություն կունենա ավելի մեծ ծավալի գազ տեղափոխել դեպի Ադրբեջան:

Կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում թերևս իրատեսական է միայն առաջին սցենարի իրականացումը, մինչդեռ Իրանի տարածքով սվոփային մատակարարումների ընդլայնումը կարող է բախվել Իրան-Ադրբեջան քաղաքական տարաձայնություններով պայմանավորված խոչընդոտներին, իսկ խոշոր տրամաչափի խողովակաշարի շինարարությունը պահանջում է ինչպես բազմամիլիարդանոց ներդրումներ, այնպես էլ երկարաժամկետ շինարարություն[122]: Միաժամանակ, պետք է նշել, որ այնուամենայնիվ, առաջին սցենարի իրականացումը նույնպես կապված է մի շարք քաղաքական հարցերի հետ: Չնայած Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին 2018թ. պայմանագիրը դրա իրագործման համար որոշակի նախադրյալներ է ստեղծում, սակայն քաղաքական կոնսենսուսի բացակայության դեպքում ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Իրանը, հենվելով բնապահպանական անվտանգության վերաբերյալ պայմանագրի դրույթների վրա, կարող են խոչընդոտել Կասպից ծովում թեկուզ սահմանափակ հզորությամբ խողովակաշարի կառուցումը[123]:

Առհասարակ, ՀԳՄ էական ընդլայնումը Կենտրոնական Ասիայից ստացվող գազի մատակարարումների հաշվին մեծապես կապված է նաև աշխարհաքաղաքական իրողությունների հետ: Այսինքն՝ հնարավոր չէ բացառել վերոհիշյալ սցենարներից որևէ մեկի իրականացումը՝ հենվելով զուտ տնտեսական բաղադրիչի վրա, քանի որ քաղաքական նպատակահարմարությունը կարող է կտրուկ փոխել այդ հաշվարկների տրամաբանությունը: Այս տեսանկյունից, շատ բան կախված է այսպես կոչված «Թյուրքական նախագծի» հետագա ընթացքից, այսինքն՝ նրանից, թե թյուրքական աշխարհը Կասպից ծովից արևելք և արևմուտք մինչև որ մակարդակը կհասցնի թուրքալեզու երկրների ինտեգրումն ու համագործակցությունը: Եթե «Թյուրքական երկրների կազմակերպության» շրջանակներում հետագա ինտեգրումը հանգեցնի նոր աշխարհաքաղաքական միավորի ձևավորման, ապա

[122] Removing Russia from the European gas balance: A major role for Caspian gas, By John Roberts and Julian Bowden, March 20, 2022 https://www.atlanticcouncil.org/blogs/energysource/a-major-role-for-caspian-gas/ (այցելվել է 05.12.2022թ.)
[123] Aliyev discussed energy supplies with Italian Prime Minister, "Caucasus Watch", 12 MAR 2022, https://caucasuswatch.de/news/5017.html (այցելվել է 05.12.2022թ.)

պայմանական թյուրքական գործոնը Եվրոպայի գազի շուկայում կարող է կարևոր դերակատարում ունենալ:

Մասնավորապես, Կենտրոնական Ասիայի թուրքալեզու երկրներում և Ադրբեջանում միասին կենտրոնացված է բնական գազի հաստատված համաշխարհային պաշարների շուրջ 10%-ը կամ 19,2 տրլն խ.մ-ը: Այս երկրները միասին արդյունահանում են համաշխարհային արդյունահանման շուրջ 5%-ը կամ տարեկան գրեթե 200 մլրդ խ.մ գազ[124]: Սա մի կողմից՝ վկայում է, որ առկա ռեսուրսներն ավելի շատ են, քան ներկայիս արդյունահանությունը, հետևաբար կա զարգացման մեծ ներուժ, մյուս կողմից՝ ընդգծում է, թե պայմանական «Թյուրքական աշխարհը» ինչպիսի ազդեցիկ դերակատար կարող է դառնալ գազի համաշխարհային շուկայում, եթե այն հանդես գա որպես աշխարհաքաղաքական ինքնուրույն դերակատար: Նույնը կարելի է ասել նավթի պարագայում, քանի որ արդեն իսկ Կենտրոնական Ասիայի որոշ երկրներ ակտիվորեն վերաուղղում են նախկինում ՌԴ տարածքով դեպի ԵՄ առաքվող նավթի զգալի մասը դեպի ադրբեջանական տարանցում[125]: Ընդ որում, վերոհիշյալ սցենարի պարագայում կենտրոնական դերակատարություն կստանձնի Թուրքիան՝ որպես կասպյան էներգակիրները դեպի ԵՄ տեղափոխող կարևոր հանգույց, իսկ Ադրբեջանի աշխարհաքաղաքական կշիռը էապես կմեծանա, քանի որ նույն դերակատարությունը վերջինս կստանձնի Կասպից ծովի արևելքն արևմուտքի հետ կապելու տեսանկյունից:

Պատահական չէ, որ **Ուկրաինական ճգնաժամի համատեքստում Բաքուն աննախադեպ ակտիվություն է դրսևորում Կենտրոնական Ասիայի երկրների հետ շփումներում:** Թուրքիայի և Ադրբեջանի այս քաղաքականությունը լիովին տեղավորվում է Արևմուտքի աշխարհաքաղաքական շահերի շրջանակներում, հետևաբար խրախուսվում է վերջինիս կողմից: Այս տեսանկյունից հատկապես մեծ շահագրգռվածություն են ցուցաբերում բրիտանական և ամերիկյան էներգետիկ

[124] "BP Statistical Review of World Energy 2022" | 71st edition, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2022-full-report.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[125] Azerbaijan and European Union Ink Deal on Strategic Partnership in Energy Publication: Eurasia Daily Monitor Volume: 19 Issue: 120, By: Vasif Huseynov August 8, 2022, https://jamestown.org/program/azerbaijan-and-european-union-ink-deal-on-strategic-partnership-in-energy/ (այցելվել է 05.12.2022թ.), Ղազախստանը մտադիր է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարով 1,5 մլն տոննա նավթ առաքել, 10.11.2022 https://news.am/arm/news/729539.html (այցելվել է 05.12.2022թ.)

հսկաները, որոնք, բացի քաղաքական շահերից, ունեն նաև էական տնտեսական ներգրավվածություն թյուրքական աշխարհի էներգետիկ կառուցվածքում[126]:

Ինչպես արդեն նշվեց, բացի բնական գազի նոր աղբյուրների հայթայթումից, ՀԳՄ ընդլայնման համար անհրաժեշտ է նաև առկա խողովակաշարերի թողունակության մեծացում, քանի որ ինչպես Տրանսանատոլիական, այնպես էլ Տրանսադրիատիկ գազատարերը այսօր շահագործվում են առավելագույն ծանրաբեռնվածությամբ: Ըստ Տրանսանատոլիական խողովակաշարի կոնսորցիումի տնօրեն Սալթուկ Դյուզեյոլի՝ 2022-ին այդ խողովակաշարով նախատեսվում է տեղափոխել 16,2 մլրդ խ.մ գազ, այսինքն՝ այն ներկայումս գերծանրաբեռնված է: Ըստ նրա՝ խողովակաշարի հզորությունը կրկնապատկելու համար կարող է անհրաժեշտ լինել 4-5 տարի: Առաջին փուլում լրացուցիչ կոմպրեսորային կայանների կառուցմամբ հնարավոր է խողովակաշարի թողունակությունը հասցնել մինչև 24 մլրդ խ.մ-ի[127]:

Դեռևս 2022թ. հունիսին Ադրբեջանի նախագահը ընդգծում էր, որ կարճ ժամանակում հնարավոր չէ էականորեն ավելացնել դեպի ԵՄ մատակարարվող գազի ծավալները: Ընդ որում, նա նշում էր, որ հարկավոր է ընդլայնել ՀԳՄ բոլոր 3 բաղադրիչները, իսկ նման ներդրումների համար Ադրբեջանին հարկավոր են երկարաժամկետ պայմանագրեր[128]: Ադրբեջանի փոխարտգործնախարար Էլնուր Մամեդովը բրիտանական «Ֆայնենշլ Թայմս»-ին տված հարցազրույցում ընդգծում է, որ ՀԳՄ ընդլայնման համար անհրաժեշտ է միլիարդավոր դոլարների ներդրում, ուստի պաշտոնական Բրյուսելը պետք է երաշխավորի, որ հետագայում չի հրաժարվի

---

[126] Aliyev's Visit to Uzbekistan: Expanding Connectivity Between Caucasus and Central Asia Publication: Eurasia Daily Monitor Volume: 19 Issue: 113 By: Rusif Huseynov July 26, 2022 https://jamestown.org/program/aliyevs-visit-to-uzbekistan-expanding-connectivity-between-caucasus-and-central-asia/ (այցելվել է 05.12.2022թ.), First Trilateral Meeting of the Ministers of Türkiye, Azerbaijan and Kazakhstan Publication: Eurasia Daily Monitor Volume: 19 Issue: 107 By: Naghi Ahmadov July 18, 2022 https://jamestown.org/program/first-trilateral-meeting-of-the-ministers-of-turkiye-azerbaijan-and-kazakhstan/ (այցելվել է 05.12.2022թ.), Алиев и Токаев создают новую экономику Евразии, Ильгар Гусейнов, отдел экономики 25 августа 2022, https://haqqin.az/news/257894 (այցելվել է 05.12.2022թ.)

[127] Плохая новость для европейцев: увеличения азербайджанского газа придется ждать 5 лет, Эльнур Мамедов, отдел экономики, 31 марта 2022, https://haqqin.az/news/240519 (այցելվել է 05.12.2022թ.)

[128] Президент Ильхам Алиев принял участие в церемонии официального открытия 27-й Международной выставки «Нефть и газ Каспия» в рамках Бакинской энергетической недели, 01.06.2022 https://azertag.az/ru/xeber/Prezident_Ilham_Aliev_prinyal_uchastie_v_ceremonii_oficialnogo_otkrytiya_27_i_Mezhdunarodnoi_vystavki_Neft_i_gaz_Kaspiya_v_ramkah_Bakinskoi_energeticheskoi_nedeli_OBNOVLENO_2_VIDEO-2159207 (այցելվել է 05.12.2022թ.)

ադրբեջանական գազից, երբ կրկին հասանելի դառնան ռուսական էժան էներգակիրները[129]: Այսինքն՝ ակնհայտ է, որ ՀԳՄ հետագա ընդլայնումը այսօր էլ կախված է առաջին հերթին քաղաքական կամքից և աշխարհաքաղաքական գործոններից, այլ ոչ թե զուտ տնտեսական բաղադրիչից, թեև այն նույնպես այս պահին նպաստավոր է: Վերլուծության հաջորդ հատվածում փորձենք անդրադառնալ էներգետիկ ոլորտում ԵՄ-Ադրբեջան համագործակցության քաղաքական ասպեկտներին:

3. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՄ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Վերլուծության նախորդ հատվածներում մանրամասնորեն անդրադարձանք ուկրաինական հակամարտության հետևանքով Եվրոպայուսմ ստեղծված էներգետիկ ճգնաժամին, ինչպես նաև փորձեցինք գնահատել կասպյան գազի գործոնը՝ որպես Եվրոպայում էներգետիկ ճգնաժամի հաղթահարման հնարավոր ուղղություն: Այդ շրջանակներում հիմնականում ներկայացրինք էներգետիկ ոլորտում ԵՄ-Ադրբեջան համագործակցության թվային ցուցանիշները և տնտեսական բաղադրիչը, որի արդյունքում հանգեցինք այն եզրակացությանը, որ Բրյուսելի և Բաքվի միջև բնական գազի ոլորտում համագործակցության մեջ գերակշռում է քաղաքական տարրը, առանց որի ուսումնասիրության հետազոտությունը չի կարող լիարժեք լինել: Ուստի, վերլուծության այս հատվածում փորձել ենք դիտարկել էներգետիկ ոլորտում ԵՄ-Ադրբեջան համագործակցության քաղաքական ասպեկտները և հասկանալ դրանց կարևորությունը՝ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների և Հայաստանի անվտանգության տեսանկյունից:

3.1. Էներգետիկ ոլորտում ԵՄ-Ադրբեջան համագործակցության հիմնական միտումները 44-օրյա պատերազմից հետո և ազդեցությունը Հայաստան-Ադրբեջան «խաղաղության» գործընթացում ԵՄ միջնորդական ջանքերի վրա

Ինչպես կանխատեսում էինք դեռևս 2019-ին, ԵՄ-Ադրբեջան հարաբերություններում էներգակիրների՝ առաջին հերթին բնական գազի գործոնը մեծ կարևորություն ձեռք բերեց Հարավային գազային միջանցքի ամբողջական շահագործումից անմիջապես հետո: Ընդ որում, եթե այդ նախագիծը դեռ

[129] Баку хочет миллиарды долларов и твердые гарантии от Европы, Илькин Шафиев, 4 ноября 2022 https://haqqin.az/news/265014 (այցելվել է 05.12.2022թ.)

իրականացման փուլում ԵՄ կողմից համեմատաբար փոքր ուշադրության էր արժանացել և ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովման հարցում ՀԳՄ-ը Բրյուսելի կողմից չէր դիտարկվում որպես առաջնահերթություն՝ հաշվի առնելով ծրագրի մշուշոտ տնտեսական բաղադրիչը, ապա ուկրաինական հակամարտության արդյունքում ԵՄ-ում ստեղծված էներգետիկ ճգնաժամը կտրուկ փոխեց ադրբեջանական նախագծի նկատմամբ ինչպես ԵՄ առանձին երկրների, այնպես էլ պաշտոնական Բրյուսելի վերաբերմունքը:

Ադրբեջանն ավանդաբար օգտագործում է էներգակիրների վաճառքից ստացվող հսկայական եկամուտները, ինչպես նաև զուտ էներգետիկ ոլորտում համագործակցության փաստը՝ որոշ եվրոպական երկրների հետ հարաբերություններում ավելի նպաստավոր քաղաքական դիրքավորում ստանալու նպատակով: Ինչպես և կանխատեսելի էր, վերջին տարիներին Ադրբեջանի ազդեցությունը հատկապես մեծացավ այն երկրներում, որոնք հանդիսանում են ադրբեջանական էներգակիրների անմիջական կամ հեռանկարային շահառուներ: Օրինակ, **ուշագրավ է, որ ադրբեջանական գազի և նավթի հիմնական շահառուն՝ Իտալիան վերջիններից էր, որ վավերացրեց ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, այն էլ 44-օրյա պատերազմից հետո միայն՝ 2020թ. դեկտեմբերին**[130]: Հարկ է հիշատակել նաև իտալացիների որոշ քաղաքական ռևերանսները՝ ուղղված Բաքվին, 44-օրյա պատերազմից անմիջապես հետո. օրինակ՝ իտալական և ադրբեջանական մամուլը պատերազմից կարճ ժամանակ անց ակտիվորեն շրջանառում էր տեղեկություն, թե իբր Իտալիան Ադրբեջանին հրավիրել է մասնակցելու առաջիկա G20 գագաթնաժողովին[131], թեև հետագայում Ադրբեջանը միջոցառմանը այդպես էլ չմասնակցեց:

Արդեն ուկրաինական խորացող ճգնաժամի համատեքստում Արևմուտքի՝ մասնավորապես ադրբեջանական գազի հիմնական տնտեսական և քաղաքական շահառուներ՝ համապատասխանաբար Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի բարյացակամ

---

[130] Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part; Ratification Details, official website of the Council of the EU and the European Council, https://www.consilium.europa.eu/en/documents-publications/treaties-agreements/agreement/?id=2017024&DocLanguage=en (այցելվել է 05.12.2022թ.)

[131] "Italy and the dubious honor of chairing the G20" 11 JANUARY 2021, http://www.italianinsider.it/?q=node/9702 (այցելվել է 05.12.2022թ.), Azerbaijan invited to G20 summit, January 12, 2021, https://report.az/en/finance/38-countries-have-been-invited-from-azerbaijan-to-chad-from-denmark-to-laos-from-sweden-to-zimbabwe/ (այցելվել է 05.12.2022թ.)

վերաբերմունքը Ադրբեջանի նկատմամբ ավելի բաց և հրապարակային դարձավ: Այս տեսանկյունից ուշագրավ են ամերիկացի և բրիտանացի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները 2022թ. փետրվարին՝ Հարավային գազային միջանցքի խորհրդատվական խորհրդի 8-րդ նախարարական հանդիպման ընթացքում: Օրինակ, ԱՄՆ պետդեպարտամենտի գլոբալ էներգետիկ անվտանգության գծով ավագ խորհրդական Ամոս Հոխշտեյնը նշում էր, որ «Միացյալ Նահանգները գնահատում է Ադրբեջանի նշանակալի ներդրումը Հարավային գազային միջանցքի միջոցով եվրոպական էներգետիկայի դիվերսիֆիկացման գործում»: Միացյալ Թագավորության արտաքին գործերի, համագործակցության և զարգացման գրասենյակի Եվրոպայի հարցերով պետնախարար Քրիս Հիթոն-Հարիսն ընդգծում էր, որ «Այս միջանցքը կայուն և հուսալի մատակարարումներ է ապահովում Վրաստանի, Թուրքիայի և Եվրոպայի գործընկերների համար»:[132]

Ընդ որում, **կասպյան էներգակիրների մատակարարումը Եվրոպային՝ շրջանցելով Ռուսաստանը, ԱՄՆ-ում միշտ վայելել է ինչպես դեմոկրատների, այնպես էլ հանրապետականների աջակցությունը, և այդ նախագիծը Վաշինգտոնի համար ռազմավարական կարևորություն ունի:** Օրինակ, երբ դեռ ԱՄՆ ներկայիս նախագահ Բայդենը առաջնորդում էր ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, այն հանդես էր գալիս գաղափարի միանշանակ պաշտպանությամբ[133]:

Ադրբեջանական էներգակիրների նկատմամբ ԵՄ մեծ հետաքրքրությունը հանգեցրեց նրան, որ Բրյուսելը բավական պասիվ դիրքորոշում որդեգրեց ոչ միայն 44-օրյա պատերազմի ընթացքում, այլև դրանից հետո՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական շարունակական ագրեսիայի պայմաններում: Եթե նախորդ տասնամյակում Ադրբեջանում մարդու, ազգային փոքրամասնությունների, մամուլի իրավունքներն ու ազատությունները ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների անկյունաքարային բաղադրիչներն էին, ապա վերջին տարիներին նկատելի է, որ այդ հարցերը աստիճանաբար մղվում են երկրորդ պլան: Նաև այս համատեքստում պետք

---

[132] 8th Ministerial Meeting of Southern Gas Corridor Advisory Council features plenary sessions on expansion of project and energy transition; AZERTAC, Baku, 4 February 2022 https://azertag.az/en/xeber/8th_Ministerial_Meeting_of_Southern_Gas_Corridor_Advisory_Council_features_plenary_sessions_on_expansion_of_project_and_energy_transition-2001386 (այցելվել է 05.12.2022թ.)

[133] Rapid response: The Southern Gas Corridor opens today; By Richard L. Morningstar, Matthew Bryza, Neil Robert Brown, and Brenda Shaffer, December 31, 2020 https://www.atlanticcouncil.org/blogs/energysource/rapid-response-the-southern-gas-corridor-opens-today/ (այցելվել է 05.12.2022թ.)

է դիտարկել ԵՄ աստիճանաբար դեգրադացվող դիրքորոշումը ԼՂ հայ բնակչության իրավունքների և ազատությունների, մասնավորապես՝ ինքնորոշման անքակտելի իրավունքի հարցում:

Ըստ էության, վերջին տարիներին Բաքու-Բրյուսել հարաբերությունների օրակարգի վերաբերյալ ԵՄ դիրքորոշման մեջ ավելի գերակշռող է դարձել ռեալ պոլիտիկի գործոնը, իսկ **Հարավային Կովկասում ինչպես հավաքական Արևմուտքի, այնպես էլ զուտ ԵՄ-ի շահերը խարսխվում են երեք հիմնական նպատակների վրա՝**

- **ապահովել կասպյան էներգակիրների անվտանգ տեղափոխումը դեպի Եվրոպա՝ շրջանցելով Ռուսաստանը,**
- **Հարավային Կովկասում ձևավորել այնպիսի աշխարհաքաղաքական միջավայր, որը տարածաշրջանից աստիճանաբար դուրս կմղի Ռուսաստանի ռազմական, տնտեսական և քաղաքական ազդեցությունը,**
- **խոչընդոտել Հարավային Կովկասում Իրան-ՌԴ ռազմաքաղաքական առանցքի ձևավորումը և Իրանի դերակատարության մեծացումը:**

Այս նպատակներին հասնելու համար Արևմուտքը պատրաստ է աչք փակել տարածաշրջանում Ադրբեջանի և Թուրքիայի ագրեսիվ քաղաքականության, այդ երկրներում մարդու իրավունքների անմխիթար վիճակի, անգամ հարևան ժողովրդների նկատմամբ վերջիններիս ցեղասպանական հակումների նկատմամբ: Այս քաղաքականության բարձրակետը դարձավ սույն թվականի հուլիսին Բաքվում ԵՄ և Ադրբեջանի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագիրը՝ էներգետիկ ոլորտում համագործակցության վերաբերյալ: Ոգևորված Եվրոպայում էներգետիկ ճգնաժամի համատեքստում Ադրբեջանից լրացուցիչ գազ ներմուծելու հեռանկարով՝ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը Բաքվում հայտարարեց. «Այսօր, փոխըմբռնման այս նոր հուշագրով, մենք էներգետիկ համագործակցության նոր էջ ենք բացում Ադրբեջանի հետ, որն առանցքային գործընկեր է ռուսական վառելիքից ազատվելու մեր ջանքերում»[134]:

[134] EU and Azerbaijan enhance bilateral relations, including energy cooperation; European Commission, Press release, Brussels, 18 July 2022 https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_22_4550 (այցելվել է 05.12.2022թ.)



Ուշագրավ է, որ այցի շրջանակներում Եվրահանձնաժողովի նախագահը միայն հպանցիկ անդրադարձ կատարեց Ադրբեջանում մարդու իրավունքների խնդրին, նշելով, որ «Ադրբեջանի ողջ ներուժն օգտագործելու համար կարևոր է ստեղծել ներդրողների վստահության համար անհրաժեշտ պայմաններ», և որ «սա ներառում է քաղաքացիական հասարակության ավելի մեծ ներգրավվածություն և ազատ ու անկախ լրատվամիջոցներ»[135]: Անշուշտ, սրանք այն գնահատականները չեն, որոնք պաշտոնական Բրյուսելը պարբերաբար հնչեցնում է այլ ավտորիտար երկրների իշխանությունների հետ շփումներում, ընդ որում, այս գնահատականները նույնիսկ համեմատելի չէն նախկինում ԵՄ տարբեր պաշտոնյաների կողմից Ադրբեջանի հասցեին հնչեցվող սուր քննադատությունների հետ[136]:

[135] What the EU's new gas deal with Azerbaijan could mean for Europe's energy security, Gubad Ibadoghlu, August 3rd, 2022 https://blogs.lse.ac.uk/europpblog/2022/08/03/what-the-eus-new-gas-deal-with-azerbaijan-could-mean-for-europes-energy-security/ (այցելվել է 05.12.2022թ.)

[136] European parliament calls for investigation into 'Azerbaijani Laundromat'; Jennifer Rankin in Brussels, Wed 13 Sep 2017 https://www.theguardian.com/world/2017/sep/13/european-parliament-calls-for-investigation-into-azerbaijani-laundromat (այցելվել է 05.12.2022թ.)

ԵՄ այս մոտեցումը օրինաչափ է, եթե հարցը դիտարկում ենք տնտեսական և աշխարհաքաղաքական շահի համատեքստում: **Այսպես, եթե միայն 2022թ. առաջի կիսամյակի ընթացքում ԵՄ-ն միայն Ադրբեջանից ներմուծված գազի համար վճարել է շուրջ 5 մլրդ եվրո[137], ապա, օրինակ՝ Հայաստանի հետ ԵՄ ամբողջ ապրանքաշրջանառությունը նույն ժամանակահատվածում չի հատել 1 մլրդ դոլարի սահմանը,** իսկ Հայաստանից արտահանումը կազմել է ընդամենը շուրջ 400 մլն դոլար[138], ինչը ավելի քան տասն անգամ զիջում է Ադրբեջանից միայն բնական գազի արտահանման ցուցանիշին: Պատահական չէ, որ 2022թ. **սեպտեմբերին Ադրբեջանի հերթական ագրեսիայից հետո Եվրոպական միության արտաքին հարաբերությունների և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ջոզեպ Բորելը շտապեց հայտարարել, որ ԵՄ-ն չի դիտարկում Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, այդ թվում՝ գազային գործարքի չեղարկումը կամ սառեցումը**՝ ընդգծելով, թե իբրև պայմանագիրը ստորագրելիս ԵՄ-ն Ադրբեջանին որևէ քաղաքական զիջում չի արել[139]:

Ավելին, ԵՄ առաջատար տնտեսությունը՝ Գերմանիան, ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում կտրուկ ավելացրել է ներմուծումը (հիմնականում՝ էներգակիրների) մերձկասպյան երկրներից: 2022թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Գերմանիայի ներմուծումն Ադրբեջանից ավելացել է շուրջ 3,5 անգամ՝ հասնելով գրեթե 1 մլրդ եվրոյի, իսկ ներմուծումը Ղազախստանից կրկնապատկվել է՝ հասնելով 3 մլրդ եվրոյի[140]:

Անդրադառնալով ԵՄ քաղաքականության աշխարհաքաղաքական բաղադրիչին, պետք է նշել, որ Արևմուտքը Ադրբեջանին դիտարկում է որպես առանցքային գործընկեր՝ Հարավային Կովկասում ռուսական ներկայությունը սահմանափակելու և Իրանի ազդեցությունը զսպելու տեսանկյունից: Հայ-ադրբեջանական սահմանային հակամարտությունը Բրյուսելի և Վաշինգտոնի կողմից ակտիվորեն օգտագործվում է մի կողմից՝ տարածաշրջանում դիվանագիտական

---

[137] Страны ЕС в январе-июне потратили около 5 млрд евро азербайджанский газ, 19 октября, 2022 https://minval.az/news/124283497 (այցելվել է 05.12.2022թ.)

[138] ՀՀ արտաքին և փոխադարձ առևտուրն ըստ երկրների խմբերի (2021-2022թթ. I կիսամյակ), ՀՀ արտաքին առևտուրն ըստ երկրների, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByCountries (այցելվել է 05.12.2022թ.)

[139] Евросоюз не рассматривает санкции против Азербайджана – Боррель, Turan/Баку/ 05.10.22 https://www.turan.az/ext/news/2022/10/free/politics_news/ru/10174.htm (այցելվել է 05.12.2022թ.)

[140] Германия делает ставку на Азербайджан, 17 августа 2022 https://haqqin.az/news/257055 (այցելվել է 05.12.2022թ.)

ներգրավվածությունը մեծացնելու, մյուս կողմից՝ Մոսկվայի առաջնորդությունը կասկածի տակ դնելու նպատակով: Ինչ վերաբերում է արցախյան հակամարտությանը, ապա դրա արագ կարգավորումը, որը կհանգեցնի ռուսական խաղաղապահ ուժերի հեռացման, միայն համընկնում է տարածաշրջանի վերաբերյալ Արևմուտքի աշխարհաքաղաքական պատկերացումներին:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ **Արցախի հարցի այնպիսի կարգավորումը, որը հիմքեր կստեղծի ռուսական խաղաղապահ առաքելության գործունեության ժամկետի երկարացման համար, չի բխում Արևմուտքի շահերից:** Այս իմաստով, Արցախի հետագա կարգավիճակը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում, հնարավորության դեպքում նաև Արևմուտքի կողմից Արցախի ժողովրդին տրվող որոշ անվտանգային երաշխիքներով, Բրյուսելի համար կարող է դիտարկվել որպես հակամարտության ցանկալի հանգուցալուծում: Միաժամանակ, **Բրյուսելի համար խիստ անցանկալի է նաև հակամարտության վերսկսումը այնպիսի մասշտաբներով, որը կարող է սպառնալիք ստեղծել Ադրբեջանից դեպի ԵՄ անցնող էներգետիկ ենթակառուցվածքների համար:**

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ կարող ենք եզրակացնել, որ հայ-ադրբեջանական հարաբերություններում ԵՄ միջնորդական ջանքերը չեն կարող անտեսել տարածաշրջանում ԵՄ տնտեսական և աշխարհաքաղաքական շահերը: **Ամեն կերպ ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելու ցանկությունը և Ադրբեջանի հետ վերջին տարիներին մեծացող էներգետիկ համագործակցությունը ԵՄ-ին դարձնում են այս բանակցությունների շահագրգիռ մասնակից**, ինչը ենթադրում է, որ Բրյուսելը փորձելու է դրանցում առաջին հերթին սպասարկել սեփական շահը: Ընդ որում, **որքան մեծանան ԵՄ ակնկալիքներն Ադրբեջանից էներգակիրների մատակարարման հարցում, այնքան միջնորդության նժարը թեքվելու է դեպի ադրբեջանական շահերի տիրույթ:**

Սա ամենևին չի խանգարում, որպեսզի ԵՄ և անդամ երկրների որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում հանդես գան երբեմն հայ հանրության համար ականջահաճո հայտարարություններով, անգամ Ադրբեջանի հասցեին որոշակի քննադատութամբ: Այս գործիքակազմը սովորաբար ԵՄ կողմից օգտագործվում է որպես փափուկ ուժ՝ Բաքվի նկատմամբ քաղաքական ճնշման միջոցով Ադրբեջանի հետ համագործակցության այլ ոլորտներում որոշակի զիջումների հասնելու նպատակով: Պատահական չէ, որ այդ հայտարարությունները սովորաբար սահմանափակվում են քաղաքական գնահատականներով և երբեք չեն հանգեցնում ո՛չ ռազմական, ո՛չ էլ տնտեսական գործիքակազմի, օրինակ՝ պատժամիջոցների կիրառման:

Նաև այս է պատճառը, որ **Բաքուն, մերժելով, օրինակ՝ ԵԱՀԿ Մինսկի Խմբի միջնորդությունը, փորձելով չեզոքացնել համանախագահ երկրների՝ Ֆրանսիայի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի միջնորդական ջանքերը, հոժարությամբ համաձայնում է Բրյուսելի միջնորդությանը, քանի որ միջնորդի նկատմամբ ունի ազդեցության որոշակի լծակներ՝ ամեն օր դեպի ԵՄ մատակարարվող էներգակիրների տեսքով: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ անհասկանալի է, թե ինչու է Հայաստանի իշխանությունը երկար ժամանակ նախապատվությունը տալիս Ադրբեջանի հետ բանակցությունների հենց բրյուսելյան հարթակին,**. ընդ որում այս միտումը հատկապես նկատելի է ուկրաինական ճգնաժամից հետո, երբ ՌԴ-ԵՄ հարաբերությունները գտնվում են աննախադեպ լարվածության փուլում: Այս և այլ հացերին ավելի հստակ պատասխան գտնելու համար փորձենք նաև հասկանալ ՌԴ դիրքորոշումը՝ ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցության հարցում:

3.2. Ռուսաստանի դիրքորոշումը ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցության խորացման հարցում

Միայն այն փաստը, որ Եվրոպական միությունը ադրբեջանական գազի ներմուծումը դիտարկում է որպես ռուսական գազի այլընտրանք, վկայում է այն մասին, որ Մոսկվան չի կարող անուշադրության մատնել ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցության խորացումը: Իհարկե, նախքան ուկրաինական ճգնաժամը Ռուսաստանը կարող էր անտեսել ԵՄ էներգետիկ շուկայում ադրբեջանական գազի ի հայտ գալու հանգամանքը՝ հաշվի առնելով, որ **ՀԳՄ-ով մատակարարվող և նախատեսվող տարեկան առավելագույնը 10 մլրդ խ.մ գազը կազմում է ԵՄ սպառման ընդամենը 2,5%-ը, իսկ ՌԴ տարեկան միջին մատակարարումներից փոքր է ավելի քան 15 անգամ:** Սակայն ներկայումս, երբ ԵՄ-ն զգալիորեն կրճատել է ՌԴ-ից ներմուծվող բնական գազի ծավալները, իսկ Եվրոպայում բնական գազի ցանկացած նոր, թեկուզ ոչ այնքան մեծ այլընտրանքային ռեսուրս կարող է էական ազդեցություն ունենալ շուկայի վրա, ՀԳՄ-ը, անշուշտ, հայտնվել է Ռուսաստանի ուշադրության կենտրոնում:



[141]

[141] European natural gas imports, Dataset, BRUEGEL, Georg Zachmann, Giovanni Sgaravatti, Ben McWilliams, 29 November 2022 https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 05.12.2022թ.)

Այսպես, **2022թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում Ռուսաստանից դեպի ԵՄ և Մեծ Բրիտանիա բնական գազի մատակարարումները միայն 2 անգամ են գերազանցել ադրբեջանական մատակարարումների ընդհանուր ծավալը:** Ընդ որում, վերոհիշյալ գծապատկերը ցույց է տալիս, որ ԵՄ-ը և Մեծ Բրիտանիան բնական գազի էական մասը ներմուծում են կա՛մ Նորվեգիայից, կա՛մ հեղուկ բնական գազի տեսքով, այնինչ Ռուսաստանը, Ադրբեջանն ու Ալժիրը միասին ավելի քիչ գազ են մատակարարում, քան, օրինակ՝ միայն Նորվեգիան: Այս պատկերը վկայում է, որ ներկայիս պայմաններում Ադրբեջանը դարձել է ԵՄ գազի շուկայում Գազպրոմի կարևոր մրցակիցներից մեկը՝ հաշվի առնելով մատակարարումների ցածր մակարդակը և բարձր գների պայմաններում ցանկացած լրացուցիչ խորանարդ մետրի վաճառքից ստացվող հսկայական եկամուտները: Օրինակ, ինչպես արդեն նշվեց, **միայն 2022թ. առաջին կիսամյակում Ադրբեջանը ԵՄ-ին վաճառած բնական գազի դիմաց ստացել է շուրջ 5 մլրդ եվրո եկամուտ, ինչը գրեթե կրկնակի ավելի է 2021-ին ՌԴ-Ադրբեջան ամբողջ առևտրաշրջանառությունից**[142]:

Միաժամանակ, գաղտնիք չէ, որ Արևմուտք-ՌԴ հակամարտության համատեքստում Եվրոպայում բնական գազի հետ կապված ճգնաժամը Ռուսաստանի համար առաջին հերթին քաղաքական ենթատեքստ ունի, ուստի **ցանկացած այլընտրանքային աղբյուր, որը լրացնում է ռուսական մատակարարումների կրճատման արդյունքում առաջացած պակասուրդը, ուղղակիորեն վնասում է ՌԴ շահերը:** Սա առավել ևս նկատելի է ԵՄ կոնկրետ երկրների պարագայում: Օրինակ, ուկրաինական ճգնաժամից հետո Բուլղարիան հրաժարվեց ռուսական գազի համար վճարել ռուբլով, որից հետո 2022թ. ապրիլից Գազպրոմը դադարեցրեց այդ երկրին գազի մատակարարումները[143]:

Սոֆիան, որ մինչև վերջերս երկրում սպառվող գրեթե ամբողջ բնական գազը ներմուծում էր Ռուսաստանից, ճգնաժամը որոշակիորեն հաղթահարեց Հունաստան-Բուլղարիա փոխկապակցիչ խողովակաշարի շահագործման արդյունքում, որով Ադրբեջանը երկարաժամկետ համաձայնագրի շրջանակներում Բուլղարիային պետք է մատակարարի տարեկան 1 մլրդ խ.մ գազ, ինչը համարժեք է այդ երկրի տարեկան

---

[142] Азербайджан и Россия увеличили товарооборот в I полугодии на 17,1%, /ТАСС/ БАКУ, 18 июля 2022 https://tass.ru/ekonomika/15248103 (այցելվել է 05.12.2022թ.)

[143] Bulgaria Says It's 'Inevitable' To Resume Talks With Gazprom On Gas Supplies; By RFE/RL's Bulgarian Service, August 22, 2022 https://www.rferl.org/a/bulgaria-gazprom-gas-deliveries/31999452.html (այցելվել է 05.12.2022թ.)

սպառման 1/3-ին: Ընդ որում, հաշվի առնելով այդ խողովակաշարի թողունակությունը՝ 3 մլրդ խ.մ, ինչպես նաև այն մինչև 5 միլիարդի հասցնելու հեռանկարը, հետագայում Ադրբեջանը կարող է առավել մեծ դեր ստանձնել ինչպես Բուլղարիայի, այնպես էլ տարածաշրջանի մի շարք այլ երկրների գազի շուկայում՝ թուլացնելով Ռուսաստանից էական կախվածությունը[144]: Մասնավորապես, նման ակնկալիք ունեն Սերբիան, Մոլդովան և այլք, որոնց կախվածությունը ռուսական գազից հսկայական է[145]:

ԵՄ-ում ադրբեջանական գազի և նավթի հիմնական սպառող Իտալիան նույնպես վերջին շրջանում էականորեն կրճատել է կախվածությունը ռուսական գազից: Այսպես, 2022թ. առաջին կիսամյակում Իտալիան Ադրբեջանից կրկնակի ավելի գազ է ներմուծել, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, մինչդեռ Ռուսաստանից ներմուծումը նախորդ տարվա համեմատ կրճատվել է շուրջ 35%-ով: Եթե 2021թ. առաջին կիսամյակում Ռուսաստանը Իտալիային մոտ 5 անգամ ավելի շատ գազ էր մատակարարել, քան Ադրբեջանը, ապա 2022թ. նույն ժամանակահատվածում տարբերությունը եղել է 1,8 անգամ:

Իտալիայի՝ բնական գազի մատակարարումը ըստ ծագման երկրի առաջին կիսամյակում (2021-2022 թթ)



146

[144] The Greek-Bulgarian interconnector has joined the TAP pipeline, Caucasus Watch, 31 MAR 2022 https://caucasuswatch.de/news/5128.html (այցելվել է 05.12.2022թ.)
[145] Bulgaria and Romania asked Azerbaijan for additional gas; Caucasus Watch, 11 MAR 2022 https://caucasuswatch.de/news/5012.html (այցելվել է 05.12.2022թ.)
[146] Imports and production of natural gas in Italy in the1st half of 2021 and 2022, by country of origin, pipeline, and entry point, STATISTA 2022 https://www.statista.com/statistics/1325804/natural-gas-supply-in-italy-by-origin/ (այցելվել է 05.12.2022թ.)

Իհարկե, բնական գազի ոլորտում զուտ տնտեսական մրցակցության տեսանկյունից Բաքվի և Մոսկվայի հնարավորությունները խիստ անհամաչափ են, քանի որ, չնայած եվրոպական շուկայում ռուսական գազի մասնաբաժնի կրճատմանը, Ռուսաստանը շարունակում է մնալ այս ոլորտում համաշխարհային ամենաազդեցիկ դերակատարներից մեկը, որն ի վիճակի է ներազդել գազի միջազգային գնագոյացման վրա: Սակայն այս մրցակցությունից բխող քաղաքական բաղադրիչը պետք է որ Մոսկվային անհանգստություն պատճառի:

Ընդհանուր առմամբ, էներգետիկ ոլորտում Ադրբեջանի քաղաքականությունը Ռուսաստանի իշխանությունների և փորձագիտական շրջանակների կողմից ընկալվում է երկու հակադիր տեսանկյուններից.

- Մի կողմից, ինչպես նշվեց, ամենևին ՌԴ շահերից չի բխում Եվրոպայում բնական գազի և նավթի այլընտրանքային ռեսուրսների ի հայտ գալը, այն էլ՝ ի հաշիվ հետխորհրդային երկրների, որոնց Ռուսաստանը ավանդաբար դիտարկում է որպես սեփական ազդեցության գոտի: ԵՄ-Թուրքիա-Ադրբեջան-Կենտրոնական Ասիա համագործակցությունը էներգետիկ ոլորտում ակնհայտորեն կարող է ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական հետևանքներ ունենալ, ուստի այդ համագործակցության չափից ավելի խորացումը, եթե ոչ ներկայումս, ապա երկարաժամկետ հեռանկարում արժանանալու է Ռուսաստանի դիմադրությանը:
- Մյուս կողմից՝ ԵՄ աննախադեպ պատժամիջոցները ՌԴ նկատմամբ և **դեպի ԵՄ ռուսական էներգակիրների ուղիղ մատակարարման գրեթե բոլոր խողովակների սառեցումը Մոսկվային ստիպում են անուղղակիորեն եվրոպական շուկա սողոսկելու այլընտրանքային ուղիներ փնտրել, և ադրբեջանական ու թուրքական ենթակառուցվածքները կարող են այս տեսանկյունից օգտակար լինել:** Պատահական չէ, որ հենց Մոսկվան է հանդես եկել Թուրքիան «էներգետիկ հաբ» դարձնելու առաջարկով: Ինչ վերաբերում է տնտեսական բաղադրիչին, Ռուսաստանը նաև շոշափելի ներգրավվածություն ունի Ադրբեջանի էներգետիկ նախագծերում, հետևաբար նաև այդ ոլորտում Բաքվի քաղաքականության վրա ազդելու որոշակի լծակներ ունի:

Նախորդ գլխում անդրադարձանք այն հանգամանքին, որ ՀԳՄ միջոցով դժվար թե Ռուսաստանը ուղղակիորեն գազ մատակարարի ԵՄ-ին, հաշվի առնելով, որ դա կհակասի ինչպես ԵՄ, այնպես էլ ՌԴ ներկայիս քաղաքականությանը: Փոխարենը Ռուսաստանը կարող է սվոփային և այլ եղանակներով գազ մատակարարել

Ադրբեջանին, ինչը վերջինիս հնարավորություն կտա որոշակիորեն կրճատել գազի ներքին սպառումը սեփական ռեսուրսների հաշվին և լրացուցիչ գազը ուղղել դեպի եվրոպական կամ թուրքական շուկա:

Ընդ որում, այս համագործակցությունը չի սահմանափակվում երկկողմ ձևաչափով: Օրինակ, այս տարվա սեպտեմբերին տեղեկատվություն տարածվեց, որ Իրանը պատրաստվում է սվոփային եղանակով Ադրբեջանի տարածքով օրական մինչև 15 մլն խ.մ գազ ներմուծել, ինչը կազմում է տարեկան մինչև 5 մլրդ խ.մ: Ներմուծված ռուսական գազը Իրանն օգտագործելու է սեփական սպառման համար,

փոխարենը նույն ծավալի գազ Իրանը խողովակաշարերով ուղղելու է դեպի Թուրքիա և Իրաք, ինչպես նաև հեղուկացված եղանակով՝ դեպի միջազգային շուկա[147]:

Ինչ վերաբերում է բուն Ադրբեջանի հետ գազի ոլորտում ուղիղ համագործակցությանը, ապա Ռուսաստանը պարբերաբար որոշակի քանակությամբ գազ է մատակարարում ադրբեջանական շուկա: Ռուսաստանի և Ադրբեջանի միջև առկա է համաձայնություն, ըստ որի 2021-2023թթ. ընթացքում ամռանը՝ ցածր պահանջարկի պայմաններում, Ադրբեջանը գազ է մատակարարում ՌԴ-ին, իսկ ձմռանը նույն քանակությամբ գազ Ռուսաստանը մատակարարում է Ադրբեջանին[148]: Օրինակ, վերջերս Գազպրոմը տեղեկացրեց, որ սույն թվականի նոյեմբերի 15-ից սկսվել են ռուսական գազի մատակարարումները դեպի Ադրբեջան, որոնք մինչև 2023թ. մարտ պետք է կազմեն մինչև 1 մլրդ խ.մ [149]:

Բացի այդ, **ռուսական էներգետիկ հսկաները էական ներգրավվածություն ունեն Ադրբեջանի գազի արդյունահանման կարևորագույն նախագծերում**[150]: Այսպես, ռուսական **«Լուկոյլը» հանդիսանում է Ադրբեջանում գազի արդյունահանման ամենախոշոր՝ «Շահ Դենիզ» նախագծի շուրջ 20%-ի բաժնետերը՝ զիջելով միայն նախագծի օպերատոր Բրիթիշ Փեթրոլիումին, որը վերահսկում է բաժնեմասերի շուրջ 30%-ը:** Հատկանշական է, որ «Լուկոյլի» մասնաբաժինը մինչև վերջերս կազմում էր 10%, սակայն ուկրաինական հակամարտությունից շաբաթներ առաջ վերջինս «Պետրոնաս» ընկերությունից ձեռք բերեց բաժնետոմսերի ևս 9,99%-ը[151]: **«Լուկոյլը» նաև տիրապետում է ՀԳՄ առաջին բաղադրիչի՝ Հարավկովկասյան գազատարի բաժնեմասերի 10%-ին,** Ադրբեջանի գազամատակարարման ընկերության (ներքին գազամատակարարման ցանցը սպասարկող ընկերություն) բաժնեմասերի շուրջ 16%-ին և այլն[152]: Ռուսական

---

[147] Иран намерен импортировать из России 9 млн кубометров газа в сутки, ТАСС, 20 сентября 2022 https://tass.ru/ekonomika/15802787 (այցելվել է 05.12.2022թ.)

[148] РФ и Азербайджан договорились о сезонных поставках газа, Москва. INTERFAX.RU, 27 июля 2021 https://www.interfax.ru/business/781083 (այցելվել է 05.12.2022թ.)

[149] 15 ноября начались поставки российского газа в Азербайджан по новому договору купли-продажи газа, ООО «Газпром экспорт», 18 ноября 2022 https://www.gazprom.ru/press/news/2022/november/article559238/ (այցելվել է 05.12.2022թ.)

[150] Depoliticizing Russian Gas in Europe, by William Courtney and Richard Kauzlarich, June 11, 2021 https://www.rand.org/blog/2021/06/depoliticizing-russian-gas-in-europe.html (այցելվել է 05.12.2022թ.)

[151] Статус нефтегазовых контрактов в Азербайджане по итогам 2021 года, 4 января 2022 https://www.trend.az/business/energy/3536299.html (այցելվել է 05.12.2022թ.)

[152] The EU-Azerbaijan gas deal is a repeat mistake, POLITICO, BY GLIGOR RADEČIĆ, AUGUST 17, 2022, https://www.politico.eu/article/the-eu-azerbaijan-gas-deal-is-a-repeat-mistake/ (այցելվել է 05.12.2022թ.)

ընկերությունները որոշակի ներգրավվածություն ունեն նաև նավթի արդյունահանման ոլորտում:



[153]

Վերոհիշյալ իրողությունները վկայում են, որ **Ռուսաստանը Բաքվի էներգետիկ նախաձեռնություններին ցուցաբերում է երկակի մոտեցում. մի կողմից՝ մասնակցային մոտեցմամբ փորձում է դրանք իր համար որոշակիորեն վերահսկելի դարձնել, մյուս կողմից՝ զսպել այդ նախագծերի վերաճումը ռազմավարական այնպիսի մասշտաբների, որոնք կարող են մարտահրավեր նետել ՌԴ աշխարհաքաղաքական շահերին:** Ներկայումս Եվրոպայում ստեղծված էներգետիկ ճգնաժամի պայմաններում Ռուսաստանը փորձում է հավասարկշռել իր այս մոտեցումները՝ թուրք-ադրբեջանական ենթակառուցվածքներն օգտագործելով դեպի էներգակիրների արտաքին շուկա լրացուցիչ ծավալ մատակարարելու նպատակով, որից ստացվող եկամուտները փաստացի պատերազմական իրավիճակում գտնվող երկրի համար շատ կարևոր են:

Հատկանշական է, որ **ԵՄ որոշ երկրներ ընդհանուր առմամբ դեմ չեն, որ ռուսական գազը ադրբեջանական ենթակառուցվածքներով մուտք գործի դեպի**

[153] Shah Deniz project (SD), The Southern Gas Corridor project official site, https://www.sgc.az/en/project/sd (այցելվել է 05.12.2022թ.)

եվրոպական շուկա[154]: Որոշ փորձագետներ ենթադրում են, որ առաջիկայում Ադրբեջանը ավելի մեծ ծավալներով գազ կարող է ներմուծել Ռուսաստանից՝ սեփական սպառման նպատակով՝ փոխարենը ավելի շատ ադրբեջանական գազ ուղղելով դեպի եվրոպական շուկա[155]: Սակայն պետք է նշել, որ եթե Գազպրոմի շահերից է բխում որոշ քանակությամբ գազի մատակարարումը դեպի ադրբեջանական շուկա և արդյունքում որոշակի լրացուցիչ եկամուտների հայթայթումը, ապա դա չի նշանակում, որ վերջինս շահագրգռված է Ադրբեջանին գազ վաճառել եվրոպականից էականորեն ցածր գներով, որի արդյունքում եվրոպական շուկայում իր մրցակիցներից մեկին հնարավորություն կտա առավել մեծ ծավալի գազ մատակարարել դեպի ԵՄ[156]: Միաժամանակ, սահմանափակ են նաև ՌԴ-ից Ադրբեջանին գազ մատակարարելու հնարավորությունները ենթակառուցվածքների տեսանկյունից. ըստ փորձագիտական գնահատականների՝ երկու երկրները կապող Մոզդոկ-Հաջիղաբուլ գազատարի առավելագույն տարեկան հզորությունը կազմում է 4 մլրդ խ.մ[157]:

Կարելի է եզրակացնել, որ **ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցության խորացման հարցում Ռուսաստանի ներկայիս դիրքորոշումը կայանում է նրանում, որ կարճաժամկետ հեռանկարում պետք է օգտվել եվրոպական շուկայից լրացուցիչ եկամուտներ ստանալու՝ ադրբեջանական սողանցքից, իսկ երկարաժամկետ հեռանկարում կանխել թուրք-ադրբեջանական նախագծերի աշխարհաքաղաքական անցանկալի հետևանքները կամ սեփական մասնակցությամբ դրանք վերահսկելի դարձնել:** Ավելին, Մոսկվան ձգտում է ոչ թե մրցակիցներ փնտրել գազի համաշխարհային շուկայում, այլ իր շուրջը համախմբել ոլորտի հիմնական տարածաշրջանային դերակատարներին և միասին մրցակցել Արևմուտքի «մոնոպոլիստների» հետ: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել Մոսկվայի կողմից վերջերս էներգետիկայի ոլորտում Իրանի հետ 40 մլրդ դոլար

---

[154] Германия хочет закупать российский газ только через Азербайджан, 21 ноября 2022 https://haqqin.az/news/266611 (այցելվել է 05.12.2022թ.)

[155] What the EU's new gas deal with Azerbaijan could mean for Europe's energy security, Gubad Ibadoghlu, August 3rd, 2022, https://blogs.lse.ac.uk/europpblog/2022/08/03/what-the-eus-new-gas-deal-with-azerbaijan-could-mean-for-europes-energy-security/ (այցելվել է 05.12.2022թ.)

[156] Let's not exaggerate: Southern Gas Corridor prospects to 2030, the Oxford Institute for Energy Studies, Simon Pirani, July 2018, https://a9w7k6q9.stackpathcdn.com/wpcms/wp-content/uploads/2018/07/Lets-not-exaggerate-Southern-Gas-Corridor-prospects-to-2030-NG-135.pdf (այցելվել է 05.12.2022թ.)

[157] Azerbaijani experts on impact of anti-Russian sanctions on Azerbaijan, Caucasus Watch, 11 MAR 2022 https://caucasuswatch.de/news/5011.html (այցելվել է 05.12.2022թ.)

արժողության համաձայնագրերի ստորագրումը[158], Ղազախստանի և Ուզբեկստանի հետ գազի ոլորտում դաշինքի ձևավորման նախաձեռնությունը[159], Թուրքիայում էներգետիկ հանգույց ձևավորելու առաջարկը, Ադրբեջանի հետ բարձր մակարդակում էներգետիկայի ոլորտի պարբերաբար քննարկումները[160] և այլն:

Ամերիկացի որոշ փորձագետներ գտնում են, որ **Ռուսաստանը ուկրաինական ճգնաժամի համատեքստում ձգտում է բնական գազի միջազգային շուկայում ՕՊԵԿ-ին համարժեք կազմակերպություն ձևավորել, որի առանցքում պետք է լինի Ռուսաստան-Իրան-Կատար համագործակցության նոր ձևաչափի հիմնումը:** Ըստ այդմ, ենթադրվում է, որ Ռուսաստանը փորձելու է բնական գազի արդյունահանման ոլորտում առանցքային դերակատարների հետ ստեղծել մի համակարգ, որի շրջանակներում գազը վաճառվելու է ոչ թե դոլարով, այլ տարբեր արժույթներով, այդ թվում՝ ոսկով, յուանով, ազգային արժույթներով և այլն[161]: Վերլուծության առաջին հատվածում արդեն նշվեց, որ միայն Ռուսաստանը, Իրանը, Կատարն ու Թուրքմենստանը միասին տիրապետում են բնական գազի համաշխարհային հաստատված պաշարների շուրջ 60%-ին և արդյունահանում մոտ 30%-ը, ուստի այս երկրների համագործակցությունը, իրոք, շատ մեծ ներուժ ունի և կարող է որոշիչ դեր խաղալ գազի համաշխարհային շուկայում:

Էներգետիկ ոլորտում ՌԴ-Ադրբեջան հետագա համագործակցությունը կամ մրցակցությունը կախված կլինի նաև նրանից, թե արդյոք Ադրբեջանը համագործակցային մոտեցում կցուցաբերի ոլորտում ռուսական կողմի հնարավոր նախաձեռնություններում, թե հանդես կգա ավելի շատ դրանք խաթարելու՝ արևմտյան շահերի սպասարկման դիրքերից: Առայժմ ադրբեջանական մամուլում և փորձագիտական շրջանակներում գերակշռում է

---

[158] Gazprom, Iran Sign Tentative Energy Deal Worth $40 Billion, Radio Free Europe, July 19, 2022 https://www.rferl.org/a/iran-russia-energy-deal/31950165.html (այցելվել է 05.12.2022թ.)

[159] Россия, Казахстан и Узбекистан обсуждают возможность создания газового союза, /ТАСС/ МОСКВА, 29 ноября 2022 https://tass.ru/ekonomika/16449755?utm_source=yxnews&utm_medium=desktop (այցելվել է 05.12.2022թ.)

[160] Телефонный разговор с Президентом Азербайджана Ильхамом Алиевым, Официальный сайт Президента России, 17 ноября 2022 года, http://kremlin.ru/events/president/news/69852 (այցելվել է 05.12.2022թ.), Телефонный разговор с Президентом Азербайджана Ильхамом Алиевым, Официальный сайт Президента России, 22 ноября 2022 года http://kremlin.ru/events/president/news/69916 (այցելվել է 05.12.2022թ.)

[161] Russia to Lead New OPEC?, BY JAMES RICKARDS, POSTED AUGUST 29, 2022 https://dailyreckoning.com/russia-to-lead-new-opec/ (այցելվել է 05.12.2022թ.)

երկրորդ մոտեցումը[162], միաժամանակ գործնականում էլ երկու երկրների համագործակցությունը էներգետիկ ոլորտում զերծ չէ բացասական զարգացումներից: Օրինակ, վերջերս հայտնի դարձավ, որ դեկտեմբերի 5-ից ուժի մեջ մտնող ԵՄ նոր պատժամիջոցների պատճառով «Լուկոյլը» դադարեցրել է նավթի մատակարարումը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով[163]: Նմանօրինակ զարգացումները վկայում են, որ էներգետիկ ոլորտում, մասնավորապես՝ բնական գազի արդյունահանության ուղղությամբ Ադրբեջանի հետ համագործակցության հարցում Ռուսաստանի երկակի մոտեցումը պահպանվելու է և մեծ հաշվով կախված է լինելու Բաքվի վարքագծից և վերջինիս աշխարհաքաղաքական հավակնություններից, ինչպես նաև դրանք զսպելու՝ ՌԴ ներուժից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսօր միջազգային հարաբերություններում, այդ թվում՝ մեր տարածաշրջանում տեղի ունեցող տարբեր գործընթացների մասին ավելի համապարփակ և ամբողջական պատկերացում կազմելու համար էներգետիկ ոլորտում տեղի ունեցող զարգացումների ուսումնասիրությունը դարձել է հրամայական: Վերլուծելով ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում Եվրոպայում առաջացած էներգետիկ ճգնաժամը և ուսումնասիրելով այդ ճգնաժամում ադրբեջանական գազի գործոնը՝ եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ռուս-ուկրաինական ճգնաժամի հետևանքով Եվրոպայում ի հայտ եկած էներգետիկ ճգնաժամը առավել է կարևորել էներգակիրների, տվյալ պարագայում՝ բնական գազի գործոնը միջազգային հարաբերություններում: Այսօր աշխարհում և մասնավորապես՝ Եվրոպայում թիվ մեկ օրակարգը կապված է էներգետիկ անվտանգության խնդիրների հետ, հետևաբար էներգետիկ ոլորտում համագործակցության ներուժ ունեցող առկա և հնարավոր գործընկերների հետ հարաբերությունները Եվրոպական միության և ԵՄ անդամ տարբեր երկրների արտաքին քաղաքականության օրակարգի ամենակարևոր ուղղություններից մեկն է:
- Համաշխարհային քաղաքականության երկու առանցքային դերակատարների՝ ՌԴ-ի և ԱՄՆ-ի միջև աշխարհաքաղաքական մրցակցությունը վերջին

[162] Новая затея России: ждет ли Баку предложение, от которого невозможно отказаться?, Ильгар Гусейнов, 28 сентября 2022 https://haqqin.az/news/261253 (այցելվել է 05.12.2022թ.)
[163] «Лукойл» из-за санкций прекратил транспортировку нефти по трубопроводу Баку – Тбилиси – Джейхан, 30 ноября 2022 https://haqqin.az/news/267490 (այցելվել է 05.12.2022թ.)

տարիներին նկատելի է դարձել նաև էներգետիկայի, այդ թվում՝ բնական գազի արտահանման ոլորտում: Այս առումով գազի եվրոպական շուկան այդ մրցակցության հիմնական հարթակներից մեկն է, որտեղ Ռուսաստանին ռազմավարական պարտության մատնելը ԱՄՆ-ի համար ունի ոչ միայն էներգետիկ և տնտեսական, այլև աշխարհաքաղաքական կարևորություն:

- Ադրբեջանը, ամրապնդելով գազի եվրոպական շուկայում իր դիրքերը, հաշվի առնելով ԵՄ-ում «ոչ ռուսական գազի» նկատմամբ մեծ պահանջարկը, միաժամանակ մեծացրել է իր քաղաքական ազդեցությունը ԵՄ որոշումների կայացման գործընթացի նկատմամբ: Արդյունքում Ադրբեջանում մարդու իրավունքների, ազատությունների, ժողովրդավարության, Բաքվի ագրեսիվ արտաքին քաղաքականության հետ կապված հարցերը և մի շարք այլ հիմնարար խնդիրներ դուրս են մղվել ինչպես ԵՄ-Ադրբեջան, այնպես էլ առանձին եվրոպական երկրների և Ադրբեջանի միջև հարաբերությունների օրակարգից: Սա հատկապես նկատելի է ԵՄ այն երկրներում, որտեղ Ադրբեջանական էներգակիրները առավել մեծ կշիռ ունեն: **Ստեղծված իրավիճակում հայ-ադրբեջանական բանակցային գործընթացում ԵՄ միջնորդական ջանքերը չեն կարող ամբողջությամբ լինել օբյեկտիվ՝ անտեսելով Ադրբեջանի հետ էներգետիկ ոլորտում համագործակցության առանձնահատկությունները:**
- Հակառակ նախկինում արված կանխատեսումների՝ ներկայումս Եվրոպայում ադրբեջանական գազի նկատմամբ մեծ պահանջարկը ավելի իրատեսական է դարձնում Բաքվի և Բրյուսելի միջև էներգետիկ ոլորտում համագործակցության առավել խորացման, ՀԳՄ-ի ընդլայնման հեռանկարը, այդ թվում՝ տնտեսական հիմնավորվածության տեսանկյունից: **Միայն 2022թ. առաջին կիսամյակում Ադրբեջանը բնական գազի վաճառքի համար ԵՄ-ից ստացել է շուրջ 5 մլրդ եվրո եկամուտ, մինչդեռ ոչ պակաս հսկայական եկամուտներ Բաքուն ստանում է նաև նավթի վաճառքից: Սա նշանակում է, որ ստացվող հսկայական գումարները, այդ թվում՝ ԵՄ-ից, Ադրբեջանն ուղղելու է սեփական ռազմական ծախսերն ավելացնելու, տարածաշրջանում ավելի ու ավելի ագրեսիվ և ռազմատենչ քաղաքականություն վարելու նպատակին:**
- 44-օրյա պատերազմից հետո նվազել են ՀԳՄ ընդլայնման հիմնական անվտանգային խոչընդոտները՝ հաշվի առնելով Արցախի հիմնախնդրի ադրբեջանանպաստ լուծումը և բուն Ադրբեջանի տարածքում ռազմական գործողությունների ծավալման նվազ հավանականությունը: Փոխարենը, օգտագործելով էներգետիկ և տարանցման ուղիների բազմազանեցման հարցում ԵՄ և տարածաշրջանի մյուս երկրների շահագրգռվածությունը, **Ադրբեջանն ու Թուրքիան փորձում են այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» ներկայացնել որպես արևելք-արևմուտք էներգետիկ ենթակառուցվածքների**

ընդլայնման ևս մեկ հնարավոր ուղղություն՝ դրա տակ քողարկելով Հայաստանի նկատմամբ իրենց տարածքային հավակնություններն ու ագրեսիվ քաղաքականությունը:

- 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակը նպաստավոր պայմաններ է ստեղծել պանթուրանական գաղափարները կյանքի կոչելու՝ թուրք-ադրբեջանական վաղեմի ծրագրերի համար, որտեղ էներգետիկ բաղադրիչը կարող է առանցքային դերակատարություն ունենալ: Այս իմաստով, աշխարհաքաղաքական գործընթացները կարող են նպաստավոր պայմաններ ստեղծել Թուրքիայի և Ադրբեջանի տարածքով դեպի Եվրոպա կասպյան էներգակիրների՝ առաջին հերթին թուրքմենական գազի տարանցման համար:
- **Մոսկվայի և Բրյուսելի միջև էներգակիրների ոլորտում ուղիղ համագործակցության էական խզման համատեքստում Թուրքիան դարձել է էներգետիկ տարանցման կարևոր հանգույց՝ դրանից բխող աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ազդեցությամբ: Թուրքիայի այս նոր կարգավիճակը ավելի ու ավելի է ստիպելու, որպեսզի ինչպես Մոսկվան, այնպես էլ Բրյուսելը կարևոր արտաքին քաղաքական որոշումների կայացման ժամանակ հաշվի նստեն Անկարայի շահերի հետ, այդ թվում՝ Հարավային Կովկասին վերաբերող հարցերում:**
- ԵՄ-Ադրբեջան էներգետիկ համագործակցության հարցում Ռուսաստանի ներկայիս դիրքորոշումը կայանում է նրանում, որ կարճաժամկետ հեռանկարում պետք է օգտվել եվրոպական շուկայից լրացուցիչ եկամուտներ ստանալու՝ ադրբեջանական սողանցքից, իսկ երկարաժամկետ հեռանկարում կանխել թուրք-ադրբեջանական նախագծերի աշխարհաքաղաքական անցանկալի հետևանքները կամ սեփական մասնակցությամբ դրանք վերահսկելի դարձնել: Էներգետիկ ոլորտում ՌԴ-Ադրբեջան հետագա համագործակցությունը կամ մրցակցությունը կախված կլինի նաև նրանից, թե արդյո՞ք Ադրբեջանը համագործակցային մոտեցում կցուցաբերի ոլորտում ռուսական կողմի հնարավոր նախաձեռնություններում, թե՞ հանդես կգա ավելի շատ դրանք խաթարելու՝ արևմտյան շահերի սպասարկման դիրքերից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*